№ 9—10 (197) XVIII ՏԱՐԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ—ՀՈԿՏԵՄԲԵՐ 1908

„Droschak"
ORGANE
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak"
GENÈVE (Suisse)

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ" ՕՐԳԱՆ

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Առանց շեղելու մեր „Ծրագրի" հիմնական սկզբունքներէն, որոնց համաձայն՝ հասարակութեանց մէջ տիրող ներկայ չարիքները վերջնականապէս կ'ոչնչանան ընկերվարական կարգերու հաստատումով, երբ անտեսական կեանքի հիմք կը կազմէ աշխատանքը և արդիւնաբերութեան բարիքները կը յատկացուին միմիայն անոր ստեղծագործման մէջ մասնակցողներուն.

Հիմք ընդունելով՝ որ մարդկային անհատի, ինչպէս ազգային ու կրօնական միութիւններու ազատութիւնն ու հաւասարութիւնը անկապտելի իրաւունք է և պէտք է ապահովի, առանց այդ ազգութիւններու և համայնքներու թիւին նայելու.

Համոզուած՝ որ ամեն մէկ պետութեան և մանաւանդ Օսմանեան կայսրութեան նման բազմալեզու երկրի մը քաղաքական լաւագոյն կազմը ֆէտէրատիվ-ապակեդրոնական ձևն է, երբ աշխարհագրական-տնտեսական ազգագրական ուրոյն դիմագիծ ունեցող բոլոր շրջանները պիտի վայելեն ներքին վարչական-օրէնսդրական ինքնավարութիւն, որը առաւել ևս ներդաշնակօրէն կ'ուժեղացնէ ու կ'ամրապնդէ պետական ամբողջ կազմը.

Գիտակցելով նոյնպէս, որ այդ նպատակներուն կարելի է հասնիլ աստիճանաբար, արմատական ռամկավար բարեփոխութիւններու միջոցով, և համերաշխ գործակցութեամբ հարևան ազգերու և միւս կուսակցութիւններու հետ, այլև ցանկալով ապահովել նոր ռէժիմը՝ անբաղձալի ցնցումներէ՝

Հ. Յ. Դաշնակցութիւնը ներկայիս և Օսմանեան պարլամենտի առաջին նստաշրջաններուն համար կ'առաջարկէ ստորև առաջադրուած՝ անհրաժեշտ և ներկայ իրականութենէն թելադրուած պահանջները։

Կը յուսանք, որ այս „Պահանջները" կարող պիտի ըլլան ծառայել իբրև համերաշխ գործակցութեան հիմք բոլոր քաղաքական կուսակցութիւններու համար—թիւրք, յոյն, հայ, մահեդօն, արաբ, ալբանացի, քիւրդ ևն,—որոնք կը ձգտին, ինչպէս մենք, ամրապնդել Սահմանադրական նոր ռէժիմը և առաջնորդել ընդհանուր հայրենիքը դէպի Ազատութիւն, ազգերու Հաւասարութիւն և հանուր Եղբայրութիւն։

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԷՏԵՐ

1) Օսմանեան կայսրութիւնը, քանի կ'ունենայ Սահմանադրական ռամկավար ռէժիմ, պիտի ճանաչի անկախ ու ամբողջական։

2) Թիւրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը և կը վարէ իր տեղական գործերը, հիմնուած ապակեդրոնացման սիստէմի վրայ, որմէ հաւասար կերպով պիտի օգտուին երկրի մէջ ապրող բոլոր ազգերը։

3) Օսմանեան կեդրոնական կառավարութիւնը, հիմնուած ժողովրդական ներկայացուցչութեան սիստէմի վրայ, կը վարէ պետութեան ընդհանուր գործերը,—արտաքին քաղաքականութիւն, զօրք, դրամ, մաքս, երկաթուղի, պոստ-հեռագիր ևն, տեղական միւս ֆոնկսիոնները թողնելով շրջաններուն։

4) Պարլամենտական, դատաստանական և տեղային վարչական բոլոր մարմինները պիտի ընտրուին ընդհանուր, հաւասար, գաղտնի և համեմատական ձայնատուութեան սկզբունքով։ Այս սկզբունքը կը գործադրուի բոլոր ազգերու և կրօններու համար հաւասարապէս։

ՎԻԼԱՅԷԹՆԵՐՈՒ ԻՐԱՒՈՒՆՔԸ

5) Վիլայէթները կը վայելեն՝ տեղական գործերը վարելու մէջ լայն ինքնավարութիւն։ Նոյնը համայնքները՝ համայնական գործերու մէջ։

Վիլայէթներուն, կազաներուն, համայնքներուն և քաղաքային վարչութիւններուն կը վերապահին՝ ա) ճանապարհները, բ) ժողովրդական առողջապահութիւնը, գ) Կրթական գործը, դ) Հրաբաշխութիւնը, ե) Տեղական ոստիկանութիւնը, զ) Տելեֆոնական, գիւղատնտեսական և այլ գիտելիքների տարածումը ևն։

Վիլայէթներու եկամուտին մէկ որոշ մասը (20—25%) կը ծախսուի տեղական պէտքերու համար, իրաւասու մարմիններու միջոցով։

6) Բացի վալիներէ, միւթասարրիֆներէ, իսթինաֆի միւտտայիւումումիներէ և ըէյիսներէ, տեղական մնացած բոլոր պաշտօնեաները կ'ընտրուին համապատասխան խորհուրդներու կողմէն։

7) Վիլայէթներու սահմանները որոշելու ատեն, հակառակ հին ռէժիմի գործ դրած սկզբունքին, պէտք է նկատի առնել ազգաբնակութեան տեղագրական ու կուլտուրական առանձնայատկութիւնները, ըստ կարելւոյն միաձոյլ համախմբումներ կազմելու համար։

ԻՐԱՎՈՒՆԿԵՆՆԵՐՈՒ ՀԱՎԱՍԱՐՈՒԹԻՒՆ

8) Կատարեալ հաւասարութիւն բոլոր ազգերու և կրօնական համայնքներու։ Ոչնչացումն դասակարգային կերպարանք ունեցող բոլոր առանձնաշնորհումներու։

Այլևայլ ազգութիւններու ներկայացուցիչներու մասնակցութիւնը պետական պաշտօնների մէջ, կեդրոնական թէ տեղական, պիտի գործադրի համեմատական չափով։ Նոյնը կառավարութեան հովանոյն տակ գտնուող հիմնարկութիւններուն մէջ։

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

9) Ա) Սահմանադրութեան վերաքննութիւնը ապակեդրոնացման մտքով։

Բ) Մինիստրութեան պատասխանատուութիւն օրէնսդիր ժողովի առջև։

Գ) Գահակալը կ'երդուի, զօրքի հետ միասին, հաւատարմութիւն և անխախտ պահպանումն Սահմանադրութեան։

Դ) Վերացումն վերին ժողովի (Այանի)։

Ծանօթ. — ա) Մինչեւ այդ՝ Այանի անդամները պիտի ընտրուին շրջանային խորհուրդներու կողմէ։
բ) Առայժմ նստաշրջանի համար՝ Այանի անդամներու ցանկի պատրաստութիւնը կը յանձնուի պարլամենտին։

Ե) Փոփոխումն այժմեան ընտրողական սիստէմի՝ մտցնելով ընդհանուր ձայնատուութիւն։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

10) Անխախտ պահպանումն խօսքի, մամուլի, խղճի, ժողովներու, գործադուլներու ազատութեան։—Անձեռնմխելիութիւն անձի, բնակարանի, նամակագրութեան։ Ազատութիւն տեղափոխութեան։ Վերացումն ներքին անցագրերու։

ԴՊՐՈՑՆԵՐ ԵՒ ԼԵԶՈՒ

11) Ընդհանուր, պարտադիր և ձրի սկզբնական ուսում։

Կրթական-կուլտուրական գործի կատարեալ ազատութիւն։

Բոլոր տեսակի դպրոցներու իրաւասութեան հաւասարութիւն։

Դասատուութիւն մայրենի լեզուով ազգային դպրոցներու մէջ։

Պետական լեզուի ուսուցումն չորրորդ տարեանէ։

Թիւրքական դպրոցներու մէջ տեղական լեզուներու դասատուութիւնը պարտաւորական է, նոյն տարեանէ։

12) Կուլտուրային-դպրոցական նպատակներու յատկացած բիւտճէն բաժանել առանձին ազգութիւններու միջև, համաձայն ազգաբնակութեան թիւի։ Գործադրութիւնը պիտի թողուի յատկապէս այդ նպատակի համար ընտրուած մարմիններուն։

13) Պետական լեզուն պարտաւորական է. բոլոր պաշտօնեաներու համար պարտաւորական է, բացի պետական լեզուէ, իմանալ նաև տեղական ազգաբնակութեան լեզուն։

Ծանօթ.—Պետական լեզուի նեռ միասին տեղական լեզուի գործածութիւնը դատարաններու, վարչական հիմնարկութիւններու մէջ։ Պաշտօնական յայտարարութիւններու եւ ազդերու համար եւս տեղական լեզուները պարտաւորեցուցիչ են։

ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

14) Դատարաններու հիմնական վերակազմութիւն։ Ձրի դատավարութիւն։

ԶԻՆՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ

15) Հաւասարութիւն զինուորագրութեան՝ պետութեան բոլոր ազգութիւններու համար, առանց կրօնի խտրութեան։ Զինուորական ծառայութեան տևողութիւնը, ներկայ պայմաններու մէջ, իջեցնել երկու տարուան։

Ծանօթ.—Տեղական զօրախմբերը պիտի ծառայեն, խաղաղ ժամանակ, իրենց մերձաւոր վայրերուն մէջ։
Աւելացումն զինուորներու ամսաթոշակի։
Անմիջական վերացումն Համիդիյէ գնդերու։

ՊԱՇՏՕՆԵԱՆՆԵՐ

16) Պետական պաշտօնեաների թիւի նուազեցումն։ Պակասեցումն բարձր պաշտօնեաներու ամսաթոշակներու և օրէնսդրական սահմանափակումն *maximum*-ի։ Մանր պաշտօնեաներու ամսաթոշակի յաւելումն։

Ծանօթ.—Բոլոր պաշտօնեաներու պատասխանատուութիւն ընդհանուր դատարանի առջև։

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑ

17) Ապահովել, պետութեան հաշուով, հողի որոշ տարածութիւն ամեն մի գիւղացուն։ Պետական և արքունական հողերը դարձնել համայնքներու սեփականութիւն։

18) Հողերէն օգտուելու իրաւունքը կը պատկանի աշխատաւորներուն, աշխատաւորական սկզբունքներով։ Իւրաքանչիւր աշխատաւոր իրաւունք ունի այնչափով հող մշակելու, որ կարողանայ, առանց ուրիշի աշխատանքը շահագործելու, բաւարարութիւն տալ իր և իր ընտանիքի սպառողական պահանջներուն։

19) Համայնքէ ընտրուած մարմիններու կարգադրութեանը կը յանձնուին համայնական ընդհանուր նշանակութիւն ունեցող գետիններն (անտառներ, արօտներ) ու ջրերը (շարժոյժ, ձկնորսութիւն) և ատոնցմէ ստացուող եկամուտները կը գործադրուին համայնքի կուլտուրական ձեռնարկներու համար։

20) Հանքերը, ինչպէս և արտաքոյ կարգի արժէք ունեցող բնական այլ հարստութիւնները կը համարին պետական սեփականութիւն, և անոնց եկամուտներու որոշ մասը կը գործադրուի տեղական համաժողովրդական-կուլտուրական նպատակներու համար։

ՏՈՒՐՔԵՐ

21) Հարկային սիստէմի հիմնական փոփոխութիւն։

Թանձր.—Ներկայ պայմաններու մէջ, անմիջապէս պակսեցնել ապարդ, սանմանափակելով բերքի 1/15-ով, աղնամը 1/3-ով։
Ցեսամնաց տուրքերը չը պիտի գանձին.
Վերացումն նանապարհային, Հինազի, գաղթականային եւ այլ մանր տուրքերու։
Վերացումն դատաստանական փուլերու եւն։
Անմիջական վերացումն օլամի, բեգարի եւ այլ չը վարձատրող աշխատանքներու։

22) Պրօգրեսիվ տուրք եկամուտի և ժառանգութեան։ Հարկէ բոլորովին ազատել որոշ չափէ պակաս եկամուտ ունեցողները։

ԿՐԵԴԻՏ

23) Պետական ամենամատչելի կրեդիտ։

24) Պետական ապահովագրութիւն երաշտի, կարկտի, մորեխի, հեղեղի և այլ պատահարներու դէմ։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄՆ

25) Հաստատումն աշխատանքի մինիստրութեան։ Աշխատանքի օրէնսդրական կարգաւորումն և հովանաւորութիւն։

ա) Աշխատանքի ժամերու որոշումն բանուորներու համար, թէ քաղաքներու և թէ գիւղերու մէջ։ Առողջապահական տեսակէտէ առանձնապէս վտանգաւոր և վնասակար գործերու համար աւելի պակաս։

բ) Վերցնել կանանց և երեխաներու գիշերային աշխատանքը։ Կանայք ազատ պիտի բլլան աշխատանքէ՝ ծննդաբերութենէ վեց շաբաթ յետոյ։ Արգիլել երեխաներու աշխատանքը մինչև 15 տարեկան հասակը, իսկ 15-էն մինչև 18 տարեկան հասակը՝ սահմանափակել օրական 6 ժամով։ Վերցնել պայմանաժամէ դուրս աշխատանքը։ Արգիլել տուգանքի ձևի տակ օրավարձի նուազեցումը։

գ) Կիրակնօրեայ լիակատար հանգստութիւն, ամեն մի կրօնի պատկանողներուն, իրենց կրօնի յատուկ շաբաթական կիւրակէ օրերը։

26) Բանուորներու ապահովագրումն՝ դժբախտ պատահարներու, հիւանդութեան, ծերութեան և անաշխատութեան դէմ, պետութեան և գործատէրերու հաշուով։

1 սեպտեմբեր 1908
Կ. Պոլիս

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ

ԾՐԱԳԻՐ
ՕՍՄ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԷԻՆ

—

Գործադրելի պիտի մնան 1293-ի Գանունը Էսասին և զայն հաստատող 4 ըէճէպ 1326-ի խաթը Հիւմայունի պաշտպանած իրաւունքները, և նոյն օրէնքին հակառակ չեղող մասերը, եթէ Երեսփոխանական Ժողովը տարբեր որոշում մը չի տայ։

1) Գանունը Էսասին մէջ սկզբունք պիտի դրուի թէ ազգին ձայնը պիտի ըլլայ գերակշիռ և հետևաբար անպատճառ պիտի հաստատուի նախարարական պատասխանատուութիւն՝ հանդէպ Երեսփ. Ժողովոյ և հրաժարեալ պիտի համարուին Երեսփ. Ժողովին մէջ մեծամասնութիւն չի շահող նախարարները։

2) Ծերակոյտը պիտի բաղկանայ առ առաւելն երեսփոխանաց թուին մէկ երրորդին չափ անձերէ, պիտի փոխուի Ծերակոյտին կազմութեան համար Գանունը Էսասին 62-րդ յօդուածը և սկզբունք պիտի դրուի, որ ծերակուտականներուն մէկ երրորդը ընտրէ կայսրը, և երկու երրորդը ազգը, և ծերակուտականներուն պաշտօնն ըլլայ առաժամեայ։

3) Պիտի պահանջի, որ Օսմանեան հպատակ և քսան տարեկանը լրացուցած ամեն արու առաջին ասպիճանի ընտրող ըլլայ, կալուած ունենայ թէ ոչ. բնականաբար այս իրաւունքը չի պիտի վայելեն իրենց քաղաքային իրաւունքները կորսնցուցած անձինք։

4) 1293-ի Գանունը Էսասին Ա. յօդուածն յարգելով հանդերձ պիտի պահանջի տրամադրութիւն մը աւելցնել Գանունը Էսասին մէջ, որով ազատ պիտի հռչակուին քաղաքական համախմբումները (ճեմիյաթը Սիասիյէ)։

5) Կուսակալութեանց վարչութեան ներկայ կապը առանց խզելու և վնասելու, ըստ Գանունը Էսասին 108-րդ յօդուածին, պիտի պահանջի օրէնք հաստատել վարչային ինքնօրինութեան համար։

6) Երեսփոխանական ժողովին անկ է կուսակալութեանց քաղաքային արդի բաժանումները փոխել կամ բարեփոխել։ Միայն թէ գիւղաքաղաքներու մօտաւորութիւնը կամ տեղւոյ յարմարութիւնն ի նկատի առնելով, գործերու դիւրութեան համար բարեփոխումներ ի գործ պիտի դրուին շուտով։

7) Տէրութեան պաշտօնական լեզուն Թիւրքերէն պիտի մնայ, և ամեն պաշտօնական թղթակցութիւններ ու խորհրդակցութիւններ Թիւրքերէն պիտի կատարուին։

8) Առ նուազն 10 երեսփոխան երբ օրինագիծ մը ներկայացնեն, պէտք է անպայման նկատի առնուի։

9) Առանց ցեղի և կրօնի խտրութեան, ամեն ոք հաւասար է և ազատ, ու նոյն պարտաւորութիւններն ունի։ Բոլոր Օսմանցիք հաւասար են Օրէնքին առջև և իրաւունքի ու պարտականութեան տեսակէտով ամեն

օսմանցի պաշտօնի պիտի կոչի ըստ կարողութեան և արժանեաց։ Ոչ-իսլամներն ալ զինուորագրութեան օրէնքին հպատակ պիտի ըլլան։

10) Կրօնն ազատ է, և զանազան հասարակութեանց տրուած կրօնական առանձնաշնորհումները կատարելապէս պիտի պահին։

11) Պիտի առաջարկուի, որ Տէրութիւնը պէտք եղածին չափ ցամաքային և ծովային ոյժ ունենայ, եւրոպական տէրութեանց միջև իր քաղաքական ու աշխարհագրական դիրքը պահելու համար։ Զինուորական ծառայութեան պայմանաժամը զեղջել պիտի առաջարկուի, առանց վնասելու բանակին աղէկ մարզուելու սկզբունքին։

12) Գանունը Էսասիին 113-րդ յօդուածին վերջին մասը, որ կը հակասէ անձնական ազատութեան սկզբունքին, պիտի ջնջուի։

13) Պիտի առաջարկուի օրէնքներ հաստատել գործաւորներու և գործատէրերու իրաւունքներն ու պարտականութիւնները ճշդող։

14) Առանց վնասելու հողատէրերու օրինական իրաւունքներուն, պիտի առաջարկուի միջոցներ ձեռք առնել, որ գիւղացիք հողի տէր ըլլան և դիւրութիւններ տրուին, որպէս զի անոնք կարենան աժան տոկոսով դրամ գտնել։

15) Տասանորդի համար առ այժմ պիտի գործադրուի թախմիսի դրութիւնը, իսկ ապա պիտի առաջարկուի քատաստրօի դրութիւնը գործադրել տակաւ առ տակաւ։

16) Ուսուցումն ազատ է, ինչպէս կը տրամադրէ Գանունը Էսասին և ամեն օսմանցի կրնայ դպրոց բանալ ըստ օրինի։

17) Բոլոր դպրոցները տէրութեան հսկողութեան ներքև պիտի գտնուին։

Օսմանեան հպատակներուն միօրինակ կրթութիւն մը տալու համար պէտք է ընդհանուր և ազատ ուսում, ու ամեն ցեղ պիտի ունենայ իր պաշտօնական վարժարանները։ Նախակրթութեան մէջ պարտաւորիչ պիտի ըլլայ թիւրքերէնը։ Պաշտօնական վարժարաններուն մէջ նախակրթութիւնը ձրի է։

Երկրորդական և բարձրագոյն կրթութիւն պիտի տրուի ընդհանուր և պաշտօնական վարժարաններուն միջոցաւ և հիմը պիտի ըլլայ թիւրքերէն։

Ուսուցիչ և ուսուցչուհի հայցնելու համար վարժարաններ պիտի հաստատուին. նոյնպէս առևտրական, երկրագործական և ճարտարական վարժարաններ պիտի բացուին։

Ասոնցմէ դուրս են զուտ հոգևորական վարժարանները։

18) Երկրին տնտեսական յառաջադիմութեան համար, ինչպէս նաև հողագործութեան բարգաւաճման համար ամեն միջոց ձեռք պիտի առնուի։

19) Պիտի առաջարկուի փոխել երեսփոխանական ընտրութեան կանոնագիրը, ըստ ներկայ ծրագրին, և այնպիսի կերպով մը, որ ապագային կառավարութիւնը չը կարենայ միջամտութիւն ի գործ դնել ընտրութեանց կատարեալ ազատութիւնը խաթարող կերպով մը։

20) Պիտի առաջարկուի, որ պահանջուած յատկութիւններն ունեցող ամեն օսմանցի՝ Օսմանեան երկիրներուն մէջ ուրէք տեղ երեսփոխանական ընտրելի կարենայ ներկայացնել ինքզինք, և կարենայ ուրէք տեղի երեսփոխան ընտրուիլ։

21) Ներկայ ծրագրին յօդուածները կրնան փոփոխուիլ ըստ ժամանակին պահանջմանց, ընդհանուր ժողովներու կողմէ տրուած որոշումներու համեմատ. այլ և այլ յօդուածներ պիտի կրնան ջնջուիլ կամ ուրիշ յօդուածներ պիտի կրնան աւելցուիլ։

ՏԵՂԱՏԻՈՒԹԻՒՆ

Հասարակական տրամադրութեան ալիքն իջաւ։ Լաւատեսութեան ազատ թռիչքը տեղի է տալիս հետզհետէ սկեպտութեան ու դողացնող անորոշութեան։ „Խաղաղ“, „օրինական“ հռչակուած Յեղափոխութիւնը վերապահո՞ւմ է արդեօք անցանկալի անակնկալներ... Այդ է, որ կարծես գալիս է հաստատելու դէպքերի զարգացումը Տաճկաստանում։ Քաղաքական յեղաշրջումների մեծ պրոցէսը ամենուրեք րիթմային է, եկէջող ու մրրկոտ և յանցաւոր միամտութիւն էր ենթադրել, թէ թիւրքական յեղաշրջումը պիտի կազմէր բացառութիւն այդ օրէնքից...

Դեռ ստուար են անցեալի հլու երկրպագուների շարքերը, որոնց համար կատարուած փաստը մարմնացումն է „անօրինականութեան“ և օսմանեան դրօշակի ու Հայրենիքի „սրբապղծման“։ Դեռ լէգէօն է թիւը նրանց՝ որոնք կուզէին արեան գետերի մէջ խեղդամահ անել այդ նորածին, երկչոտ ու վարանոտ ազատութիւնը, որ չը նայած իր երկչոտութեան ու վարանումներին՝ այնքա՜ն դարձեալ սարսափելի է թուում հին քուրմերի խնկարկուներին...

Բռնակալութեան հիդրան դեռ ջախջախուած չէ. նրա գլուխը դեռ ողջ է և, թէպէտ զինաթափ, ատամնազուրկ՝ շարունակում է հեռազդեցութեամբ, télépathie-ով, իր օձային թովքը տարածել արիւնարբու և արքայապաշտ վոհմակների վրայ, որոնք ակնդէտ սպասում են, պիտի սպասեն միշտ պատեհ առիթի՝ վերստին ցոյց տալու իրենց ժանիքները..

Զարմանալի ոչինչ չը կայ այդտեղ. բռնակալութեան թէ գլուխը և թէ ոտքերը հնազանդում միայն իրենց բնութեան, իրենց շարժման ներքին օրէնքներին... Զարմանալի կը լինէր, եթէ այլ կերպ լինէր։

Զարմանքի ու զայրոյթի նիւթ կարող են լինել միայն Ազատութեան, Յեղափոխութեան ղեկավարները, որոնք անուղղակի քաջալերում են յետադիմական այդ ծրագիրները, որոնց հաճելի է գուրգուրանքով շրջապատել հիդրայի գլուխը... Այո՛, զարմանքի ու համաշխարհային վրդովմունքի նիւթ կարող է լինել միայն այն՝ որ երէկուայ սուլթանատեաց, անհաշտ, ոխերիմ պարագլուխները այն աստիճան ոտնահարում են յեղափոխականի արժանապատուութիւնը, այն աստիճան հեռու են սահում հեղգ ու անարգ պոլիտիկանութեան կորստա-

բեր ճանապարհի վրայ, որ գնում են պագնելու իրենց խոշտանգող զազիր ձեռքը, գնում են ողջագուրելու այն բորենու հետ, որ երեսուն տարուց ի վեր անյագ լակել է մահմեդական ու քրիստոնեայ աղատասէրների արիւնը... Դա արդէն մի անօրինակ իրողութիւն է, որին կարող են ծափահարել Gaulois-ներն ու Figaro-ները, բայց որը կը մնայ իբրև բացառութիւն յեղափոխութիւնների պատմութեան մէջ և իբրև ամօթանք թիւրք մարտնչող տարրերի համար...

Բարոյական պստուլատներ կան, որ մի յեղափոխական կուսակցութիւն չի կարող խախտել, առանց ինքնասպան լինելու, առանց մատնելու գալոց սերունդների ահեղ դատավճռին: Սակայն խնդիրը այստեղ լոկ բարոյական „հրամայականների“ խախտման մէջ չէ: „Երիտասարդ Թիւրքիայի“, կամ աւելի ճիշտ՝ նրա յաղթական ու իշխող հատուածի զուտ արևելեան մակիավելիզմը, նրա տակտիկի անսահման ու յոժարակամ ճկունութիւնը կարևոր են ոչ միայն իբրև լոկ սկզբունքի մի ապշեցուցիչ զանցառութիւն, այլ և իբրև մի գործնական ծանր վրիպում, որ շարունակ յուսադրում է միայն ու սիրտ է տալիս ըէակցիայի պարագլուխներին:

Կիսամիջոցների ու վարանումների քաղաքականութիւնը երբէք չի օգնել յեղափոխական տագնապների ընթացքում — չի օգնի և այժմ, Տաճկաստանի մէջ: Վճռականութիւնը նման պարագաներում՝ մեծագոյնն է առաքինութիւններից: Երբ նա չը կայ, երբ շիտակ ու վճռական ընթացքի տեղ իշխում է երկչոտ օպպորտունիզմը իր յաւիտենական խարխափումներով ու քաշքշուկներով — հակառակորդը դիւրաւ գալիս է իրեն համար նպաստաւոր եզրակացութեան և թև է առնում: Դրա արդիւնքն է մայրաքաղաքի վերջին արիւնահեղ ընդհարումը երկու հակառակ բանակների միջև... բայց այդ արիւնոտ միջադէպը ոչինչ է համեմատած այն անվերջ ու աղեխարշ ողբերգութեան հետ, որ կատարւում է հայկական վիլայէթներում, շնորհիւ նոյն վարանոտ, անվճռական տակտիկի: Դերակատարները սովորական, ծանօթ դէմքերն են — վանդէական ախորժակներով տարուած քիւրդ ասպատակողները, որոնց գազանային սխրագործութիւններին, ըստ վաղեմի սովորութեան, նախագահում է տեղական պաշտօնէութիւնը...

Այո՛, նա դեռ կանգուն է, հին օրերի այդ պատուհասը, նա ոչ միայն չէ հեռացրուած, չէ փոխարինուած, այլ և անպատիժ գործադրում է „ռայայի“ վրայ թալանի ու սպանութեան նախկին մեթոդը:

Եւ քանի դեռ կայ նա, այդ պատուհասը, — մեր խեղճ ժողովուրդը պիտի գալարւի մարդասպանների, հարկահանների, պրոֆէսիոնալ թալանչիների սարդոստայններում և ազատութեան ու հաւասարութեան բոլոր ծանուցումները պիտի մնան արգահատելի պատրանքներ, պիտի մնան, իբրև նոր, աւելի դառն ու դժնդակ մի հեգնութիւն հայ բազմատանջ ժողովրդի համար...

Հայկական ջարդերի հեղինակների ձեռքով չի կարելի բարեկարգել Հայաստանը — այս պէտք է խոր արձանագրուէր նոր ռէժիմի ռահվիրաների գիտակցութեան մէջ: Բաւական չէ հռչակել որոշ սկզբունքներ, բաւական չէ նոր միջոցներ ձեռակերպել երկրի վարչութեան համար, անհրաժեշտ է մատակարարել և յարմարաւոր գործադրողներ...

„Not measures, but men“, — յիշելու է դարձեալ Սեծ Դերունու հուժկու խօսքը, որ թիւրքական իրականութեան հանդէպ, տարաբախտաբար, պահպանում է միշտ իր թարմութիւնը... „Ոչ միջոցներ, այլ մարդի՛կ“...

Նոր մարդիկ են պէտք՝ նոր սկզբունքները կիրառելու համար և միանգամայն տրամաբանական կը լինէր Իգէթների, Մելհամէների հետ՝ աւելի, դուրս քշել հրապարակից մեր մունր բռնակալների, արիւնարբու կաշառակերների այն քստմնելի վոհմակը, որ տասնեակ տարիներից, դարերից ի վեր ծանրացած է գաւառական բոլոր ժողովուրդների, մասնաւորապէս հայ ժողովրդի վրայ: Հարկ կա՞յ ասելու, որ այդ մունր-մունր ցեցերը յաճախ աւելի վտանգաւոր են, քան խոշորները, իբրև „միջոցների“, հրամանների գործադրողներ, իբրև երկրի իսկական տէրեր:

Սրանք տարրական ճշմարտութիւններ են և սահմանադրական մի կառավարութեան համար ամենառաջնակարգ պահանջներ, — որ սակայն, ահա չորս ամիս է, սպասում են գործադրութեան:

Դրա փոխարէն՝ թիւրք պաշտօնական շրջաններին հաճելի է ներկայ փափուկ, ճգնաժամային վայրկեաններում տարածել ինչ որ այլանդակ անհեթեթութիւն, եթէ չ'ասենք ինսինուացիա... Իբր թէ Դաշնակցութիւնը դիտմամբ ծանրացնում է հայ գաւառների վիճակը, իբր թէ նա շինծու հաւա՞ր է գտնում երևակայական սարսափների մասին, որպէսզի առիթ ունենայ պահպանել տալ դիւանագիտական սեղանի վրայ 61-րդ յօդուածը, որ սահմանադրական նոր կառավարութիւնը աճապարանքով ջնջել է ուզում:

Mauvaise foi-ի ու չարակամութեան մեծ դոզ է պէտք՝ այդքան թեթևօրէն ամբաստանելու համար մի կազմակերպութիւն, որ համերաշխութեան պրոպագանդի առաջապահն է եղել միշտ, որ ուխտել է իր իսկ Երիտասարդ-Թիւրքիայի հետ ձեռք ձեռքի տուած ձգտել պետութեան վերանորոգութեան, պահպանելով իբրև հաւատոյ հանդանակ՝ այդ պետութեան անխախտելի ամբողջութիւնը...

Հ. Յ. Դաշնակցութիւնը ոչ մի շահ չունի գիտակցաբար գունաւորելու առանց այն էլ խիստ գունաւոր իրականութիւնը, և այն էլ... պահպանելու համար

դիւանագիտական մի դոկումենտ, որ դրոշմուած է արիւնագոյն տառերով հայկական հեկատոմբների բուրգերի վրայ։ Հ. Ց. Դաշնակցութիւնը, ընդհակառակը, անհուն քերկրանքով կուզէր „հրաժարիմք“ ասել այդ դաւաճան յօդուածին, նա կուզէր ի սրտէ, որ նոր ռէժիմը իր ճըշմարտապէս սահմանադրական ընթացքով դարձներ այդ յօդուածն իրաք աւելորդ, իրաք մի non sens. բայց ինքը՝ նոր թիւրք կառավարութիւնը կարծես ամեն բան անում է—յուսով ենք, անգիտակցաբար—որպէսզի հայ ժողովրդի, այդ յաւիտենական քաւութեան նոխազի, մարտիրոսութիւնը շարունակի և որպէսզի այդ իսկ պատրուակով 61-րդ յօդուածն էլ մնայ անջնջելի, իբրև մըշտական մի սպառնալիք այս կամ այն դաւադիր պետութեան ձեռքում՝ միջամտելու և յոշոտելու համաօսմանեան օրգանիզմը. . .

Դանր է, խիստ ծանր՝ արձանագրել այդ անժիտելի իրողութիւնները։ կենտրօնական կառավարութեան այդ ընթացքը այնքան էլ չէր մտատանջի մեզ, եթէ չ'իմանայինք, որ նա լռելեայն հաւանութիւն ունի „Երիտասարդ-Թիւրքիայի“ տիրող հատուածի, եթէ չը տեսնէինք այդ վերջինի յամառ ձգտումը՝ գործելու նոյն ուղղութեամբ, նոյն պաղ, անխռով անտարբերութեամբ դէպի „հպատակ“ ժողովուրդների իրաւունքները, եթէ չը տեսնէինք նրա սիստեմատիկ քայլերը—պետական կազմի, ազգային հարցի, ընտրական հարցի և ուրիշ բազմաթիւ հարցերի մէջ—դէպի ազգայնական ուժեղ, շեշտուած գերիշխանութիւն՝ ամենախիստ կենտրօնացման նշանաբանով,—քայլեր՝ որոնք հայ տարրի վերաբերմամբ մասնաւորապէս բարեկամական ոչ մի բնոյթ չունին և հակասում են երէկւայ խրոխտ ու հանդիսաւոր ծանուցումներին։

Հազիւ փոքր ինչ հաւատ էր ներշնչել դժբախտ ազգերի յարաբերութիւնների մէջ—ահա վերստին փորձեր են անում թունաւորելու ազգամիջեան տրամադրութիւնը։ Հազիւ քաղաքակիրթ ու դեմօկրատ մարդկութիւնը ևս ուրախութեան բացականչութիւններով սկսել էր գովք կարդալ օսմանեան տարրի հերոսական սթափման ու գեղեցիկ ժեստերի առթիւ—և ահա ձգտում են, մի զարմանալի անգիտակցութեամբ, նորէն հիասթափեցնելու այդ մարդկութիւնը, նորէն ամրացնելու նրա մէջ այն տխուր համոզումը՝ թէ մահմեդական Արևելքը ինքն իրան չի վերածնուի. . .

Դամ առաջ հեռատես խելամտութիւն ունենանք հրաժարուելու կորստաբեր ճանապարհից և անկեղծօրէն, շիտակօրէն տարածելու սահմանադրական բարիքները հաւասարապէս կայսրութեան բոլոր հատուածների վրայ։

Մենք դեռ հաւատում ենք, որ անիշխանութեան արիւնոտ քաօսը Տաճկահայաստանում ժամանակաւոր է, վաղանցուկ, որ բռնակալութեան շրջանն անցած է ոչ միայն օսմանեան մայրաքաղաքում, այլ և փոքր-Ասիոյ հօրիզոններում։

Մենք հաւատում ենք, որ Թիւրքիայում կատարուած վերիվայրումը հասուն, գիտակից տարրերի գործ է, աշխարհաշէն, մնայուն մի գործ և ոչ „ստրուկների յեղափոխութիւն“, որոնք մի տիրոջ տապալելուց յետոյ, յօժարակամ մատնում են իրանց՝ ուրիշ տէրերի կամայականութեան. . .

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԵՒ ԿՈՒՄԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Խաղաղութիւն է Ռուսաստանի շուրջը։ Ցարաբերական խաղաղութիւն է և նրա ներսում։ Սուրհանդակը շատ քիչ է բերում „խաշը“, ցնցող նորութիւններ։ Իրաւ է, սակայն, որ ամենացնցող նորութիւններն էլ վաղուց անցել են սովորական փաստերի շարքը. . . Էլ չեն յուզում նոյնիսկ արևմտեան ամենակարեկից շրջաններում։ Մէկ էլ՝ ներքին ու հասարակական քաղաքականութեան կնճիռները կան, որ կլանում են նրանց ուշքն ու ժամանակը։

Եւ այդ ընդհանուր անտարբերութեան մէջ, ցարիզմը, առանց այն էլ վայրագութեան մէջ սահման չը ճանաչող, աւելի ևս յանդուգն ու ազատ առաջ է տանում իր ոճիրները, քայլ առ քայլ հետևողականօրէն իրագործում է իր ծրագիրը։

Դէպի յե՞տ—դէպի նախկին վայրենի ռէժիմը, դէպի Պլեվէ ու Պոբեդոնոսցեվ. . . Ծրագիրն այդ է։

Իրաք տարբերութիւն շատ քիչ է մնայել հին ու այժմեան ռէժիմների մէջ։ Գերեզմանային սև քարի պէս՝ բռնապետութիւնը ըստ առաջնոյն, ընկած է կեանքի բոլոր արտայայտութիւնների, գործունէութեան բոլոր ճիւղերի վրայ։ Ռէակցիան շարունակում է ճարակել կայսրութեան ամբողջ տարածութեամբ, մասնաւորապէս „Ծայրերի“ մէջ, Լեհաստանում, Կովկասում, անգամ Ֆինլանդիայում։ Ֆինլանդիան համառուսական յեղափոխութեան դուռ օրերում մի կարող ժեստով, գրեթէ առանց արիւնհեղութեան, հրաչակեց իր ինքնօրինութիւնը և նրա հետ միասին ամբողջ աշխարհը զգաց, որ վերջին ժեսան էր դա Ֆինլանդական ազատագրութեան, որ Պետերբուրգի կամարիլան երբէք այլ ևս չը պիտի խիզախէ՝ նորէն ցուցնելու իր վայրենի բռունցքը այդ ազատասէր ժողովրդին։ Զո՞ւր, միամիտ ակնկալութիւններ — ցնո՛ւք. . . Ֆինլանդիան ևս մարակի անողոք հարուածներով տաբուում է շարունակ, ասոր ճանաչաբար, դէպի նախկին ստրկութիւնը. ամեն օր—մի նոր ուկազ, մի նոր բռնութիւն, իրաւունքների նոր կրճատումներ. երկրորդ անգամն է, որ „սահմանադրական“ բռնաւորի հրամանով փակուում է այդ երկրի սեյմը, օրէնսդրական ամենաբարձր հաստատութիւնը, փակուում է, որպէս „ինասակար“ մի մարմին, որ չի ուզում համակերպել ամբողջ կայսրութեան համար կռած ճակատագրին։ Նոր սեյմ կը գումարի—այն էլ կը փակեն. . .

Լեհաստանում զինուորական դրութիւնը փոխարինուում է „ուժեղացրած հսկողութեամբ“, բայց ռէժիմը մնում է նոյնը—մի սանձարձակ ու սիստեմատիկ հալածանք ամբողջ երկրում ոչ միայն յեղափոխական տարրերի, այլ և ազգային-կուլտուրական ամեն տեսակ ձեռնարկների դէմ։

Կովկասում մի վայրկեան ուրախութեան ծափ զարկեցին, երբ մայրաքաղաքից ծանուցուեց Վօրոնցով-Դաշկովի „յաղթանակը“ աշակողմեանների սև բանակի դէմ. . . Թուում էր, թէ օսմանեան յեղափոխութեան ազդեցութեան տակ, Անդրկովկասի „վարակման“ վտանգաւոր հեռանկարի հան-

դեպ՝ բիւրօկրատիան վճռել էր սկսել փոքր ինչ խելացի ու սիրաշահող քաղաքականութիւն հարաւային Ծայրագաւառի մէջ... Դարձեալ պատրա՞նք... Եւ ի՞նչ է մի Վ.օրոնցով-Դաշկով, թէկուզ լինի նա անկեղծօրէն ազատամիտ, ի՞նչ է նա բէակցիայի այն աշխարհաւեր, անդիմադրելի յորձանքի մէջ, որ հեղեղել է ողջ Ռուսաստանը։ Ի՞նչ հաւատ կարող է ներշնչել մեզ ինքը Վ.օրոնցով-Դաշկովը, որ իր փքուն „լիբերալիզմով“ հանդերձ՝ կը մնայ միշտ թիւրք-հայկական ընդհարումների չարաշուք հերոսը...

Իրողութիւնն այն է, որ մեր դժբախտ կեանքը եւս, մեր կօղակատիպ հրամանատարների կամքով մղւում է միշտ դէպի նախայեղափոխական շրջանը,—մեր դպրոցները, ազատութեան իրենց կարճատեւ մեղրամիսը վայելելուց յետոյ, տեսնում են դարձեալ հօրիզոնում գօլիցինեան սպառնաց ուրւականը. մեր մամուլը միշտ աւելի և աւելի ենթարկւում է ցենզուրական սանձարձակ բռնակալութեան. մեր ժողովուրդը—մերկ ու քաղցած, ինչպէս բոլոր միւս բախտակից ժողովուրդները...

Ոչ մի փորձ դէպի իրական բարենորոգում. ոչ մի նշոյլ՝ կիրառելու սահմանադրական այն սկզբունքները, որ թագադրեր խրուխլակը հռչակել էր իր մանիֆէստով, երեք տարի սրանից առաջ, յեղափոխութեան փոթորիկների մէջ։ Ոչինչ չեն սովորում Ռուսաստանի բռնակալները—ոչ պատմութիւնից, ոչ ամենօրեայ իրենց փորձերից։ Չի ազդում նրանց վրայ և այն ահագին իրողութիւնը, որ սահմանակից բոլոր երկիրները, անգամ խաւար, բռնապաշտ Արեւելքը, ընդունում են ազատութեան ռէժիմը, որ յարի կայսրութիւնը մնում է պաշարած ամեն կողմից՝ սահմանադրութիւնների, մնում է կղզիացած ազատութեան հօրիզոններում, որպէս մի քստմնելի անախրոնիզմ, որպէս միջնադարեան բարբարոսութեան մի վիթխարի ու գարշանելի բեկոր։ Ոչինչ չի սովորում ինքը Սոսլիպին, Ռուսաստանի այդ նզովքպատուհասը, որ աւերեցեց, իբր թէ պայքարում է յեղափոխական ուժերի դէմ, բայց որ իրաք մեծագոյն պարդեւն է համառուսական ռէակցիայի, նրա անսասան, հեռատեսական կազմակերպողն ու վարիչը։ „Նախ անդորրութիւն և ապա ռէֆօրմ“ աղաղակելով, նա երեք տարի շարունակ դողացրեց երկիրը կախաղանների, մարդկային սպանդանոցների անդադրում հռնդիւններով. և այսօր նոյնն է այդ կամակոր հրէշը, այսօր, երբ ամենուրեք դադարած են յեղափոխութեան ուժգին ցնցումները—նա դարձեալ շարունակում է հնձել լաւագոյն երիտասարդ կեանքերը, առանց երբեք մտածելու „ռէֆօրմի“ մասին։

Ամբողջ երեք տարի սահմանադրութիւն—և ոչինչ։ Իր սեփական շահերի տեսակէտից իսկ, յանուն իր սեփական յարատեւութեան՝ մեզ կառավարող վամպիրների խումբը չէր կարողացաւ իրագործել և ոչ մի լուրջ բարենորոգում, որ դէմ մնասմբ դոհացում տար 100 միլիոնաւոր ազգաբնակութեան աղաղակող կարիքներին։ Յեղափոխական շարժումների դէմ նա մէկ թուրմ միայն ճանաչեց, մէկ դարման—կախաղաններն ու գնդակահարումները։ Եւ սակայն արիւնարբու տիրանների այդ վաղեմի մեթոդով նա չը կարողացաւ կարգ ու անդորրութիւն սահմանել և ոչ մի տեղ։ Նա չը խաղաղացրեց ոչ քաղաքները, ոչ գիւղերը, գաւառները։ Ընդհակառակը, նա ինքը ցանեց ամենուրեք անիշխանութիւն ու քաոս։ Յենուելով սոսկ մի չարագործ դասակարգի, կասապի վրայ, նա աւերեց բոլոր միւս դասակարգերը, հասցրեց ահագին կայսրութիւնը տնտեսական—ագրարային ու արդիւնաբերական տագնապների...

* * *

Révolution impuissante contre un gouvernement incapable! (Անկարող մի յեղափոխութիւն՝ անընդունակ մի կառավարութեան դէմ)—այսպէս են բնորոշել արեւմուտքում Ռուսաստանի կացութիւնը։ Թուում է թէ սխալ էլ չէ այդ անողորմ բնորոշումը։ Ո՞ւր է այն հզոր, համայնաջինջ ուրագանը, որ պիտի գայ վերջ տալու այդ լեռնացած դարշանքներին... Ո՞ւր է յեղափոխական անպարտելի բանակը, որ պիտի խորտակէ Բաստիլներից ամենահզօրը, ամենաքստմնելին...

Եւ ահա ակամայ զինադադարի շրջանում նորէն դրւում է այդ ճակատագրական հարցը, նորէն որոճւում է նա Ռուսաստանի յեղափոխական բանակների մէջ։ Քննադատում՝ են անցեալը, վերաքննում են տակտիկան, մտանայոյզ են լինում—իւրաքանչիւրը ըստ իր ըմբռնումի—ձախսրդ, աղէտաբեր պատճառների վրայ։ Ոմանք համարում են այդպիսի պատճառ՝ աւտեսական-արդիւնաբերական ոչ բաւականաչափ հասուն վիճակը, բուրժուազիայի, մանաւորապէս մանրքաղաքային բուրժուազիայի յետադիմական անդիտակցութիւնը, ուրիշները ողբում են աշխատաւոր ընդհանրութեան հակառական տրամադրութիւնները, դիւղացիութեան պահպանողականութիւնը, պրօլետարիատի մեկուսացումը, ուրիշները ծանրանում են սոցիալիստական տակտիկայի ծայրայեղութիւնների վրայ, ուրիշները, վերջապէս, խարանում են սեկտանտութիւնը յեղափոխական-սոցիալիստական կուսակցութիւնների մէջ, նրանց աղանդական ոգին, նրանց փոխադարձ անհամբերողութիւն ու անմիաբանութիւնը, որ ջլատում է կռիւը, անդամալուծում է յաղթանակը։

Հնարաւոր է, որ իւրաքանչիւրը այդ իրողութիւններից իր տեղն ունի ռուսական յեղափոխութեան ժամանակաւոր պարտութեան մէջ, բայց թուում է թէ վերջին ամենաուժեղն է, ամենածանրակշիռ։ Թուում է թէ յեղափոխական կուսակցութիւնների ու ցանգւածների միացած, ներդաշնակ դրօհի հանդէպ կը չքանային բոլոր միացած արգելքները՝ և՛ տնտեսական յետամնացութիւն, և՛ քաղաքային բուրժուազիայի ու գիւղացիութեան տհասութիւն որոնք եղել են աւելի եւս ընդարձակ չափերով ուրիշաւորդեմ երկրների մէջ և այնուամենայնիւ նրանց ներկայութեամբ չի կաշկանդւել յեղափոխութեան ալող ընթացքը։

Սակայն ուրիշ երկրներում բռնապետութեան դէմ մղած վճռական ճակատամարտների մէջ ծայրայեղ կուսակցութիւնները միշտ կարողացել են շահագործել ողջ դիմադրական տարրերի ոյժը, անկախ նրանց տնտեսական-փիլիսոփայական դաւանանքներից։ Ուրիշ երկրներում, ընդհանուր, մահացու թշնամու հանդէպ՝ կուսակցութիւնները կիրառել են միշտ գերմանական ծանօթ մարտախօսքը *Einzeln gehen, zusammen schlagen!* (Զատ-զատ գնա, միասեղ հարւածել), իսկ մեզ մօտ յեղափոխական խաշոր ու ծայրայեղ ֆրակցիաներ ոչ միայն սկզբից ի վեր յետամղեցին բուրժուազական դեմոկրատիայի (ռամկավար տարրերի) աջակցութիւնը, այլ և անընդունակ դարձուցին դրծադրելու վերոյիշեալ նշանախօսքը՝ նոյնիսկ իրենց, սոցիալիստական ֆրակցիաների փոխադարձ յարաբերութիւնների մէջ։ Երկրի ամենամեծ, ամենատարածուած կուսակցութիւններից մէնը, Սոցիալ-դեմոկրատիան, սկզբից ի վեր անհաշտ, թշնամական դիրք բռնեց թէ դէպի բուրժուազիայի ձախակողմեան թեւերը և՛ թէ դէպի ուրիշ սոցիալիստ կուսակցութիւնները, որոնք չէին երկրպագում սոցիալ-դեմոկրատիզմի աստուածներին։ Պրօլետարիատի տարամերժ պաշտամունքով հարբած՝ նա երազում էր համայն Ռուսաստանի հոկայական յեղաշրջման գործը տանել այդ մի քանի հարիւր հազարաւոր պրօլետարիատի ուսերի վրայ և մի անօրինակ աղանդամոլութեամբ վանել էր ուզում կռւի դաշտից բոլոր միւս կուսակցութիւնները։ Երբէք նա չ՚եկաւ—դէթ *de bonne foi*, շիտակութեամբ—այն գիտակցութեան՝ որ մի այնպիսի անօրինակ բռնակալութեան տակ, ուր հարիւր միլիոնաւոր ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը դեգերում է կրաւորական, անգիտակից վիճակում, ուր բիւրօկրատիան հզօր ճիրաններով ցանցապատել է բովանդակ երկիրը և ուր բանակը, հին կարգերի ամենաամուր պատուանդանը, իր տիրական զանգւածներով դեռ խունկ է ծխում ցարին ու օրթոդ քս եկեղեցուն,—որ մի այդպիսի բռնապետութեան տակ յեղափոխական միաձոյլ բանակը, բոլոր այլազան մարտնչողների ներդաշնակ դրօհը փրկութեան միակ դրաւականն է...

Դեռ չէր սկսել մեծ յեղափոխութիւնը—և արդէն մթնոլորտը թունաւորւած էր երկպառակութեան ու բանագրանքի անօրինակ աղաղակներով։ Բանագրանքները անբաժան կերպով կապւած են մարքսիստական դպրոցի հետ՝ նաև արև-

մտեան երկրներում. բայց ռուսաստանցի մեր հայրենակիցները իրենց դօգմայական ֆանատիկոսութեամբ գերազանցեցին արևմտեան ամենամոլեռանդ լրենց ընկերներին։ Դժուար թէ կարելի լինի դտնել Եւրօպայի ազատագրական շարժումների պատմութեան մէջ իրարաջնջման այնքան վշտաբեր էպիզոդներ, որպիսիները պարզուեցին մեր աչքերի առջև Ռուսաստանի մեծ յեղափոխութեան նախօրեակին, յեղափոխական կուսակցութիւնների կեանքում։ Դժուար թէ որև է այլ երկրի յեղափոխական մի մարմին պատմական ծանրակշիռ մի վայրկեանում ցոյց տուած լինի այնքան նեղսիրտ ու կարճատես աղանդամոլութիւն, ինչպէս նոյն ռուսական Սոցիալ-դեմոկրատիան Պարիզի անդրանիկ կոնգրէսին (1904 թ.), ուր Ֆինլանդիայի յեղափոխականների նախաձեռնութեամբ առաջին փորձն էր արուում՝ համաձայնեցնելու ռուս կայսրութեան բոլոր դիմադրական կուսակցութիւնները և մշակելու ընդհանուր, համերաշխ գործակցութեան մի նախագիծ։ Բանադրանքի կուսակցութիւնը՝ փոխանակ ուրախանալու պատեհ առիթից և խրախուսելու կուսակցների նորաբողջ համերաշխութիւնը, որ պիտի բանար մի նոր դարաշրջան ազատագրական շարժման պրոցէսում, ջլատեց մի անդամ ընդ միշտ այդ համերաշխութիւնը, մերժեց իր մասնակցութիւնը կոնգրէսին, պատճառաբանելով, որ այնտեղ նստած են կասկածելի տեսակի „սոցիալիզմ ու յեղափոխութիւն“ դաւանող կուսակցութիւններ—ռուս սոցիալիստ-յեղափոխականներ, լեհական սոցիալիստներ (P. P. S.), Հ. Յ. Դաշնակցութիւն և այլն։ Ձեռնոցը նետուած էր և այդ չարաբախտ օրերից ի վեր կուսակցութիւնների կռիւը դնում միշտ աւելի բորբոքելով, յեղափոխութիւնը անդամալուծելով, ի զարմանս ամբողջ դեմոկրատ աշխարհի և ի ցնծութիւն բռնապետական ոստի։ Կուսակցութիւնների անհամաձայնութիւնը պայթում էր նոյնիսկ կռուի ամենատաք վայրկեաններում. երբէք չէր տեսանք նախապատրաստուած, միահամուռ, ներդաշնակ մի գրոհ, ուր ազատարար մի ճիգի մէջ զուգորդուած լինէին բոլոր դիմադրական ուժերը։ Այդ հանգամանքը աննկատելի չի մնացել արևմտեան շրջահայեաց սոցիալիստների շրջաններում և նրանք յաճախ են յիշատակում այդ։

Համաձայնութիւնից խոյս տալով հանդերձ և անընդունակ գտնուելով մեն-մենակ նախապատրաստել, պատպտինել ու կռուի մղել զուտ-պրոլետարական իր անպարտելի բանակը, Սոցիալ-դեմոկրատիան ամեն ճիգ թափեց՝ վարկաբեկելու, վնասելու միւս գործող կուսակցութիւններին։ Ռուս սոցիալիստ-յեղափոխականները, տակաւին իրենց հերոսական կռիւների սկզբնաւորութեան մէջ, հրատարակեցին որպէս թշնամի պրոլետարիատի, որպէս իշխող դասակարգերի շահերի պաշտպան։ P. P. S.-ը յայտարարեց իբրև շովինիստ, ազգայնամոլ, բուրժուազական մի կուսակցութիւն... Իսկ թէ ինչ անարժան արշաւանք սկսեց կովկասեան սոց.-դեմոկրատիան Հայ Յեղ. Դաշնակցութեան դէմ, — վկայ է փաստերի ահագին լեռը, որ ամփոփուած է մեր օրինական և իլլեգալ գրականութեան մէջ։ Բաւական է յիշել, որ այդ կազմակերպութիւնը հռչակեցին նոյն ստնձարձակ դօքտրինեօրների բանակում՝ որպէս վանդէական, հակայեղափոխական և մի օր հանդիսաւորապէս, կուսակցութեան մի պաշտօնական թռուցիկի մէջ (1907 թ. յունուար) դասեցին նրան „իսկական ռուսների“ ու „սև հարիւրակեան“ խմբերի շարքում։ Եւ այդ՝ չը նայած այն աշկարայ իրողութեան՝ որ „Դաշնակցութիւնը“ իր վարած կռիւներով, իր ճիգաւորուած կազմակերպութեամբ եղել է սկզբից ի վեր ռուս յետադէմ մամուլի թունոտ ատելութեան ու հալածանքի մշտնջենական առարկան և այսօր էլ, իբրև մի տեսակ փոթորկոտ ամպ, կախուած կովկասեան հորիզոնների վրայ, նա անդադար զբաղեցնում է „Նովոյէ Վրեմիա“ զազիր էջերը...

Կռիւը անցաւ Ռուսաստանից դուրս, նա տարածուեց և արտասահմանի վրայ։ Նոյն թայֆայական ամբարտաւանութիւնը, որ ուզում էր մենաշնորհ դարձնել սոցիալիզմի գաղափարը և մեն-մենակ բռնել կռուի հրապարակը, — դաւեր սկսեց և Ինտերնացիօնալի կոնգրէսներում, միջազգային սոցիալիստական արէօպագի մէջ, ձգտելով դուրս նետել այնտեղից իր մրցակից, այլադաւան կազմակերպութիւնները։ Նա փորձեց նախ ռուս սոցիալիստ-յեղափոխական կուսակցութեան դէմ, բայց վերջինս հաւասար իրաւունքով ընդունուեց ոչ միայն Ինտերնացիօնալի ժողովներում, այլ և միջազգային սոցիալիստական Բիւրոյի մէջ։ Նա փորձեց յետոյ նոյն ինտրիգները Դաշնակցութեան դէմ, ներկայացնելով հայ մարտական կազմակերպութիւնը, որպէս ամենասև, ամենայետադէմ ուժերի մի հաւաքածու. սակայն այդտեղ էլ նրանց ջանքերը խորտակուեցին և նրանք մատնեցին իրենց անբարոյ ու ապիկար աղանդականութիւնը միայն՝ սոցիալիստական աշխարհի առջև։ Ոչ միայն Հ. Յ. Դաշնակցութեան կովկասեան ճիւղը ընդունուեց միջազգային սոցիալիստական կօնգրէսներում, այլ և այսօր ահա նրա թիւրքահայկական մեծ հաւաածն է գրկաբաց ու խանդավառ ընդունում Ինտերնացիօնալում...

Ֆիասկո—բոլոր դաւադիր ու նենգամիտ ձեռնարկների մէջ... Դա պատմութեան անխուսափելի դատավճիռն է նեղ ու գաղջ թայֆայականութեան դէմ, որ հաւաածական իր շահերը բարձր է դասում ընդհանուր դատի մտահոգութիւններից։

Եւ այդպէս, պառակտիչ ոգին ճակատագրական պատուհասի պէս հալածեց մշտապէս Ռուսաստանի մեծ յեղափոխութիւնը. շարժումը դատապարտուեց՝ մնալ միշտ ցրիւ ապօրդակի, կարատած, բաժան-բաժան. և կուսակցական համերաշխութեան տեղ՝ տեսանք միայն մրցում ու կռիւ, ուր յաճախ տոն էին տալիս թէօրիական, դօքտրինեօրական անհամաձայնութիւններն ու բնազանցական ամուլ, տաղտկալի մարզանքները։

Այդպէս է, տարաբախտաբար, և ներկայումս։ Նայեցէք ռուս իլլեգալ գրական հրապարակին, թերթեցէք այդ մեծածաւալ, բազմաբովանդակ հրատարակութիւնները։

Անվերջ տրակտատներ... փիլիսոփայութեան, նոյնիսկ իմացաբանութեան ամենակնճռոտ խնդիրների մասին։ Խնդիրներ՝ որոնք թուում է թէ, հեռաւոր առնչութիւն անգամ չունին ռուսական յեղափոխութեան արդի հրատապ պահանջների հետ։ Եւ—որ աւելի ցաւալին է—այդ կնճիռների շուրջը տեսնում ենք անվերջ հերձուածներ ու կռիւներ... նոյնիսկ միևնոյն կազմակերպութեան ծոցում՝ Սոց.-դեմոկրատիայի մէջ։ Մարդիկ—շէֆերը, գիտուն, փորձուած պարագլուխները—մի խելայեղ յափշտակութեամբ տարուել են այդ վերացական կամ լաւ է ասել վերանցական (*transcendental*) բանակռիւներով, որոնք կարծես թէ ամենաէականն են նրանց աչքում, բոլոր մնացածը—երկրորդական... Նախ պէտք է փրկել դօգման — մարքսիզմը. նրա իւրաքանչիւր պատգամը, նրա իւրաքանչիւր տառը։ Աւելի մարքսիստ, քան ինքը Մարքսը՝ ռուսական ս.-դ.-ները պատրաստ են թէկուզ տասնեակ տարիներով հանդիսատ թողնել ցարական բռնապետութիւնը, միայն թէ մղեն սրբազան կռիւը յանուն թէօրիայի կուսականութեան, միայն թէ պաշտպանեն այլադաւան, „բուրժուազական“, „մախիստական“, „բերնշտայնական“, „էսէրական“, „դաշնակցական“ ու այլ-ական „ոստիների“ դէմ իրենց դօգմայի վաղուց սատանուած հիմունքները... Որովհետև այդ պարոնների միստիքական երևակայութեան մէջ՝ „մարքսիզմից դուրս—չկը փրկութիւն“ Ռուսաստանի համար...

Թէօրիայի սիրը անժխտելի է։ Նա պէտք է պրպտէ իրականութեան բոլոր խորշերը, պէտք է ձևակերպէ ղեկավարող սկզբունքները, պէտք է առաջնորդէ գործիչներին կեանքի կնճռոտ խնդիրների լաբիրինթոսում։

Բայց սա թէօրիական բանավէճ չէ, այլ նրա կատարեալ այլասեռումը։ Սա մի կրկէս է, մի կատարեալ ըմբշամարտ, ուր իրարու դէմ արշաւում են դօգմայի նորագոյն սիսլատիկները, բոլորն էլ մարզուած երիստիկայի, վիճելաբանութեան մէջ և իւրաքանչիւրը վստահ, որ իր բերանով խօսում է բացարձակ, յաւիտենական ճշմարտութիւնը, իւրաքանչիւրը անբաւ եռանդով թափում է հրապարակի վրայ իր երուդիցիայի դոհարները՝ հակառակորդին *à tout prix* ոչնչացնելու համար... Եւ տարիներով ջարդւում են նիզակները ֆրակցիական նզովելի բանակռիւներում. և տարիներով հոսում

է մելանը՝ պղտոր, քայքայիչ հոսանքով... Ով որ 10—15 տարուց ի վեր հետևել է Պլեխանովների և նրանց ստեղծած ենթաշեֆերի „թեորիական ճակատամարտներին", գիտե, թե որքան շիտակություն, հետևողականություն, մաուոր ազնվություն պակաս ունին ռուսական ճակատագրի այդ „վարիչները" և թե որքան արդասաւոր են էրիստիկայի այդ անհատնում մարզանքները Ռուսաստանի ժողովուրդների ու յեղափոխության համար։ Կուսակցական յարաբերությունները լաբուում են յաճախ ամենաճղճիմ բանակուիների շուրջը, հակառակորդությունը վերածուում է մշտնջենական մի թշնամություն. և այդ անմիտ, անառարկայ թշնամությունը կուսակցական անձուկ շրջաններից փոխադրուում է ժողովրդի, պրոլետարիատի, երիտասարդության լայն խաւերին, որոնք չըստանալով հանդերձ մտաւոր պատշաճ, բազմակողմանի կրթություն իրենց գիտական շեֆերից, կամայ ակամայ իւրացնում են նրանց մեթոտները, գըրկում են ատելություն ու հալածանքի նրանց դրօշակը... Եւ շարժումը բնականաբար փշրուում է, մանրանում. չը նայած իր լայն ծաւալին և խմբական ու անհատական հերոսություններին՝ նա չի տալիս դիմադրական ոյժի maximum-ը, չի արտադրում բաղձալի սլացքը...

Սա մի երևոյթ է, որ յաճախ ուզում ենք անտեսել, անգիտանալ, համարելով այն ժամանակաւոր ու վաղանցուկ, բայց սա մի երևոյթ է—թեորիամոլություն ու վիճամոլություն այս յարաճուն պատուհասը—որի նմանը դժուար է գտնել արևմտեան կուսակցությունների պատմության ու գրականության մեջ, երկունքի ցաւոտ շրջաններում... և որը իրեն անբաժան ուղեկից ունենալով պառակտմանոգին, վերջին տարիներս շեշտուում է իր տաղտկացուցիչ ժխորով՝ և համաշխարհային սոցիալիստական գումարումների առջև, Ինտերնացիոնալի ամեն մի կոնգրեսում, միջազգային Բիւրոյի ամեն մի նիստում...

Բրիւսելի վերջին Բիւրոի ժողովում յայտնուեց, որ Ռուսաստանում 5—6 կուսակցություններ կան, բոլորն էլ մարքսիստական դաւանանքով ու յորջորջումով, բայց բոլորն էլ իրարու մեջ անհամաձայն, բաժան-բաժան ու հակամարտ...։

Եւ երևոյթը համաճարակի կերպարանք է առել, նա վարակում է երիտասարդության անպատրաստ մտքերը կայունության բոլոր հատուածներում և ամենուրեք գործում է իր ծուլարար, մեղկացուցիչ ազդեցությունը... Խօսելը միշտ աւելի դիւրին է, քան գործելը... Այդ ախտաւոր տրամադրությունն պատուղները մենք վայելել ենք լայն չափերով և դեռ երևի շատ կը վայելենք մեր կովկասեան երկնքի տակ...

Մենք, փոքրիկ ազգերի ներկայացուցիչներս, սովորել ենք կրթիչ, բարերար օրինակներ սպասել ռուս ինտելիգենցիայից, որ մեկն է մեր քաղաքակրթական ու յեղափոխական դաստիարակիչներից,—բայց վերջին տարիներս ստանում ենք այդ ինտելիգենցիայի մի ստուար հատուածից՝ այլասերուած յեղափոխական մի ֆրազէոլոգիայի պտուղները միայն, որոնք այնքան վարկաբեկեցին մեր ժողովրդական մասսաների աչքում և՛ յեղափոխության և սոցիալիզմի գաղափարը։ Ինքնին թոյլ, կրկնակի ու եռակի ճնշուած մանր ժողովուրդներս, անզոր մեկուսացած կուի նետուելու, սպասում ենք ակնդէտ, թէ ահա բուն Ռուսաստանի յեղափոխական մեծ բանակները, մի կողմ թողնելով տեսական իրենց տարաձայնությունները, կը միացնեն վերջապէս իրենց ճիգերը բուռն, յորձանուտ մի ժետի մեջ, որպէսզի շարժի ռուսական բազմամիլիոն կոլոսը, որպէսզի մենք էլ, Դայլերի առաջամարտիկ կուսակցություններս, կարողանանք պատշաճ արձագանք տալ... Այդպիսի կազդուրիչ ժետերի փոխարէն՝ հիւսիսից առատությամբ գալիս է մեզ մատ Ֆրազի մոլեռանդ պաշտամունքը, ծոյլ ու պառակտիչ աղանդամոլության տենդը...

Ամեն ինչ սահման ունի—նոյնիսկ այդ պղտոր հոսանքը։ Վերացական փիլիսոփայություններից այսօր աւելի անհրաժեշտ է բուն կենդանի գործի պրոպագանդը։ Սոցիալիզմը, իբրև կացություն ծնունդ ու պահանջ, իբրև տնտեսական կեանքի պօստուլատ, կազմում է այդ գործի, այդ պրոպագանդի մի անբաժան, ինտեգրալ մասը, նա կազմում է և յեղափոխական տենդանքների հեռու, անդրագոյն նպատակակետը։ Բայց կ՚ուիը ամեն բան խեղդող բռնակալության դեմ պէտք է լինի—վաղ՞ց պիտի լինէր—բոլոր մարմնչող կուսակցությունների կենտրոնական մտահոգությունը։ Այդ դժբախտ կայսրության մեջ եթէ ասիական դեսպոտները դեռ շարունակում են ճարակել մարակով ու խարազանով, եթէ ժողովրդային ապստամբության գործը, չը նայած 100 տարեայ պրոպագանդին, դեռ միայն իր առաջին քայլերի մեջ է, պատճառը այն չէ, որ Կարլ Մարքսը և Կարլ Կաուցկին դեռ բաւականաչափ չեն ժողովրդականացած, այլ այն՝ որ վառօդն է պակասում ապզաբնակության լայն խաւերի գիտակցության մեջ, որ այն գործօնը, առանց որի՝ բոլոր մնացած գործօնները, անգամ իրենց ամենախիզախ թռիչքների մեջ, կը մնան յաւէտ դատապարտուած ամլության, այն ժողովուրդը, որի ընդարձակ, միանաւադ գրոհը անհրաժեշտագոյն պայմանն է, conditio sine qua non երկրի հիմնական յեղաշրջման,—այդ ժողովուրդը, ի դէմս ամենամեծ, հարիւր միլիոնաւոր իր զանգուածների՝ դեռ ապշեցուցիչ համբերատարություն է տալիս աշխարհին։ Այդ վառօդն է, որ պէտք է արձարձել ժողովրդի, գիւղացիության ուղեղներում... աւելի քան Մարքսի ու Մախի փիլիսոփայությունը։

Աշխատաւոր ժողովուրդը, վերջապէս, բնազդով գարշում է աղանդական, դօգմայական բաժանումներից, քանի որ նա ինքը մէկ է՝ իր կացությամբ, իր շահերով ու զգացումներով...

Ժամանակ է՝ կուսակցությունները կուսայնելու տեղ, թշնամություն, երկպառակություն արձարձելու տեղ, փընտրել շիտակ ու փոխադարձ մերձեցումով նմանություն, շփման կէտերը այլևայլ կուսակցությունների մեջ և ջանալ իրագործել ոյժերի յեղափոխական համադրությունը ամբողջ Ռուսաստանում։

Հ. Յ. Դաշնակցությունը, ինչպէս անյեալում, այսուհետև ևս կը մնայ հաշտարար մի տարր, յեղափոխական համերաշխության համոզված պրոպագանդիստ։ Իր գործունէության միջավայրում, օգտուելով իր հեղինակությունից, նա կը նպաստէ այսուհետև ևս բոլոր ճշմարիտ յեղափոխական ֆրակցիաների մերձեցման, պատրաստ մոռանալու անյեալի տարաձայնշատակ դրուագները, համոզված՝ որ բռնակալության զօրությունը հիմնուում է մասամբ, մի խոշոր չափով, ըմբոստ ոյժերի հակամարտության վրայ, համոզված նաև՝ որ թեորիական, դօգմայական տարբերությունները չեն, որ կարող են արգելք լինել այդ տարբեր ֆրակցիաների ներդաշնակ գործակցության...

Յեղափոխությունը պարտուած է Ռուսաստանում—բայց նա չի խեղդուած։ Բռնակալությունը տէր է կացության—բայց նա չի յաղթել։ Ինչ այսօր էլ դեռ մնում է շարունակ ու անյայտության մեջ. հազար ու մի դիվերսիոններով, կիսատ-պռատ զինումներով, Պետական Դումայի երեսին նետած ողորմելի փշրանքներով, նա ձգտում է ամրապնդել իր դիրքերը, բայց չի կարող և չի կարողանայ երբէք։ Դումայի ստրուկ, համակերպող մեծամասնությունն անգամ առտիճանաբար, ճակատագրաբար պիտի համակուի ըմբոստության...

Խմորումը մի վայրկեան իսկ դադար չունի, նա աճում է խորությամբ ու տարածությամբ։ Սթափման նշանները շատանում են նոյնիսկ լայն գիւղացիական զանգուածների մեջ։ Խաբուած ամենանենգ, ամենաստոր մանեվրներով, հիստիափուած ուխտադրուժ բռնակալի սին ու պատիր խոստումներից, համոզուած, որ ցնորք է ակնկալել այսուհետև որևէ բարիք, ազատություն ի վերուստ՝ աշխատաւորական ցայժմ ներքին մասսաները կամաց-կամաց գալիս են այն յաւագին եզրակացությունը, որ իրենց ազազակող թշուառությունը ոչ մի ուրիշ ելք չը կայ, բայց եթէ բռնի յեղափոխությունը, որ նա է միակ շինարար ու խաղաղարար գործօնը արեան ու արհաւիրքների մատնուած լայնածաւալ կայսրության մեջ։

Պէտք է յար և միշտ կազմակերպել ազատամարտի այդ

ուժերը, միացնել նրանց մի ընդհանուր հոսանքի մէջ, լուսաւորել նրանց վարանոտ գիտակցութիւնը և խոյս տալով մանր, ցրիւ, կղզիացած բռնկումներից—որոնց թուոնոտ պտուղները ճաշակեցինք առատութեամբ—փութացնել բոլոր գործօն բանակների, ամբողջ կուռող Ռուսաստանի միահամուռ ու յաղթական գրոհը...

Եւ այդ յաղթանակը այժմից արդէն կ'ապահովէր, եթէ իւրաքանչիւրը մի քանի տասնեակ յեղափոխական կազմակերպութիւններից, եթէ բոլոր բազմազան ու մարանչող խմբումները տոգորուէին ամենահրատապ այժմէութեան գիտակցութեամբ—տապալելու նախ և առաջ այն մահահոտ, արիւնակուռ Բաստիլը, որի գոյութիւնը ոչ միայն կոպիտ անախրօնիզմ է, ժամանակագրական անհեթեթութիւն ազատութեան համատարած հօրիզոններում, այլ և հեգնանք ու անարգանք ամբողջ մտածող Ռուսաստանի համար...

ԹԻՒՐՔԻԱ

ՆԵՐՔԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Օսմանեան ազատութիւնը, բարոյական ու նիւթական համատարած աւերակներու վրայ բուսած ծաղիկ մը, ինքզինք կը գտնէ անթիւ, եթէ ոչ անյաղթելի, քամիներու ճակատառ ճակատ։ Թիւրքիոյ նոր ռէժիմը, հին բռնակալութեան շղթաները փշրելով ու դուրս գալով անբանային ու հակամարդկային ոլորտէն, պէտք է հերակլեան շահատակութիւններու ծրագիր մը մշակէ քնքուշ Ազատութիւնը պաշտպանելու և օրինական և պատուաւոր մակարդակի մը բարձրացնելու համար երկիրը, ուր վայրագ բնազդները ու մոլեռանդ կիրքերը ապերասանօրէն դէպի արիւնը ու ոճիրը կը ձգէին և ուր բարբարոս ոճրագործութիւնը կ'ուզեր յաղթանակել քաղաքակրթութեան վրայ։

Թիւրքիոյ ներքին կացութիւնը աւելի կնճռոտ և աւելի փափուկ կը թուի ըլլալ քան արտաքինը. հին ռէժիմի ուժերուն ստորերկրեայ և թերևս նաև արտաքին շիլ ինտրիկները — ինչպէս գերման կառավարութեան մութ խաղերը՝ որ թիւրք ժողովուրդը հին փսխունքին դառնայ,—ժողովրդին մեծ մասով անգիտակցութիւնը և կորովի պակասը, ցեղային հակադրութիւնները, ծրագրային, ընտրական սուր պայքարները և քաղաքական ու հասարակական հակըմբռնումները, Ջարդի սարսափը, որ կը պտտի օդին մէջ, ստեղծած են երկրին մէջ հոգեկան և ֆիզիկական լարուած դրութիւն մը, որ եթէ շարունակի, կարող է տագնապալից ըլլալ և վտանգաւոր մանուկ Ազատութեան համար։ Հին մարդը սկսած է գլուխ բարձրացնել, հազիւ քանի մը ամիս Ազատութեան փէշերուն տակ ակամայ սողոսկումներէ ու քծնումներէ յետոյ։

Երիտասարդ-Թիւրքիան իր անտուեր երազներուն մէջ, անհեռատես ներողութիւնով և վեհանձնութիւնով մը շարժեցաւ դէպի անոնք, որ յաւիտենական դատակնիքը ունէին իրենց ճակատներուն վրայ և որ ոնած ոճիրի արիւններով կամ խամռած, ամեն րօպէ պատրաստ են գրոհ տալ և դաւաճանել։ Ֆրանսական յեղափոխութեան կառափնատը եթէ դաժան էր և անողոք, ուրկէ նոր Թիւրքիան կզգուշանայ—թերևս բաւ համարելով օսմանեան հողին ծծած արիւնը — սակայն այդպիսի պատմահոգեբանական բուպէի մը, մարդկային բանականութենէն պէտք չէ վրիպէր անողոք իրականութիւնը և էական էր ամեն կերպով զգաստութեան հրաւիրել թշուառ մարդկութեան լեարդը կրծող անգղները։ Մարդ-էակին բնոյթը նոյնը մնացած է միջոցին ու ժամանակին մէջ, գազանը անոր մէջ անքուն է և թէ յաճախ, ընդհանուրին Ազատութեան շահը կը պահանջէ չը խուսափիլ կարուկ միջոցներէ, մանաւանդ պինդ ու անուղղայ եղեռնագործներու հանդէպ, որոնց մէջ ոճիրը մարդուած է իրենց մորը կաթին հետ։ Արևելքի պէս երկրի մը մէջ, ուր խորթ հակումները այնքան հզօր են, պէտք է ունենալ նոյնքան հզօր կամք և ծանր ձեռք մը զանոնք զսպելու համար։ Երիտասարդ-Թիւրքերը—որ շատ երիտասարդ են դեռ, կ'ըսեր դիւանագէտ մը—„խոհեմութեան ու չափաւորութեան" գեղեցիկ օրինակը տուին, ճիշտ է, բայց իր մաքրագործումը մակերեսային ըլլալ կը թուի, որովհետև Ջարիքին արմատները գոյութիւն ունին հողին տակ, որ կարող է այսօր վաղը վերածուիլ ոստեր արձակել և թերևս ուռճանալ. անոնք իրենց կուշտին մէջ պահեցին աղէտին միկրոբները։ Դժար պիտի ըլլար համոզիլ կամ ինքնախաբուիլ, որ հին ռէժիմին մէջ՝ անբարոյականութեան ծուծը քամած խումբը, մաքուր աշխարհահայեցողութեան մը այդքան շուտ բարեկամանար, կամ համակերպէր իրեն վիճակած անփառունակ ու արհամարանքի կեանքին, անոնք երէկի տիրապետները, հրամայողները, վայելողները։ Յանկարծական փոփոխութիւն մը, որքան ալ ուժեղ ու ամեհի կերպով ետ մղէր հին ալիքները, պէտք էր սպասել նաև անոնց ընկրկումին։ „Բաւական չէ, կ'ըսէր Վ. Պերար Revue de Paris-ի մէջ, համիդեան ոճիրները տարամերժել, պէտք էր ոճրագործները վտարել և դնել զանոնք վնասելու անկարողութեան մէջ"...

Հին դայլերը, իրենց սարսափի ահաւորութեան մէջ, գինաթափ չեն եղած, անոնք ապագայ ծրագիրները կը նիւթեն և իրենց սահմանադրական սանձերը կը կրծեն կատաղօրէն։ Երեսուն տարի երկրին արիւնոտ ու միահեծան տէրն ու դատաւորը... և դահիճը ըլլալէ յետոյ, իսկապէս դժար է խնարհիլ նորազատ պայմաններուն, ուր երէկի ստրուկ անհատը արհամարհով մը կ'անցնի իր երէկի տիրոջ քովէն։

Հաշտարար և սիրաշահիկ քաղաքականութիւնը քաջալեր մը եղաւ յետադիմականներուն և յուսախաբներուն, որոնք, իրենց դաւադրութիւնը իրաւացնելու համար, ի՞նչ հեգնութիւն... ազատութեան անունով կը խօսէին։ Ինչպէս Մուրադ պէյ մը—որ հէնց սկզբէն Երիտասարդ-Թիւրքերու շարքերուն մէջ „մուրթադ" մը եղած է—այդ փցուն և փքուն միտքը խուլիգանական շարժման մը պարագլուխը կ'ուզեր հանդիսանալ և իր ծրագիրը կը ձևէր „իսկական ռուսներու" „օտարակեր" գործնէութեան վրայ։ Մուրադ պէյ՝ զուրկ քաղաքացիական առաքինութենէ, իր փառասիրութեանը մէջ անտեսուած մրն է, հետևաբար պէտք էր վրէժխնդիր ըլլալ հայրենիքէն, առանց անդրադառնալու որ ամենամեծ եղեռն է մարդու մը համար, որ կը փորձէ իրաւունք ունենալ իր հայրենիքին դէմ։

Օրէօր նորնոր խլրտումներ, սռնոցներ և սպառնալիքներ կը լսուին, „եաֆթաներ" կը փակցուին, զէնքի վաճառատուները կը պարպուին, „կեավուրներուն Ջարդ"-ի ուրուականը կը շրջի քաղաքէ քաղաք, սպառնալիք խեղճ թրքուհիներուն դէմ, որոնք հարեմական բռնազբօսիկ և անմարդկային ձևականութիւնները—որ գերութեան կը ժառեան—կ'ուզեն քիչ շատ թօթափել և չեն կրնար ազատ քայլ մը փոխել, որ նամերտօրէն չ'անարգուին։ Ամեն կողմ երկիւղ և սպառնալիք կը ծորէ։ Յոյն թատորին վայրենի սպանութիւնը, Երզրզի ափերուն վրայ, պարզ միջադէպի մը մեկնութենէն դուրս կ'ելլէ։ Խուլ դաւադրութեան մը հրաւէրն է, որ նպատակ մը ունի և „խորհրդաւոր" կապեր։ Յոյները կը յուզուին և կը և յայտարարեն համարձակ, որ „իրենք հայերը չեն որ չարաչար Ջարդուին"։ Իրենց արժանապատուութեան գիտակցութիւնը և... քարը տեղին են։ Մեր ինքնասիրութիւնը կը հրամայէ մեզի... խուլ ձևանալ... թէև յոյներն այ ունեցած ըլլան պատմական այսպիսի անմխիթար ու ահարկու րօպէներ։ „Քրիստոնէի և իսլամի" այդ խորական ու չարաբաստիկ ըմբռնումը, որ Թիւրքիոյ պատմութեան հասարակական վերքերէն ու դժբախտութիւններէն մէկը եղած է, թերևս գլխաւորը, սուզի նստած է երկրին համար։ Այդպիսի քանի մը արարքներ և մոլեկան հաճոյքներ ժողովրդի մրուրին կողմէն—թէկուզ յանուն կրօնի Իսլամ սիրոյ — Ազատութեան սրտին շեշտակի հարուածներ են, որ փափուկ ու լարուած դրութիւն մը կրստեղծեն և ուրկէ, ապահովաբար, թիւրքերն են որ ամենէն աւելի պիտի տուժեն։ Սպառնալիքները, որքան ալ անզօր կամ օդային կարծուին, սակայն փաստերը կուգան պարբերաբար ցնցել մեր անփութութիւնը, մանաւանդ հայերուս, որ ինքնապաշտպանութեան պէտք

կըզդանք այն ատեն, երբ վանդը, իր արիւնոտ աչքերով, մեր դռները կը ծեծէ, և զոր ժողովուրդներու իմաստութիւնը հեգնօրէն „հայու վերջին խելքը“ կ'անուանէ։

Փոքր Ասիան և Հայաստանը յետադէմ բանակին պահեստի վայրը կը մնան։ Եւրօպական Թիւրքիոյ ազատութեան սարսուռը քիչ ազդեց ծերունի Ասիային վրայ, ան կը մնայ անհրապոյր ու խոժոռ և չհանդուրժեր որ քրիստոնեաները, որոնց հետ դանակի ու բիրերու հարուածներով սորված էին խօսիլ, հրճուին և արդարութեան ու իրաւունքի ովսաննաներ կարդան։ „Քրիստոնեան չկրնար իսլամին հաւասար ըլլալ“... ահա նսեմ և օրհասական ճիշը և նշանաբանը, որ կը լսի տգէտ ամբոխին խորէն և զոր կը հրահրեն անընդհատ մթին և արիւնուշտ ձեռքեր։ Ասիական Թիւրքիոյ մէջ վարչական մեքենան նոյնը կը մնայ. գրեթէ նոյն դասական արհաւիրքը, որ կը կափարի աշխատասէր ժողովրդին վրայ և նոյն անպատկառ զօշաքաղութիւնը և ստահօս պատրուակները դաժան և ապական պաշտօնէութեան մը կողմէն։

Երիտ-Թիւրքիան որ լիազօր կշիռ ունի նորագոյն ռէժիմին մէջ, չենք կարծեր որ միամտութիւն ունեցած ըլլայ „Ազատութիւն“ բառին մոգականութեանը շատ դերբնական զօրութիւն մը ընծայելով։ Պէտք չէ անտեսել որ Թիւրքիոյ „զինուորական յեղափոխութիւնը“ մեծ քաղաքներուն մէջ միայն արձագանք գտաւ։ Ժողովրդին զանգուածը ոչ հրեղէն մկրտութիւնը ունեցաւ, ոչ ալ այն խոյանքը, զոր տեսանք Ֆրանսիայի մեծ յեղափոխութեան ատեն Ֆրանսական ժողովրդի խաւերուն մէջ՝ երբ ան զրոհ կուտար հին ռէժիմի պարիսպներուն ու պատնէշներուն վրայ։ Հին ռէժիմին դէմ ատելութիւնը չ'արտայայտուեցաւ սուր և մռնչուն կերպով, ոչ ալ տառապանքի ճիչը այնքան հզօր էր մեր թիւրք հայրենակիցներուն մէջ որքան կրպաւուէր։ Նոյն իսկ սահմանադրական գիտակցութիւնը անոնց մէջ կը դանդաղի խորանալ և թօշնալ և ըստ երևոյթին՝ եթէ չյետադիմեր՝ կայուն կը մնայ։ Այդ ամենը բարեգուշակ էին ռէակցիոնի դարանամուտներուն համար, որոնք սահմանադրական ազատութեան միջոցին դեռ ամենազգուելի դերը կը կատարեն և կը յաւերժացնեն հարստահարութիւնները և չարագործութիւնները և չեն թողուր, որ համերաշխութիւնը ու արդիւնաբեր աշխատութիւնը հող բռնեն ու շէն ու պայծառ ընեն երկիրը։

Հայերը ամենէն անիրաւածը և դժբախտը և զոհը միանգամայն մեայլ ճակատագրակարութեան մը, որ երբէք մոլեգնած ըլլայ ազգի մը վրայ, աւելի պէտք ունէին Ազատութեան անձնուէր ու հոգատար ջանքերուն և եղբայրութեանը. պէտք էր թարմ, ազատամիտ ու պարկեշտ ուժեր ղրկել Հայաստան սանձահարելու քրդական և այլ պաշիպօզուքային գազանութիւնները, որոնք հնաւանդ և անվրէպ մեթօտով կը շարունակեին։ Նոր և լուսաւոր Թիւրքիան չէ կարող ընդդիմանալ „հայաջինջ“ կամ „հայակեր“ լիրբ քաղաքականութիւնը, որով փառափայլեցաւ համիդեան շրջանը. մենք հեռու է այդպիսի չարաշուք և դժպհի մտածում մը։ Նկատի ունենալով որ Թիւրքիան փոխանցական տագնապալից շրջան մը կը բոլորէ, պատմական դարձ մը կ'ընէ, չենք կրնար տարապայման, արմատական բարեփոխումներ պահանջել, բայց կրնպասէինք դոնէ անյապաղ և ընդմիշտ վերցուէր ճնշումի և սարսափի խեղդուկ և կամակոր վիճակը, որ կը ծանրանայ Հայաստանի՝ իրենց տերտը տարակուսած գիւղացիներուն վրայ և որոնք անտուն, մերկ, անօթիծարաւ ու հալածական կը դիմաւորեն սպիտակ ձմեռը... ինչպէս պատանք մը։ Թիւրք մամուլը յենելով պաշտօնական... „անսուտ“ աղբիւրներու վրայ՝ որոնք ափսոս շատոնց կորսնցուցած են արդէն ճշմարտութեան վարժոյթը, չ'ուզեր հաւատալ, որ հայերը կը տառապին, որ „խորութիւնը“ կը շարունակի, և վարդագոյն ու երանելի լաւատեսութեան մը մէջ—beati possidentes—կապրի կամ այնպէս կը ձևացնէ։ Այո՛, հայ ժողովուրդը տմարդի և արգահատելի պայմաններու մէջ կապրի, և իր դէմ եղած չկամութիւնները, չարակամութիւնները ու բռնաբարումները չեն փոխած իրենց ընոյթը, ան կը շարունակէ իր Գողգոթայի տաժան վերելքը... Ազատութեան քայլերգովը։ Սպասե՞նք որ հայ տարրը՝ քաւութեան նոխազը դառնայ դարձեալ, փոխանակ անոր տուայտանքին ու խոցերուն վրայ սիրոյ և մարդկայնութեան բալասանը կսխեցնելու։ Այդքան գոռուն և տիեզերահոչակ ցոյցերէ յետոյ իսկապէս դառն է տեսնել թշուառութեան ու սարսափի տակ մեր զգացումներու ու երևակայութեան տրորուիլը։

Սահմանադրութեան հռչակելէն ասդին, հայ ժողովուրդը ընդհանուր հայրենիքին իր տաքսիրտ և նախանձախնդիր սերը՝ կարկառուն և անվերապահ կերպով արտայայտեց մէկէ աւելի անգամներ։ Սահմանադրութենէն աւելի սահմանադրական եղաւ ան։ Երէկի մեծ նահատակը, որուն համար իդէալի տենչանքը տանդէական տանջանք մ'եղաւ, տարօրինականօրէն անդուսպ և երջանիկ մղում մը կըզդայ—առանց յիշաչարութեան—առաջինը ըլլալու ընդհանուր հայրենիքի պաշտպանութեան և բարօրութեան համար իր դիմը սպասդնելու։ Հայ ժողովրդի բարոյական առաքինութիւնը, իր ոսկեղէն անկեղծութիւնը հիւլէի չափ կասկած չվերցներ։

Կառավարութիւնը եթէ ուզէ ատակ է վերջ տալու այն խոշոր ու աչք պատռող Զարիքներուն, որ կրտակաւին և աւանդ կը մնան այն ռէժիմէն, երբ Եըլդըզը, այդ անիծեալ քարայրը, միջին դարու աւատական դղեակներու պէս, աւազակութեան և եղեռնային տուամներու օթևան և որջ կը ծառայէր Արևելքի ճամբաներուն բեր ոնը։ Հայաստանի մէջ բոլոր չարագործները, որոնք արիւնի գինովութիւնը ունին ու հին հովերով ման կուգան դեռ, անպատիժ կը մնան և չեն թողուր որ հայ տարրը դադար մը առնէ և էօֆ մը քաշէ։ Ոճրագործ-աւազակները, պէկ և այլ անուններով, որ աւերագործել միայն գիտեն, աւելի ակնածութիւն ու կարևորութիւն կը վայելեն, քան համայնքի մը ամբողջ աշխատաւոր ու երկրաբնակիչներ։ Առանց սահմանադրութեան մարդկային տարրական արժանապատուութիւնը իսկ պիտի չը հանդուրժէր այդպիսի ըմբոստացուցիչ տեսարան մը։

Փոխանակ 61-րդ անվնաս ու ցաւագին յօդուածին դէմ սպառազինուելու ու այնքան ումպէտ վայնասուններ արձակելու ու ջղտելու, Թիւրք մամուլը աւելի իմաստուն ու շահեկան և միանգամայն աւելի... դիւանագիտական գործ մը ըրած կ'ըլլար, եթէ իր նիզակները փշրէր—և ոչ թէ հին պիկը ածէր—զոռացող անօրէնութիւններուն, անիրաւութիւններուն ու անասելի կամայականութիւններուն դէմ, որ ծնունդ տուին այդպիսի անխուսափելի ու անդոհական միջազգային յօդուածներու Վերցուցէք պատճառը, աւէք անվիճելի երաշխաւորութիւնները, արդիւնքը ինքնին կը վերնայ։

Մամուլը ճշմարտութեան հայելին ըլլալու է։ Անոր կոչումն է ամեն բան ադամամերկ ընել և անկեղծութեան ու մաքրութեան հոգեպարար շունչը տարածել հասարակութեան մէջ, որուն միակ դաստիարակիչը կը հանդիսանայ։ Լոյս սփռել այդ երկրին մէջ—որ չափազանց մութ ապրեցաւ արդէն—և ճշմարտութիւնը հռչակել չորս հովերուն, իդէալը պէտք է ըլլայ իւրաքանչիւր ազնիւ ու հայրենասէր քաղաքացիի որ լուսեան դաւաճանութեան սոսկումը ու սարսուռը ունի դեռ իր ոսկորներուն մէջ։

Հայ ազգին համար ներկայիս, ամենէն նուիրական պարտականութիւնն է, իր լաւագոյն զգացումներու ու գործնէութեան մեծագոյն բաժինը տրամադրել հայ ժողովրդին, որ գերազանց զոհաբերութեան օրինակը ընծայեց աշխարհին։ Մեր խղճի ու հայրենասիրական պարտքն է երկիւղածօրէն անդրադառնալ մեծ Տառապանքին վրայ, որ ճակատագրեց հայ ցեղը և որուն ցաւերու սփոփումին համար այսօր աւելի քան երբէք, պէտք ունինք սրտաբեր զոհողութիւններու, կորովի և յարատև ջանքերու՝ վերականգնելու համար հայութեան երդիքը։ Չը պէտք է թոյլ տանք, որ Արդարութիւնը չորցամաք անուն մը մնայ, զոր պէտք է գործադրել տալ կառավարութեան—և հակառակ իր կամքին—շիտակ ու անխեղաթիւր միջոցներով։ Մեր գիտակցութիւնը պիտի չը ներէ, որ հայ աշխատաւոր ժողովրդի զաւակները Ազատութեան ճիտէն կախուին իրենց գոյութիւնը մուրալու համար։ Հայ ժողովրդի ուշադրութիւնը պէտք է դառնայ դէպի երկրի հայութիւնը, որ իր մարած օճախին քով, ու կտուրի աւերակներուն վրայ պահապան հրեշտակի մը պէս նուիրա-

կանօրէն հակեց, հաւատքի ջահը իր հոգիին մէջ, երբ սառնաշունչ քամիները ու անօթութիւնը անոր մերկութիւնը ու թշուառութիւնը կը լլուտէին։ Ժամանակն է, որ արտասահմանէն դարձողները—որոնցմէ քանիներ գաղթականութիւնը աններելի չարաշահութեան և խաչագողութեան աղբիւր ըրին, և չը խղճահարեցան անողոք ու շեշտակի հարուածներ հասցնել հայութեան անունին, թէև „քէմէրնին“ մէջ-քերնին կապ ըլլար—օրառաջ դրկուին իրենց հայրենիքը, ուր տատասկոտ և այրիացած արտերը կրսպասեն արի և աշխատասէր բազուկներուն արդասաւորելու ու հարստացնելու համար։ Երկարատև ձգձգումը այդ խաժամուժին մէջ կարող է շեշտել այնպիսի անհամութիւններ, հակակրելի ժէստեր ու անպատկառ բարքեր, որոնց տխուր փորձառութիւնը ունեցած է արտասահմանի մէջ ամէն դիտող ու սրտցաւ հայ։ Արտասահմանի հայ գաղթականութեան պատմութիւնը, երբ կամ եթէ մէկ օր քրքրել համարձակուի և գրուի, այնպէս ինչպէս որ եղած է, իր իրապաշտ ու զզուելի մերկութիւնով, մենք հայերս առաջինը պիտի ըլլանք խոստովանելու, որ մեր բարքերուն ու բնաղդներուն մէջ արմատական և եթէ կարելի է ըսել դահավէժ բարեփոխութեան ու դաստիարակութեան մը անհրաժեշտ պահանջը ու ստիպողականութիւնը կայ, եթէ չենք ուզեր որ մեր գեղեցիկ յատկութիւնները ամպամած մռայլին տգեղ ու անպատուաբեր մշակումներու մէջ։ Պէտք է աղնուացնել այդ բարքերը, պէտք է բնաւորել անոնց մէջ աւելի արժանաւոր յատկութիւններ ու պայծառ ձգտումներ։ Ահա այն բարոյականը, զոր կարելի է եզրակացնել արտասահմանի հայ պանդխտաւորներու կամ փախստականներու անլուսաւոր կենցաղէն ու ընթացքէն. . .

***

Ընտրական պայքարը, ուր սկզբունքի և եռանդուն շահեկանութեան պակասը կը տիրէ—ինչ որ թերևս ներելի կարելի է համարել առաջին քայլին—քիչ մը թագնեց երէկի իրերահամբոյր ազգութիւններու յարաբերութիւնները, և դժբախտաբար արթնցուց ցեղային ընդդիմութիւնները, խուլ անհամաձայնութիւնները։ Թիւրքերը, որոնք ընտրութիւններու մէջ „արժանաւորագոյնի“ թեզը ընդունած էին, առանց ազգային խորութեան, չկրցան իրականութեան մէջ հաւատարիմ մնալ իրենց գեղեցիկ թէորիին. ամէն տեղ նկրտեցան իսլամ թեկնածուները առաջ քշել—մինչև իսկ կարգ մը տեղեր ընտրութիւններուն մէջ մատ խաղցուած են կ'ըսուի—ինչ որ տեղի տուաւ իրաւացի դժգոհութիւններու և բողոքներու այդպիսի կամայականութիւններու դէմ։

Ընտրութիւններէն բղխած այդ ցեղային անհամաձայնութիւնները, ներհակ շահերը, սիրտ տուին բէակսիոնին, որ սկսած է շահագործել շփոթ դրութիւնը և արծարծել քնած ատելութիւնները և մոլեռանդութիւնները՝ ամէն տեղ անվարկելով ազատական բէժիմը, և ներկայացնելով սահմանադրութիւնը իբր Ցրօվադայի ձին, որ իր կուշտերուն մէջ կը կրէ հայրենիքին վտանգը։ Արդէն նահանգներուն մէջ քաղաքական իշխանութիւնները հազար ու մէկ դժուարութիւններ կը հանեն այդ կրկնակի ընտրութիւններուն դէմ, որովհետև „ոսկեղէն կամ քէօրօղլիի տէվիր“ մըն է իրենց համար որ ձեռքէ կը փախի։

Անուրանալի է, որ երիտ.-Թիւրքերու ծրագիրը ազգայնական է և այդպէս ալ կրսպասուէր, անոնց ճիգն է որ առաջիկայ խորհրդարանին մէջ որքան կարելի է Թիւրք կամ միւսիւլման տարրը շատ աւելի ձայն ունենայ՝ և ա ն ք ա կ տ ե լ ի օ ր է ն դարձնէ երկրին „հիմնական օրէնքը“։

Մեր հայեցակէտով այդպիսի միակողմանի „մեծամասնական քէէով“ օրինագծուած Սահմանադրութիւն մը հաստատ կուռ մը չէ երկրին անդորրութեան։ Իսլամ տարրը հոն, մեծամասնութիւն կազմելով և իր ձայնին գերակշռութիւնը պարտադրելով, ազգային վեհապետութիւնը ըսել չէ դեռ։ Թիւրքիոյ համար լաւագոյն և բանաւոր ընտրական ձևը „համեմատական ներկայացուցչութիւնն“ է, ուր ամէն ազգ իր թիւն համեմատ՝ երեսփոխաններ ունենայ։ Ֆրանսայի պէս համատարը երկիր մը, ուր ազգութիւններ չը կան, բայց կան գաղափարական կամ քաղաքական կուսակցութիւններ, ահագին պայքար կը մղէ այս բօպէին, որ Ֆրանսիայի օրէնադրական ընտրութիւնները հիմնուին „համեմատական ներկայացուցչութեան“ սկզբունքին վրայ, իբր ամենաարդար սիստէմը։ Ո՞ւր մնաց Թիւրքիոյ պէս երկիր մը, ուր ազգութիւնները որոշ և անդրդուելի ինքնագիտակցութեան հասած են։

„Համեմատական ներկայացուցչութիւնը, կ'ըսէ Ֆրանսական մեծ թերթ մը, տրամաբանական ու անհրաժեշտ հետևանքն է ազգային վեհապետութեան։ Այն բօպէին, որ Խորհրդարան մը կայ, այդ Խորհրդարանը պէտք է ներկայացնէ, ՝ոչ թէ երկրին մէկ կոտորակը, այլ ամբողջ երկիրը“։

Միլբրան իր վերջի մէկ ճառին մէջ շատ իրաւացիօրէն կը շեշտէր որ, „ընտրական բարեկարգումը բոլոր միւս բարեկարգումներուն բանալին է“։

Ընտրական պայքարներուն մէջ յոյները կարծես թէ ցոյց տուին ամենէն աւելի պատրաստականութիւն և հաւաքական ոգի, այնպէս որ երկիրս ազդեց նոյնիսկ Թիւրքերուն։ Ամէն տեղ աշխատեցան յաղթանակ տանիլ — պարտութիւնը ուրիշներուն ձգելով։ Եպիկուրեան ataraxie-ն, այդ անվրդով փիլիսոփայութիւնը, որ հին Յունաստանը սպաննեց, հեռու կ'երևի նոր յոյներէն։ Ցեսակ մը լարուած ջղային դրութեան մէջ են, մանաւանդ երբ կը կարծեն, որ իշխող տարրը իրենց ընտրութիւններուն դէմ կը դաւէ։ Ինչպէս հայը „անհատական“ եսի, յոյնը „հաւաքական“ եսի ժողովուրդն է, և իրեն բմբռնումի միութիւնը կը հոմանիշ հելլէն ազգայնական տեսակէտը և աշխարհահայեցողութիւնը՝ որուն շուրջը կը բոլորի, ինչպէս ակրոպոլի մը շուրջը, ամէն յոյն զգացում։

Օսմանեան կայսրութեան ամբողջականութիւնը, ահա էականը մեզ հայերուս համար. այդ յատակին վրայ պէտք է գիտնալ նկարել վարպետ և ճկուն վրձինով այն նկարը գունագեղ և ներդաշնակ, որ խորհրդանիշէ Թիւրքիան։

Դաշնակցութիւնը ազգային անկերպարան ու քաոսային վիճակին մէջ կրցաւ „պահանջներու“ պատշաճ ու բանաւոր ծրագիր մը ներկայացնել, ուր ակներև կը փայլի կուսակցութեան այժմէական դաւանանքը և ձգտումը, ժողովրդին և երկրին համար իր օգտաւէտ և մարդասէր յղացումը։

Երիտ.-Թիւրքերու ծրագիրը իր ազատական վարդապետութիւններուն մէջ խութեր ունի, որ անշարժ չկրնար անցնիլ և դուռ կը բանայ հակազդեցութիւններու և մշընջենաւոր յուզումներու։ Ըլլայ մայրենի լեզուի կամ ուրիշ ազգայնական իրաւունքներու սահմանափակումի, ըլլայ ընտրական սեսակէտով։

Ո և է ծրագիր, թէկուզ հրեղէն տառերով քանդակուած ըլլայ, չը կրնար ճնշել և վթարել, առանց պայթումի վտանգի, ազգայնական ոգին, այսինքն այն որ բնական և պատմական իրողութիւններու վրայ հիմնուած և անոնցմէ կը բղխի, ինչպէս չէ եղած և չէ յաջողած այդ բանը աւելի բարձր և քաղաքակիրթ ազգերու մէջ։ Գրչի բռնազբօս հարուածներով չէ որ պիտի փլչին այդպիսի դարաւոր նուիրագործումները իրենց հոգեբանական խորութիւնով։ Սակայն կը հաւատանք նաև որ քաղաքակրթութեան բարեշրջումին հետ, ազգայնութիւններու մտաւոր և բարոյական մակարդակին բարձրանալը վը, այնքան աւելի լուսաւոր կը դառնայ համերաշխութեան գաղափարը և կը շեշտուի ներքին ներդաշնակութիւնը և հաւասարակշռութիւնը։

Հայ ժողովուրդի իդեալականութիւնը կը ձգտի և պէտք է ձգտի այդ բարձր նպատակին. մեր շահը և մարդկային մտածումը կը պահանջեն, որ մեզ շրջապատող ցեղերը լուսաւորուին և քաղաքակրթուին։ Վտանգը տգիտութեան և նախապաշարումներուն մէջ է։ Գիտութիւնը Ռուսօյի „բնական դաշինքն“ է, որ պիտի մօտեցնէ, եղբայրացնէ այսօրուայ ազգութիւնները, որոնք երէկ իրարու արիւն կը ծծէին։

Հայ ժողովուրդը կը մնայ հայ, կը պահէ իր իսկութիւնը և իր կորովի, նախաձեռնութեան և աշխատասիրութեան ու նկարագրի հզօր բաժինը կը բերէ օսմանեան հայրենիքին։ Ան կը մնայ եղբայրական։ Մեր համակրութիւնը և սէրը անվերապահ է դէպի ազատ Թիւրքիան. մեր շահերուն անդրադարձ ու խորունկ գիտակցութիւնովն է, որ Թիւրքերուն և մեր ճակատագրակից ազգերու հետ կ'ուզենք ձեռք ձեռքի

վարել ու ակօսել համերաշխ գործակցութեան ու աշխատութեան դաշտը, ու մեր քրտինքի կայլակները խառնել մայրենի հողին մայրական ծոցին մէջ։ Փոքր Ասիոյ ապագային համար չէինք կրնար ոսկէ աւելի սրտագին ու երանաւէտ բաղձանք մը երկնել։

Օսմանեան նոր խորհրդարանը, թէ իրապաշտ տեսակէտով և թէ իդէալական սահմանին մէջ—բարեբախտ հակադրութիւն մը—պէտք է ընդունի քաղաքական հաւասարակշիռ այնպիսի վիճակ մը, ուր փայլին կայսրութեան գոյութեան և մեծութեան նախանձախնդիր մտածումներու հեռատեսութիւնը և մտահոգութիւնը։

Այն ատեն միայն Թիւրքերը կարող են իրենց Սահմանադրութեան ճակատը արձանագրել Ռվրատիոսի անմահութեան նշանաբանը *exigi monumentum*... Յիշատակարան մը, որ արդյրէն աւելի տեւական ըլլայ։

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Արևելեան հարցին հանդիսաւոր և դղրդալից բացումով, Պալքանները սկսան ճարճատիլ և դիւանագիտական աշխարհը իր բոլոր ղսպանակները լարած էն նենգամիտ մաքի՛ավէլական խաղը սկսաւ խաղալ։ Հնարամտութեան, խաբէութեան, իրար գլորցնելու ճիրիտ մըն է պետութիւններու մէջ, որուն բերանաբաց հանդիսատես է աշխարհ։ Պատմական այն փուլերէն մէկն է, որոնք տեւական և վճռական դրոշմը կը ձգեն ազգերու ճակատագրին վրայ և նոր դարագլուխ մը կը հորդեն քաղաքական աշխարհին և աշխարհայեցողութեան մէջ։ Վերջի դարու պատմութեան մէջ գրեթէ Եւրոպայի քաղաքական կարևոր և նշանակալից երևոյթները կապուած են Թիւրքիոյ ճակատագրին, որ նոյնն է Արևելեան հարցին հետ։

Թիւրքիան, որ „աշխարհակալութեան իրաւունքներով“ միայն եւրոպական ազգ մ'եղած է, և որ նկատուած էր Եւրոպայի կշտին վրայ խրած „եաթաղան“ մը, հէնց իր սկզբնաւորութեան կամ մեծութեան առջի օրէն, իր յախուռն և սպառնական արշաւանքներով, Եւրոպայի երկիւղ և ատելութիւն ազդեց։ Եւրոպայի քաղաքական ըմբռնումին հետ խառնուած էր նաև կրօնական ատելութիւնը, ժողովրդի մը դէմ, որ կաթոլիկ աշխարհին դէմ իսլամական դրօշակը կը պարզէր։ Թիւրք պետութիւնը, իր աշխարհակալի զինուորական մտայնութենէն չկրցաւ դուրս գալ, և եթէ նուաճեց այնքան տարահանգոյն աշխարհներ, այլակրօն, այլացեղ, չկրցաւ սակայն կառավարել ու իւրացնել զանոնք և կազմակերպիլ, այլ տիրեց միայն, դամոկլէսի սուրը կախելով ժողովուրդներու ծոծրակին վրայ։

Սուլթաններու բացարձակ և քմահաճ ու զեղխ իշխանութիւնը, ներքին անկազմակերպ վիճակը, զինուորական սանձարձակութիւնը, ուժերու շուայտ և անհաշիւ վայրավատնումը, կայուն և ճահճային վիճակը ժողովուրդին, որ խոտի կեանքը կապրէր, կրօնական ու ազգային անշարժութիւնը և ճակատագրական վարդապետութեան կապարային ծանրութիւնը, որ քաղաքակրթական թռիչը կը ջլատէր, արտաքին ետևէ ետև հարուածներ, Թիւրքիան դրին մահու և կեանքի յուսահատական երկայրի դրութեան մէջ. և վերջապէս, այդ հսկայ պետութիւնը, որ երբեմն ահ ու սարսափ կ'ազդէր Եւրոպային, ինկաւ նոյն Եւրոպայի խնամակալութեան տակ և բարոյապէս ու անտեսապէս հպատակեցաւ անոր, պարզ այն պատճառով, որ Թիւրքիան զուգընթաց չէր քալեց Եւրոպայի հետ, զոր արհամարեց և չգիտցաւ բնաշրջումի օրէնքը։ Օսմանեան պատմութեան սկիզբէն մինչև օրս՝ Թիւրքիոյ բնաշրջումի կորագիծը (courbe) գրեթէ միօրինակ է, ելևէջները աննշան և բարձրութիւնները պատահական և վաղանցիկ։ Թիւրքիա քաղաքակրթութեան պատմութիւն չունի, այլ վատասեռած սուլթաններու պատմութիւնը ունի—քիչ բացառութիւնով,—որոնք հեռու են ժողովուրդի մը բարոյական և խրախուսիչ օրինակ հանդիսանալէ և ցեղին ապրող էջեր ընծայելէ։

19-րդ դարու վերջին կիսուն է, որ Թիւրքիան կը փորձէ Եւրոպական մտքին հետ շփիլ և ընտանենալ, երբ արդէն երկիրը քաղաքական և տնտեսական անկման շրջանին մէջ, չունենալով ներքին ստեղծագործող ոյժը և ձեռներէցութիւնը, Եւրոպայի խնամակալ լուծին տակ կ'իյնայ, որովհետև Թիւրք տարրը ինքզինք տէր միայն դաւանելով անսահման կայսրութեան մը, գոռոզաբար հեռու կը պահէր միւս տարրերու բեղմնաւոր և օգտաւէտ աջակցութիւնը, զոր արհամարհելով բայա (հօտ) կը յորջորջէր կամ կեավուր։

Կէս դարէ ի վեր Թիւրքիան ունեցաւ հեռատես ու հայրենասէր պետական անձնաւորութիւններ, որոնք ջանացին իրենց երկրին վարկը և զօրութիւնը բարձրացնել, դնել զայն ճշմարիտ քաղաքակրթութեան ուղիին վրայ, սակայն այդ անկեղծ ջանքերը կաթիլներ էին խաւարի և թանձր տգիտութեան ովկէանին մէջ։

Այդ ժամանակ կազմուեցաւ Եւրոպայի մէջ քաղաքական երկու տեսակէտ, Թիւրքիոյ գոյութեան շուրջը, մէկը՝ Թիւրքիոյ պահպանութեան կուսակիցներն էին,—Անգլիա և Ֆրանսա, միւսը Ռուսիա՝ որ Թիւրքիոյ գոյութիւնը կ'ուզէր մէջտեղէն վերցնել։ Առաջինները կը յորդորէին Թիւրքիոյ բարեկարգել երկիրը և վերջ տալով ներքին ազգայնական տրտունջներուն ու պահանջներուն, ուժեղացնել կայսրութիւնը. անոնք ազգերու միաձուլումով Թիւրքիոյ ամբողջ ու անվթար մնալը կը ցանկային։ Ռուսիա, քրիստոնեայ ազգութիւններու առանձնաշնորհումներու պաշտպան և ախոյեան կը հանդիսանար, ուրիշ խօսքով, կը ձգտէր տարբաղադրել Թիւրքիան և անոր մէջքը կոտրել. այսպէս „Արևելեան քրիստոնեաներու պաշտպան“ տիտղոսը իւրացուց Ռուսիան և ստեղծեց իրեն համար „աւանդական քաղաքականութիւն“ մը, որու շաւիղով կը հետևի հեռաւոր նպատակին։

Երկու հակառակորդ տեսակէտներն ալ կը հետապնդէին որոշ քաղաքական շահեր։ Արևմտեան պետութիւնները չէին բաղձար որ Ռուսիան ինքզինք „հիւանդ մարդուն“ ժառանգ հռչակելով, տիրէր Պոլսոյ, որ „արևելքի բանալին“ հռչակուած է ռազմագէտներէ և շունչը առնելով Միջերկրականի ափերը՝ խանգարէր Միջերկրականի հաւասարակշռութիւնը։ Ռուսիան Նաբոլէոնի օրէն Եւրոպայի մղձաւանջ մը եղած է, թերևս օտար չէ նաև այդ նախապաշարումին մէջ, Վաթերլոյի մեծ պարտուածին այն գուշակութիւնը թէ կէս դարէն Եւրոպան կոզաք պիտի ըլլայ։ Անգլիա մասնաւորապէս, իր բոլոր դիւանագիտական ճարպիկութիւնը և ոյժը գործածեց հեռու պահելու հիւսիսային արջը իր տիրապետութեան սահմաններուն մօտենալէ, ուստի իրեն հա-

մար Թիւրքիան լուսագոյն պատուարն էր և զոհը միանգամայն մօսկովական փառասիրութեան առջև։ Խրիմի պատերազմը Արևելեան հարցի մէկ դրուագն էր ռուսական թափը կոտրելու և Թիւրքիոյ խարխուլ գոյութիւնը ապահովելու համար։

Սակայն Եւրոպան կը ցանկար, որ Թիւրքիան մեռելային պատուար մը չ'ըլլար, այլ գործօն, կենդանի, հզօր և ինքնապաշտպան, և այդ ալ կարելի էր միայն եւրոպականանալով։ Թիւրքիան հպարտ մեռել մը մնաց և իր երկրի ու իր գոյութեան պաշտպանութիւնը ձգեց օտարին։ Իսլամը կ'առկայծէր հեշտութեան մէջ ծծուող էակի մը պէս։ Եւրոպան ճարահատ՝ հովանաւորելով զայն՝ ստեղծեց երկրին մէջ բարոյական, տնտեսական և ֆինանսական ահագին շահեր, այնպէս որ երկրին ջիղը իր ափը առաւ և որու պաշտպանութեան համար, եւրոպական ամեն տէրութիւն, առանձին կամ հաւաքաբար, իրաւունք ունէր միջամտելու։ Թիւրքիոյ անշարժութիւնը, ապիկար հեղգութիւնը Եւրոպային պատրուակ տուաւ նաև որ միջամտէ ի նպաստ քրիստոնեայ ազգութիւններուն, որ մէկէ աւելի պատճառներ ունէին Թրքական անուղղայ և հարստահարիչ ըէժիմէն դժգոհ ըլլալու։ Քրիստոնեայ կրօնները և ցեղերը իրենց ինքնուրոյն կենցաղով, տրամադրութիւնով ու ձգտումով, չը կրցան հաշտիլ տիրող կառավարութեան հետ, որովհետև խորունկ անջրպետներ կը բաժնէին զիրենք։ Մէկը կը ձգտէր դիպի լոյս ու առաջադիմութիւն, կ'ուզէր ապրիլ ազատ ու լուսաւոր կեանք, միւսը կընդդիմանար և կուզէր քնել։ Եւրոպան՝ յուսահատ Թիւրքիոյ մարդ ըլլալէն, ձեռք կարկառեց քրիստոնեայ ազգութիւններուն և անոնցմէ շատերը ազատագրեց։ Այսպէս Եւրոպան կամայ-ակամայ կը դնէր Ցաճկաստանը՝ սա բիրտ երկսայրաբանութեան մէջ՝ *anatomie* կամ *autonomie*։ անդամահատութիւն կամ ինքնօրինութիւն։

Թիւրք պետական մարդիկը իրենց անկումին խոր չարիքը չէին տեսներ և զայն քրիստոնեաներու ըմբոստութեան կը վերագրէին, արդիւնքը կը շփոթէին պատճառին հետ այսպէս ստեղծեցին վարչական սիստեմ մը, ուր „ապականութիւնը“ և „սպանութիւնը“ միակ կանոնը եղան երկրին։ Վարչական այդ հրէշային և սխալ ըմբռնումը և գործադրութիւնը իր գագաթնակէտին կը հասնէր սուլթան Համիդի օրով, և որ միանգամայն Թիւրքերու պատմութեան սևերես էջը կը մնայ։ Հայկական ջարդերը, իբր վերջին արարածը այդ դժոխային թագաւորութեան, արեան գետով մը կը սահմանափակեն օսմանցիներու հին անմխիթար պատմութիւնը, որու վրայ եղերային յաւիտենական սարսուռը կը գալարուի։

***

Թիւրքիան կըսկսի նոր պատմութիւնը, աչքերը ապագային յառած, ուր ազգի մը մեծութիւնը, կենսունակութիւնը և գեղեցկութիւնը պիտի պանծայ, լոյսի թագաւորութիւնը պիտի ըլլայ, խաւարի դարերէն ու արհաւիրքներէն յետոյ, *post tenebras lux*։

Հին ըէժիմը արդէն քարուքանդ ըրած էր և Ցուդայի պէս ծախած էր երկիրը։ Ռուսական վտանգը, ծայրագոյն արևելքի պարտութիւնով, ժամանակաւորապէս հեռացած էր, բայց Թիւրքիան ուրիշ աւելի ահարկու վտանգի մը մէջ գլորած էր, որ վամպիրի պէս կը ծծէր իր արիւնը,—գերմանական արշաւանքն էր ատ։ Անգլիա, Ռուսիոյ մղումին դիմադրելու համար, Թիւրքիոյ մէջ քաջալերած էր գերմանական շահերու մուտքը, սակայն քաղաքական հակառակորդի մը տեղ իր դէմ ունեցաւ տնտեսական ահաւոր մրցակից մը, որ քանի մը տարուան մէջ, ամեն ներելի կամ աններելի միջոցներով, աշխատեցաւ տիրանալ Թիւրքիոյ կենսական աղբիւրներուն։ Փոքր Ասիոյ յուսոթի դաշտերը, բնական հարստութիւնները ու պատմական անգին հնութիւնները, գերմաններու ախորժակը գրգռած էին։ Գերմանիան հռոմէական հին կայսրութիւնը կ'երազէր. հոն լեգէոններ պիտի չուղարկէր, այլ գաղութներու *pax teutonica*-ն—գերման խաղաղութիւնը պիտի հաստատէր։ Ան մեծ սիրտ տուողը եղաւ հայկական ջարդերուն, փոքր Ասիոյ մէջ կարող առևտրական մրցակիցներ չունենալու համար և Պաղտատի երկաթուղիին մենաշնորհը խլելով, Շբրէի ափերէն մինչև Եփրատ համագերման յարդգողը կ'ուզէր կազմել, որ ագուգայի պէս Թիւրքիոյ հարստութիւնը Գերմանիա քաշէր։

Իբր եռանդուն պաշտպան համիդեան վարչական սիստէմին, Գերմանիան պատրաստ էր Թիւրքիոյ ժողովրդի ազատագրութեան համար ամեն լաւագոյն ծրագիր վիժեցնել, կոթնած Եըլդզի վրայ, ուր որջացած աւազակապետները երկիրը ծախու հանած էին։ Գերմանիան Թիւրքիա մտած էր, իբր աւարող, ինչպէս հին տևտոնները հռոմէական կայսրութեան մէջ, բայց այս անգամ զինուած գիտական ահեղ զէնքերով և միջոցներով, որոնց օսմանեան ժողովուրդը անկարող էր դիմադրել, առանց ներքին ազատութեան ու ապահովութեան։

Գերմանիոյ յափշտակասէր վարմունքը, որ փուլի չափ օգուտ չէր ընծայեր և ոչ ալ կասեցնել անջատումները, չվրիպեցաւ Թիւրք ժողովրդի աչքէն. երբ ան փշրեց Եըլդզի կործանարար ազդեցութիւնը և բռնակալութիւնը, գերմանական հմայքը ևս փլաւ ինչպէս պատրանք մը։ Քանի մը տարի ևս, Թիւրքիան կմախք մը պիտի ըլլար գերմանական գամփռին առջևը նետուած։

Ամբողջ գերման իրապաշտ քաղաքափիլիսոփայական „աշխարհահայեցողութիւնն“ է, այնքան խստասիրտ ու հէկէլեան տրամաբանութիւնով մը և գիտական հիմերու վրայ կերտուած, որ յանկարծ կը բաղխի պատմական անողոք իրականութեան, ժողովրդի մը իդէալական ալիքներուն կամ „անկշռելիին“, զոր Պիզմարկ միշտ նկատի ունէր իր սինիք քաղաքականութեան մէջ։ „Տևտոնեան կատաղը“ սահման չունի. ամբողջ կայսրութիւն մը, տնտեսական մեծ շուկայ մը, ձեռքէ կերթայ. ահա ատոր համար է որ Գերմանիան չներեր Երիտասարդ Թիւրքիային երեսդարձութիւնը և առիթ չփախցներ վրէժխնդիր ըլլալ անկէ և չը թողուլ որ սպիանան Արևելքի ցաւոտ վէրքերը եթէ հնար է պիտի օգնէ որոմել և վերահաստատել հին ըէժիմը, որ այնքան հաճոյակատար էր և առատաձեռն գերմանական շահերուն, ճիշդը չարաշահութեան։

***

Օսմանեան նոր ըէժիմը, որ անակնկալ ռումբի մը պէս պայթեցաւ Արևելքի հորիզոններուն վրայ, ուր

այնքան հակընդդէմ շահեր իրար կը հրմշտկեն, խառնաշփոթութիւն ձգեց դիւանագիտական աշխարհին մէջ. նոր զուգորդութիւններ, հայեցակէտեր առաջ եկան, թիւրք ժողովուրդը հին ըէժիմը տապալելով, իրեն համար կըստեղծէր նոր բարեկամներ ու նոր սիրահարութիւններ։ Ցենակէտերը փոխուեցան։ Երիտասարդ Թիւրքիան, թէև իմաստուն և չափաւոր իր ընթացքին մէջ, բայց չէր կարող մահոգութիւն չպատճառել երկրի արտաքին յարաբերութիւններուն ու իրաւունքներու մասին։ Կը կարծուէր որ Ազատութեան հռչակումը բաւ էր, որ Թիւրքիոյ ձեւականօրէն կամ իրաւապէս (de jure) կապուած բայց իրապէս բաժնուած երկիրները վերադառնային... մայրենի երկրին ծոցը։ Օսմանեան յեղափոխութիւնը առիթ մ'եղաւ, որ այդ օտարացած իրաւունքները միանգամ ընդմիշտ նուիրագործուին բնական օրէնքի համաձայն, ինչ որ դէպ պատեհութիւն մըն էր նաև, որ կը փրկէր Թիւրքիան անստոյգ դրութենէ մը, միջազգային կեղծիքէ մը ու պատրանքէ մը և կը դնէր զայն յստակ ու աներկդիմի սահմանի մը մէջ։

Նոր ըէժիմին լուծումին կը ներկայանային չորս ըստ երևոյթին ծանրակշիռ հարցեր—որոնք հեռու էին սփինքսեան խորհրդաւորութիւնը ունենալէ։ Պուլկարիոյ անկախութեան հարցը, Պոսնա-Հէրսէկի միացման հարցը, Կրէտէի հարցը և Նեղուցներու հարցը։

Պուլկարիան վաղուց է որ կը պատրաստուէր խզել Թիւրքիոյ հետ իր թոյլ հպատակութեան կապը և հռչակել Պուլկարիան թագաւորութիւն. ադոր համար հարկաւոր էր Եւրոպայի հաւանութիւնը։ Նպաստաւոր առիթ մը հարկաւոր էր տրամաբանական երևոյթ մը տալու ձեռնարկին։ Սեպտ. 12-ի միջադէպը, երբ Պուլկարիոյ գործակալը Կէշօֆ, Թիւրքիոյ արտ. գործոց Նախարարին կողմէ չը հրաւիրուեցաւ դիւանագիտական ճաշկերոյթին, երկու երկիրներու մէջ լարուած յարաբերութիւն մը ստեղծեց, զոր աւելի արծարծեց Արևելեան Ռումէլիի գիծը, որ Թիւրքիոյ կը պատկանի։ Պուլկարիա շատ վճռական էր և յանկարծակիի բերաւ Եւրոպան, այնպէս որ մինչև իսկ պատրաստ էր պատերազմի, եթէ ոևէ ընդդիմութիւն ցոյց տրուէր։ Պուլկարիա թագաւորութիւն է այժմ և Ֆերդինանդ իշխանը հոկտ. 5-ին Թրնովոյի մէջ, Պուլկարներու հին մայրաքաղաքը, „Ցար" տիտղոսը ստացաւ։

Կէշօֆի միջադէպը կը հաստատի թէ մեքենայութիւն մըն էր սուլթանի կողմէն, որպէս զի գժտութիւն և բարդութիւն ստեղծելով երկրին մէջ վարկաբեկէ Երիտ. Թիւրքիան։ Եըլդըզի մաքիավէլը իր սանձը կը կրծէ և կ'երազէ վերադարձը այն օրերուն, երբ... խօսքերէն արիւն կը կաթէին, երբ բացարձակ տէրն ու դատաւորն էր 25 միլիոն ժողովուրդի, երբ իր կամքը կը գահակալէր ազգերու ճակատագրին։

Վեհապետը, հակառակ իր երդումներուն, որ ջրի պէս կը խմէ, առերեսս հաշտուած կ'երևի նորազատ պայմաններուն և կարծես կը մրմնջէ ողբագին.

„Հոգիս ծառաի է առեան"...

Պուլկարիոյ հարուածը նախապատրաստուած ձեռնարկ մըն էր Աւստրիոյ հետ, Գերմանիոյ և թերևս Ռուսիոյ գիտութիւնով։ Էրէնթալ, որ Մեթերնիկի դերը խաղալ կ'ուզէ, ճարպիկ և յանդուգն մատներով խմորեց դէպքերը։ Անմիջապէս յետոյ Աւստրիան՝ Պոսնա-Հէրսէկը, զոր Պերլինի դաշնագրով ժամանակաւորապէս գրաւած էր՝ անդորրութիւնը վերահաստատելու համար, պաշտօնապէս կը միացնէր իր թագին։ Իսկ իբր փոխարինութիւն Նովի-Պազար սանձագը, որու վրայ կիսահսկողութիւն ունէր... ետ կը դարձնէր Թիւրքիոյ իբր... „փոխարինութիւն", չըսելու համար իբր... հեգնութիւն։

Ֆրանսուա-Ժոզէֆ, իր արքայական յայտարարութեան մէջ, պոսնա-հէրսէկցիներուն քաղաքական լիուլի իրաւունքներ կուտայ և ինքնօրէն կ'ընէ զանոնք, իբր „քաղաքականապէս այլևս հասունցած" տարրեր։ Կայսրը այդ փութկոտ քայլով կ'ուզէր առջևը կտրել երկրին մէջ ծագում առած խլրտումին. տեղական սերպ բնակիչները կը ձգտէին Սերպիան, իսկ իսլամ տարրը դէպի նոր Թիւրքիան։ Մահմեդականները շատ հաշտ աչքով չեն նայիր քաղաքական այդ յաջողութեան վրայ, որովհետև կայսրութեան մէջ սլաւ տարրը աւելի կը զօրացնէ, քան ինչ որ իրենք չեն ցանկար կամ իրաւունք էր որ Հունգարիոյ միանար այդ երկիրը։

Կրէտէն նոյնպէս ինքզինք հռչակեց Յունաստանի միացած. դարաւոր երազն էր կրէտացիներու, որ պիտի իրագործուէր. բայց խոհեմութեան համար Կրետէն — աւելի զգաստ քան երբէք—կրսպասէ չորս խնամակալ մեծ պետութիւններու հաւանութեան և բարեհաճութեան, որ չուշանար անշուշտ։

Ուրեմն միաժամանակ Աւստրիան, Պուլկարիան և Յունաստանը առանց պուտ մը արիւն թափելու, որոշ քաղաքական առաւելութիւններ ձեռք կը ձգէին... ի վնաս Թիւրքիոյ, որ միշտ քաւութեան նոխազն է եղած Արևելքի մէջ։

***

Թատերական այդ հարուածները իրենց արձագանքը ունեցան քաղաքական աշխարհին մէջ, մասնաւորապէս Անգլիոյ մէջ, ուր մեծ յուզում պատճառեց։ Անգլիան կը նկատէր այդ արարքները իբր բռնաբարում մը միջազգային դաշնագրերուն, զոր ոտնակոխ կ'ընէին։ Այդ երկիրները կապ ունին Պերլինի դաշնագրութեան հետ, և աւելի „եւրոպական" հարց են քան մասնաւոր։ Աւստրիան ինքնագլուխ, առանց եւրոպայէն խորհուրդ հարցնելու, խզելով դաշնագիրը ստեղծեց կոպիտ նախընթաց մը, ուրեմն միջազգային ոևէ դաշնագիր զերծ չէ ասկէ յետոյ կամայական բռնաբարումներէ. ով որ ինքզինք զօրեղ կրզգայ իրաւունք ունի ուզած ատեն անտեսել իր խոստումը։ Անգլիա „կատարուած իրողութիւնը" չէ որ կ'ուրանայ, այլ կը պնդէ միջազգային իրաւունքի բարոյական սկզբունքի մը գոյութեան վրայ, առանց որու ազգերու մէջ վստահութիւնը և համերաշխութիւնը չիք պիտի ըլլար։ Ահա այդ սկզբունքով Անգլիա կ'առաջարկէ, Ռուսիոյ և Ֆրանսիայի հետ, որ եւրոպական դեսպանախորհուրդ մը գումարի Պերլինի դաշնագիրը վերաքննելու համար։ Աւստրիա և Պուլկարիա „ուղղակի" բանակցութիւնով Թիւրքիոյ հետ ուզեցին խնդիրը անուշի կապել առանց եւրոպական միջամտութեան։ Գերմանիա, պահելով առեղծուածային դիրք մը, քայլառքայլ կը հետևի իր „հաւատարիմ երկրորդին" Աւստրիոյ, որուն կռնակ է իր բոլոր ուժովը։ Գերմանիան յայտնի

կամ ծածուկ Երիտասարդ Թիւրքիային դժուարութիւններ կաշխատի յարուցանել *ab irato*, ան չներեր, որ Թիւրքերը զինք լքէին և Անգլիոյ յարէին... այդքան ապերախտօրէն. չէ՞ որ Գերմանիան էր որ հայկական կոտորածներուն փրկեց Թիւրքիան եւրոպական միջամտութենէ... „Թիւրքիան հին Թիւրքիան չէ, կ'ըսէր գերման պետական անձնաւորութիւն մը, որ նուազ ազնիւ եղաւ դէպի Գերմանիան։ Մեր բացառիկ բարեկամութիւնը դէպի Թիւրքիան աւելի անցեալին պտուղն է քան ներկային"։ Աւստրիա իբր „բարեկամ և դաշնակից" աւելի թանկ էր քայլերին համար։

Ռուսական արտ. գործոց նախարարը Իզվոլսկի շրջան մ'ըրաւ Եւրոպայի մէջ և ունեցաւ երկար խորհրդակցութիւններ բոլոր պետութեանց նախարարութիւններուն հետ։ Այդ դիւանագիտական պտոյտը, որ գլխու պտոյտ կարող էր տալ, նպատակ ունէր յաջողցնել միջազգային դեսպանախորհուրդը և միանգամայն ապահովել Ռուսաստանի համար որոշ „փոխարինութիւններ", նեղուցներու բացման խնդիրը ևն, ինչպէս նաև ջատագովել հաւանաբար Պալքանի սլաւ ազգութիւններուն իրաւունքները։ Իզվոլսքիի յաջողութիւնը Պերլինի մէջ միջակ եղած ըլլալ կը թւի. Գերմանիա՝ անգլօ-ֆրանս-ռուսական պրոկրամը չ'ընդունիր կամ վերապահութիւնով և իր ձայնը կըստորագրէ Աւստրիային, չ'ընդունիր նաև ոչէ հողային „փոխարինութիւն" Սերպիային։ „Թիզ մը հող չենք տար", կը պոռան աւստրիացիք։

Երևոյթները կը մատնեն, որ Ռուսիան թերևս Անգլիոյ յատուկ պահանջին վրայ, կը հրաժարի Նեղուցներու խնդիր յարուցանել է, գոնէ առ այժմ. սակայն դիւանագիտական դաւադրութիւնով մը, Ռուսաստանը կը պատրաստուի Պարսկաստանէն թաթել Ատրպատականի եթէ ոչ ամբողջ նահանգը, գոնէ հիւսիսային մասը թէպրիզով. արդէն սկսած է այդ անիրաւ ձեռնձգութեան պատրուակները ձևակերպել և դասաւորել։ Գայլին ու գառին յաւիտենական առակն է, որ կը կրկնուի Զրադաշտի հայրենիքին մէջ։

Ինչպէս կը տեսնուի, Արևելեան հարցը, Արևելքի քաղաքական քարտէսով նոր ձևափոխում մը կրելու երկունքին մէջ է։ Լուր կայ, որ Թիւրքիային ևս Պարսկաստանէն „փոխարինութիւն" մը պիտի ըլլայ, հաւանօրէն Ուրմիոյ գաւառը կցուի Թիւրքիոյ, ուր արդէն մտած էին օսմ. զօրքերը։ Արդեօք Նովի-Պազարէն Սերպիոյ հողային շերտի մը փոխարինութի՞ւն է։ Ապագան կը պարզէ այդ։ Խեղճ Պարսկաստան։

Դիւանագիտական աշխարհը իր բոլոր խարդաւանանքներով, խորամանկութիւններով սպառազէն խուլ ճակատամարտ մը կը մղէ։ Վա՜յ յաղթուողին։ Առ այժմ Աւստրիան միջազգային ինտրիկների բունը և առանցքն է։

Թիւրքիան սկզբունքով համակերպած է եղածին, որ ուշ կանուխ պէտք էր ըլլար արդէն։ Իզուր է կեղծ վայնասուններ բարձրացնել և սրդողներ ունենալ։ Ծուռ նստինք շիտակ խօսինք։ Թիւրքիան նոյն անհաճոյ և անարդարադատ դիրքը բռնեց ճիշտ պարսկական նորածին սահմանադրութեան ոգևորութեան ատեն, իր բանակը և արիւնռուշտ քիւրդերը Ուրմիա լեցնելով։ Բարոյական վեհանձնութիւնը և արդարասիրութիւնը կապ չունի քաղաքական շահերու հետ։ Ամեն տեղ քաղաքականութիւնը լիրբ է, ըլլայ Դանուբի ափին կամ Վոսփորի՝ միևնոյն է։ Պօսնա-Հերսէկը ձեռքէ ելած էր, զոր Աւստրիան 30 տարի է կը կառավարէր և մէկ միլիառ ծախք ըրած է բարեկարգելու համար այդ երկու նահանգները։ Պուլկարիան անկախ էր իսկապէս, ունէր իր ուժեղ և ինքնավստահ բանակը և առանձին դիւանագիտութիւնը։ Կրէտէն արդէն անդառնալիօրէն կորսուած։ Թիւրքիան այս ամենէն յուսահատ էր, ուրեմն միանգամ ընդմիշտ կ'ազատի կեղծ ու պատիր վիճակէ մը, որուն լծած է 30 տարիէ ի վեր և կը մտնէ իր դրական և անառարկելի իրաւունքներու սահմանին մէջ, և ոչէ պատերազմ այդպիսի պատմական փաստերու դէմ, պիտի ըլլար ինքնասպանութիւն։ Իսկ Թիւրքիոյ ու Պուլկարիոյ մէջ պատերազմ մը, ամենասխալ և աղէտաբեր քայլը և միանգամայն վերջաբանը պիտի ըլլար Երիտասարդ Թիւրքիային, որուն դէմ ներքին և արտաքին այնքան դաւեր կան և որ պէտք ունի երկար և յաժառ խաղաղութեան երկրի բարոյական ու նիւթական ոյժը ամրացնելու համար, եթէ չուզեր ետ դառնալ և գայլին պուկը իյնալ։ Հաշտարար և ողջամիտ քաղաքականութիւնը—առանց ստերի ետևէ վազելու—ահա ինչ որ պէտք է պայմանաւորէ այս բոպէիս Թիւրքիոյ կացութիւնը, որ շատ փափուկ և միանգամայն դիւրաբեկ հանգամանք ունի։ Բարեբախտաբար՝ երկու դրացի պետութիւններն ալ ըմբռնելով պատերազմի ցաւալի և անդարմանելի հետևանքները, կը ջանան — հակառակ կողմնակի մռտումներու—հաշտարար կերպով կարգադրել ուղղակի բանակցութիւնով, խնդրոյ առարկայ եղող կէտերը, որ առհասարակ ֆինանսական են։ Բանակցութիւնները ետառաջ կը շարունակուին։ Իրանի թէ համաձայնութիւնը էւելպակաս կայանար և խնայուէր երկու դրկից ժողովուրդներուն... արիւնի դառն բաժակը։

***

Պալքաններուն մէջ վտանգը չէ անցած սակայն, Սերպիա և Մոնթէնէկրօ հաշտ չեն եղած կարգադրութիւններուն և գրգռուած են Աւստրիոյ դէմ՝ Պօսնա-Հերսէկի „ապօրինի" միացումին համար, որու բնակչութիւնը սերպեր են և որ սերպ ցեղին պատմական օրօրանն է եղած։ Սերպիա մինչև իսկ սպառնաց պատերազմ յայտարարել նախընտրելով „փառքով փճանալ" քան թոյլ տալ, որ իր ցեղը ստրուկ ապրի Աւստրիոյ բռնութեան տակ։ Մինչև իսկ կըսպասուէր, որ կարող է Սավայի ափերուն վրայ „յուսահատական" կռիւը պայթիլ։

Սերպ ժողովուրդը նկատուած է թեթև և կրակոտ, իր հոգուն մէջ ունի յոռետեսութիւն մը և յուսալքում մը, որ ընդունակ կ'ընէ զինքը արկածային խենթութեան։ Գահաժառանգ Իշխանը հէնց թարգմանն էր իր ցեղին, երբ այնքան խելայեղօրէն կը յայտարարէր թէ „խարազանի հարուածներով պէտք է վանել գերմանները, մաճառները Պօսնա-Սէրայէն"։

Սերպիա ցամաքին ներսը կաշկանդուած Աւստրիոյ տնտեսական ստրուկն է գրեթէ և դատապարտուած է անոր *Fourches Caudines*-ի տակէն անցնելու, ուրկէ ազատելու համար տարիներէ ի վեր կը ճգնի։ Սերպ ժողովուրդը հպարտ է իր անցեալով և այն բանով, որ Պալքաններուն մէջ ինքը առաջինն եղաւ որ ազատութեան դրօշը բարձրացուց և ազատագրուեցաւ իր սեփական ուժերով

ու հերոսական կռիւներէ յետոյ, զոր կ'երգեն ժողովրդական աշուղներ եղերական քնարներու—„կուսլա"-ներու—վրայ։ Սերպերը ազատելով չմոռցան իրենց սերպ եղբայրները, որոնք Աւստրիոյ լուծին ակ են։ Բոլոր սերպերը իրենց աչքերը յառած են Պելկրատ „Սպիտակ բերդը", որու վրայ խաչը կը բարձրանայ երբեմնի մահիկին տեղ։ Սերպիան կ'երազէ Պիէմոնտը ըլլալ եուկօ-սլաւ պետութեան մը։ Տուշանի կայսրութիւնը, որի օրով Սերպիան իր զօրութեան և փառքի գագաթնակէտին հասաւ, դեռ կը լլկէ սերպ երևակայութիւնը և երգերը։ Մեծ-Սերպիոյ կամ համասերպ գաղափարը հետզհետէ լայնութիւն և խորութիւն կըստանայ որ ոչ նւազ մտահոգութիւն կը պատճառէ իր հզօր դրացիին և թերևս եկած է ժամանակը, որ իրագործուի սերպ զինանշանի չորս U-երու ոգին, թէ „միայն Միութիւնը կ'ազատէ սերպերը"։

Աւստրիան գրաւելով Պոսնա-Հէրսէկը ոտք հանեց աշխարհը։ Մոնթէնէկրո, նոյնպէս սերպ իշխանութիւն մը, սպառնոտ դիրք բռնած է Աւստրիային հանդէպ։ Սերպիոյ և Մոնթէնէկրոյի միջև նիզակցութիւն մը կնքուած է՝ ի հարկին „յուսահատական" կռիւը մղելու սերպերու իրաւունքներուն համար, յոյս դնելով նաև Ռուսիոյ վրայ որ համսլաւութեան մեծ պաշտպանն է։ Այս բոպէիս Ռուսիոյ մէջ սլաւ աշխարհի ապագայի մասին մեծ յուզում կը տիրէ։ Գերմանականութեան և սլաւականութեան խուլ պայքարն է որ սկսած է դարձեալ։ Գարատաղը՝ ապառաժ այլ ամուլ լեռներու մէջ ամրացած, ուր ոչ մէկ յաղթական ոտք չէ կոխած, կը պահանջէ որ ազատ ըլլայ Աւստրիոյ անիրաւ կաշկանդումէն. կը պահանջէ որ Պերլինի դաշնագրութիւնը իր մասին բարեփոփի կամ ջնջի և Ճանչցի բացարձակ անկախ։ Սերպ աշխարհի յուզումը կամ „սերպիական կասկածը" չհանդարտիր։ Աւստրիոյ դէմ ատելութիւնը կը յարաճի, Գարատաղի լերկ սարերը կ'արձագանքեն „դօլեէ Աւստրիա" — կորսուի Աւստրիան, նոյնը և Սերպիոյ մէջ։ Աւստրօ-սերպ յարաբերութիւնները միջազգային հրատապ և զգայուն կէտը կը մնան. արդէն Դանուբի ափերուն վրայ երկուստեք պատերազմի շանթերը կը դարբնեն։

Կըսպասուի որ Դեսպանախորհուրդը գումարուի և գոհացում տայ Սերպիոյ և Գարատաղի արդար պահանջներուն։ Սերպիոյ համար կենսական է ճամբայ մը ունենալ դէպի Ծով՝ ազատ և անկախ ապրելու և միանգամայն կարենալ արտածելու համար իր արդիւնաբերութիւնը, փոխանակ Աւստրիայէն կախուած մնալու, որ զզուելի դեր կը կատարէ ճնշելով սերպերու ազգային արժանապատուութիւնը և զգացումը, և. պատրաստելով անոր „յամր օրհասականը"։ Ուրեմն հարկաւոր է Պոսնա-Հէրսէկի կամ Նովի-Պազարի մէջէն հողային շերտով մը Սերպիան կապել Մոնթէնէկրոյին, որ սակայն այժմէն խիստ դժուարութիւններու կընդհարուի, որովհետև Սերպիոյ ուժեղացումով պատուար կը քաշուի Աւստրօ-գերմանական յառաջխաղացութեան առջև դէպի Արևելք և միանգամայն համասերպ գաղափարը նոր թռիչ կըստանայ։ Չէ՞ որ պալքանեան փոքրիկ պետութիւնները կ'երազեն հին դասական... մեծութիւնները, մանաւանդ այս.. վիպական դարուն։ Մեծ Պուլկարիա, Մեծ Սերպիա, Մեծ Յունաստան։ Ոչ ոք փոքր մնալ կ'ուզէ այս... փոքր աշխարհին մէջ։

***

Նեղուցներու հարցը, այն է Վոսփորի և Տարտանէլի բացումը և ռուսական մարտանաւերուն ազատ ելումուտը, կենսական հարց է Ռուսիոյ համար, որ միջազգային դաշնագրերով Սև Ծովէն դուրս չկրնար ելլել։ Ռուսիա կը պահանջէ Եւրոպայէն վերջ տալ այդ անճահ և խեղդուկ դրութեան, որ կը շարունակի կէս դարէն աւելի է։

1833-ին Նիկոլա ցարը, սուլթան Մահմուտէն իրաւունք ձեռք բերաւ ռուսական մարտանաւերու ազատանցքը երկու նեղուցներէն, մինչդեռ միւս ազգերու մարտանաւերը արգիլուած էին. այսպիսով իր նաւատորմը Սև Ծովի մէջ զերծ կը մնար ոևէ օտար յարձակումէ և միանգամայն ինք կարող էր Միջերկրական արշաւել ու ետ փախչիլ ապահով։

1841 յուլիս 13-ին, միջազգային համաձայնութիւնով մը Եւրոպան ստիպեց Դուռը, որ նեղուցները փակուին բոլոր ազգերու նաւերուն առջև, որով Սև Ծովի ռուս նաւատորմը անկարողութեան մատնուելով հետզհետէ ինկաւ։

1856-ի Փարիզի վերհաժողովին, Սև Ծովը չեզոք հռչակուեցաւ և արգիլուեցաւ Ռուսաստանի ոչ մարտանաւ պահել հոն ոչ ալ զինուորական նաւահանգիստ։ Ռուսաստանի նաւատացումն էր։ Եւրոպան ամեն գնով կ'ուզէր Միջերկրականը զերծ և հեռու պահել ռուսական վտանգէն։

1870-ի Ֆրանսիայի պարտութիւնով, Ռուսիա իրաւունք ստացաւ Սև Ծովու իր կայսրութեան ափերը ամրացնել և պատերազմանաւեր ունենալ, բայց նեղուցներէն հրաման չունէր անցնելու։

Ռուս-Ճաբոնական պատերազմի ատեն, հակառակ կրկնակի ջանքերու, թոյլ չտրուեցաւ ռուս նաւատորմին դուրս ելլել և միանալ Ծայր. Արևելքի նաւատորմին։

Այժմ օգտուելով նոր դէպքերէն Ռուսիա ամեն ջանք և կերպ կ'ընէ, որ վերանայի Սև Ծովու մասին դաշնագիրը և նեղուցներու արգելքը վերցուի, որու պատճառով Սև Ծովու իր ծովային զօրութիւնը չզարգանար։

Եւրոպան շատ հակամէտ չթուիր։ Անգլիան որ Ռուսաստանի էն մեծ հակառակորդը եղած է և փակ շիշի մը պէս Սև Ծովուն մէջ կռած զայն դուրս չէր հաներ, անգլօ-ռուս համաձայնութենէն յետոյ, որոշ այլ վերապահ տրամադրութիւն ցոյց կուտայ գոհացում տալու Ռուսաստանին. վերջին խօսքը սակայն ձգելով Թիւրքիոյ որ նեղուցներու բանալիներն ունի։

Թիւրքիոյ համար կենսական նշանակութիւն ունի այդ հարցը ռուսական զրահաւորները մէկ օր կարող են Պոլսոյ դէմ գալ տնկուիլ և սպառնալու պահանջել... Բիւզանդիոնի ժառանգութիւնը. այդ վախը կը քալէ Թիւրքերու սրտին մէջ և իրաւացիօրէն։

Այդ մասին թերևս կարգադրութեան մը յանգին—եթէ Ռուսիային ուրիշ կողմէ փոխարինութիւն մը չ'ընեն—բայց ոչ այն ձևով, որով Ռուսիան միայն ինքզինքէ կ'ուզէ ունենալ նեղուցներէն անցնելու առանձնաշնորհումը, այլ որ բոլոր ազգերու զրահաւորները երթան և եթէ հարկ է հակակշռեն ռուսական կասկա-

ծելի քայլերը։ Ատով վտանգը չ'անցնիր, թերևս աւելի կը բարդոտի և Պոլիս եւրոպական միակ մայրաքաղաքը կ'ըլլայ, որ գտնելով „փորձութեան ճամբուն վրայ“, ամենէն աւելի ենթակայ կը դառնայ ոչ է և արտաքին անակնկալ թշնամական հարուածի մը։

Նոր դաշնագրութիւնը մը պէտք է նախատեսէ բոլոր անպատեհութիւնները, պատահականութիւնները և հաւանական վտանգները, որոնք կը պայմանաւորեն Թիւրքիոյ ապահովութիւնը։

Բայց պլատոնական և հովանաւորող դաշնագրերէն դուրս Թիւրքիան իր ապահովութեան և գոյութեան երաշխիքը իր ներքին քաղաքական և հասարակական համերաշխ ուժին ու կենսունակութեան մէջ որոնելու է։ Այդ է իր ճշմարիտ պալատիօնը։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԱՆԸՆԿՃԵԼԻ

Թիւրքիոյ սահմանադրական անցուդարձերը եկան պահ մը վարագուրել մեր աչքերէն Պարսկաստանի մէջ յեղափոխական պայքարը, որ կը մղի Շահի կառավարութեան դէմ, և ուր „միլլէթիները“ ու „տէվլէթիները“ Իրանի ճակատագիրը պիտի որոշեն։

Թէպրիզ առաջին և վերջին միջնաբերդը կը հանդիսանայ Պարսկաստանի ազատական խռովքին. այս րոպէիս հոն կեդրոնացած է նոր Պարսկաստանի յեղափոխական փոքրիկ ոյժը որ հերոսական ու հիանալի ճակատամարտը կը մղէ Շահի բռնաւոր ոտնձգութիւններուն և անոր աւարառու լէշկէրներուն դէմ և միանգամայն վառ ու կենդանի պահելով սահմանադրական ոգին, կարծես արդարացնելով առևտրական մեծ քաղաքին աւանդական անունը—„Դա ի վրէժ“։

Մէհմէդ Ալի Շահը, որու գահը „երկնքի ասպանդակն է“, սնած ու կրթուած իր նախնիքներու զօրպի ու սուսերային յիշատակներով, որոնք կեանքի և մահու արիւնոտ կամայականութիւնը ունէին իրենց դժբախտ հպատակներուն վրայ, հէնց գահը բարձրացած օրէն չը կրցաւ հաշտիլ Մէշրութային հետ, որ Պարսկաստանի ազատութեան նէվրուզը,—նոր թուականը կը բանար և սանձ կը դնէր ապերասան քմայքներու ու ժողովրդի վիզէն կը փշրէր ստրկութեան ու թշուառութեան անուրը։ Շահը կը սիրէր դառնալ Պարսկաստանի հին դրութեան՝ երբ քաճար հարստութեան ղեկավարները հեշտութեան մէջ կը լողային և երկրի հարստութիւնը կը գործածէին անմարդկային ու շայտ քմահաճոյքներու, առանց երկրին փուլի չափ դրական օգտակարութիւն մը ընծայելու։ Կարելի է ըսել թէ „արեգակնափայլ“ շահերու պետութիւնը այն երկիրն է, ուր կը պակսի պետական սկզբունքի տարրական գիտակցութիւնը և կիրառութիւնը և ուր ամբողջ ժողովուրդ մը կ'ապրի տգիտութիւնով և կեղծիքով։

Շահին ու մէճլիսին մէջ մահու և կեանքի պայքարը սկսաւ — առաջին օրէն իսկ։ Առաջինը խարդաւանանքի բոլոր զսպանակները լարեց. քանիցս փորձեց պետական հարուածով վերջ տալ „Մէճլիսի“ գոյութեան, իրեն դէմ մահափորձեր եղան, սակայն իր զինուորական ոյժի պակասը արգելք եղաւ, որ Շահը շուտ իրագործէր իր մտադրութիւնը։ Միւս կողմէն Պահարիստանի պալատին մէջ, որու դարաւոր սօսիներուն վրայ սոխակները իրենց վայրի ու գինով երգերը կը „կիւլիստանեն“, պարսիկ երեսփոխանները Իրանի թշուառ ժողովրդին տարտամ երազանքը, „խայալները“ կը ջանային ձևակերպել, առանց հաստատ կուսակցութիւն մը ունենալու, և ուր փայլեցան սակայն ժողովրդական մէկ քանի պերճախօս դէմքեր, որ պատիւ կը բերէին Մէճլիսին։

Մէճլիսին յանդուգն որոշումները, հզօր ընդդիմադրութիւնը շահական կամայականութիւններուն, էնճիւմէններու ազատասէր խլրտումները—երբեմն „շուլուխները“, — սպառնալիքները անհանգիստ ըրին Շահին քունը։ Սա իր ետև ունէր Ռուսիոյ նենգամիտ աջակցութիւնը և իր թիկնապահ կազակներու հրամանատարը, Լիախով, ռուս անպայ սպայ մը, որուն կոթնած էր Շահը իր եղեռնային ազատասպան ծրագրի իրագործման համար։

„Իմ նախնիքներս սուրով ձեռք բերած են այս գահը, կը յայտարարէր Մէհմէդ Ալի Շահը, և սուրով միայն ետ կը դարձնեմ“։ Պարսիկ վեհապետին սոյն սպառնալիքը, ուրկէ արիւն կը հոտի, ցոյց կուտար որ քաճար իշխանները ինքզինքին օտար կըզգային և թշնամի Իրանին, և դեռ քսաներրորդ դարու մէջ իսկ և... անկլօ-ռուսական քաղաքակիրթ հովանաւորութեան տակ, կը շարունակէին անգութ և ագահ քաղաքականութիւնը, քաճար հարստութեան հիմնադրին, Աղա Մահմուտ խանի, որուն „սիրտը այնքան կարծր էր, որքան մարմինը“։

Իր շուրջը հաւաքած բոլոր յետադէմ, հարստահարիչ ու մարմնապաշտ տարրերը, որ Պարսկաստանը օրրանը դրած կ'օրօրէին ու անոր արիւնը կը ծծէին, տապալեց Սահմանադրութիւնը, ոմբակոծել տուաւ Ազգ. Խորհրդարանը և գլխատել կամ խեղդել տուաւ կարող և մտաւոր ոյժերը, որոնք Պարսկաստանի ամայութեան մէջ մէյմէկ փայլուն աստղեր էին, խափանեց բոլոր լրագիրները, — այսօր Պարսկաստանը ոչ մէկ լրագիր չունի—ցրուեց ու տարագրեց ազատական տարրերը, որոնցմէ շատերը փախան արտասահման։ Պարսկաստանը ինկաւ նորէն իր նախկին անփառունակ և ողբալի թմրած վիճակին մէջ։ Այս րոպէիս Թէհրանը „սօսիներու այդ քաղաքը“, կեանքէ ու շարժումէ զուրկ մեռելային երևոյթ մը կը ներկայացնէ, որուն վրայէն կարծես Ահրիմանի շունչը անցած ըլլայ։ Ազատութեան մեղրալուսինը քիչ տևեց և սահմանադրութիւնը ապրեցաւ „շուշանի մը կեանքը, որ Իրանի մթին ջրհորները կը բոլորեն“։

Միակ կուսանը կը մնար Թէպրիզը, ուր ազատութիւնը „պաստ“ կը մտնէր և իր դրօշակը կը տնկէր։ Թէպրիզն էր, որ ազատութեան „փէշէնկը“ հանդիսացաւ և յեղափոխութեան առաջին նշանը տուաւ, հոն էր որ կազմեցան էն ազատամարտիկ և գոռ էնճիւմէնները, որոնք ժակօպէնները կը յիշեցնէին ֆրանսական յեղափոխութեան։ Ամբողջ Պարկաստանը այս րոպէիս անշարժ, լուռ և կրաւոր, դաւադիր անջրպետներով պաշարուած, Թէպրիզն է միայն, որ կրսպառնայ բռնակալութեան և կը

կուի արիաբար Իրանի սահմանադրութեան համար։

Բռնակալ կառավարութիւնը օգտուելով ժողովրդի այս անզգայ հանգամանքէն, կը կարողանայ իր ոյժը կեդրոնացնել Թէպրիզի շուրջը՝ զսպելու ափ մը քաջասիրտ մարտիկները, որ ահա քանի ամիս է, անպարտելի կը մնան Շահի զօրքերէն։ Ի զուր Շահը անոնց դէմ կը ղրկէ հիւսիսային գարափափախները, շախսէվանները և պախտիարիները, այդ բախտախնդիր ու արիւնարբու աւազակակոյտը, որ ոչինչ ունին ասպետական, այլ միմիայն աւարառութեան համար կը փութան կուի, և որ փոքրիկ անյաջողութեան մը պահուն, պատրաստ են իրենց ոտքերը ուսերնին նետելու։ Ազատութեան փոքրիկ բանակը անձնատուր չը լլլար, կը պահանջէ Շահէն նախ վերահաստատել սահմանադրութիւնը եւրոպական ձևով, ուրկէ յետոյ յօժարութիւնով իր զէնքերը վար կը դնէ, երբ հայրենիքը ազատ է. իսկ Շահի սպառնալիքները, կեղծ խոստումները կորեկի չափ ազդեցութիւն չեն ըներ։ „Մահ կամ Ազատութիւն“, ահա այն խրոխտ նշանաբանը, որ Թէպրիզը — որու վրայ կը սաւառնի Պապիի վերջին շունչը—լսելի կ'ընէ Իրանի ժողովրդին և աշխարհի։

Թէպրիզի կուռողներուն հրամանատարը և հոգին է Սատտար խան, որ Շահնամէի Ռիւստէմին չափ երգուելու արժանի քաջասպետ հերոսի մը կորովը և ռազմութիւնը ցոյց կուտայ, թէև իր կուրծքը չկրէ „յովազի մորթէ զրահը“։ Ցարդ Սատտար խան բարձր բռնած է յեղափոխական դրօշակը, որուն առջև կուգան ետևէ ետև փշրուիլ Շահին լէշկէրները։ Թէպրիզը անառիկ ու անընկճելի կը մնայ և իր վրայ յառած են Պարսկաստանի բոլոր սահմանադրական ու առաջադէմ տարրերու ուշադրութիւնը, հիացումը և յոյսը։

Բահիմ խանէն յետոյ, Այն էլ Ցօվլէն, սիփահտարը, չարաչար պարտուած ձգած փախած է։ Յեղափոխականները Թէպրիզի մէջ կացութեան տէրն են։ Քաղաքին արքայական ու յետադիմական ոյժերը զինաթափ ու անձնատուր եղած են յեղափոխականներուն, ուրեմն մինչև որ Շահը, նոր սիփահտարը, Ֆիրման Ֆիրմանը ճամբէ, այդ իր աչքին փուշ եղող քաղաքը նուաճելու, Ազատութեան առաջապահը—և վերջապահը միանգամայն —պիտի կարողանայ վերակազմիլ, նոր ոյժ առնել և պաշար հաւաքել նոր ու աւելի հզօր դիմադրութիւններու համար։ Որովհետև երկար կուի և պաշարումի հետևանքով, քաղաքին գործունէութիւնը կանգ առած և թշուառութիւնը դռները ափ առած էր։

Ամեն կողմէ ջանքեր կ'ըլլան նիւթական ու բարոյական օգնութիւններ հասցնելու Սատտար խանին։ Պոլսոյ պարսիկ գաղութը բողոքի և սպառնալիքի հեռագիր տուած է Շահին, միւս կողմէն ազգային հանգանակութիւն բացած է Թէպրիզի յեղափոխականներուն օգնելու համար։ Պարսիկ կիները, „էնտէրունի“ այդ տարաբախտ հուրիները, որոնք աստուծոյ արևին և մարդկութեան առջև դատապարտուած էին երեսնին սաւանելու, ազգասիրական նախանձելի եռանդ ցոյց կուտան։ Անոնք հանրագրութիւնով մը կաղերսեն Անգլիոյ և Ռուսիոյ վեհապետներուն, որպէս զի յանուն մարդասիրութեան միջամտեն և նոր արիւնհեղութիւններու առաջքը առնեն։ Իսկ պարսից դեսպանը, Միրզա Ռիզա խան „Արևելեան գոհարներու“ բանաստեղծ հեղինակը, 400 ոսկի նուիրած է Թէպրիզի հերոսին...

Շիա կրօնի ամենաբարձր հոգևորականութիւնը, որ Քէրպէլայի մեծ տաճարին ոսկեղէն գմբէթին տակ, նահատակ իմամ Հիւսէյնի գերեզմանին վրայ կը հսկէ, ձայն կը բարձրացնէ ի պաշտպանութիւն Սահմանադրութեան։ Մասնաւոր շրջաբերական կամ կոնդակ մը հրատարակելով „ճիհատ“ կը հռչակէ Շահին դէմ և կը հրամայէ պարսիկ ժողովրդին չը հնազանդիլ անոր իբր „քեաֆիր“, որ կը բռնաբարէ հաւատացեալներու իրաւունքը։

Պարսիկ ազատական շարժումը, զոր սուլթան Համիդ ամեն ճիգ և նենգամտութիւն թափեց մեռցնելու համար, արձագանք գտած էր թիւրքերու մէջ. այժմ պարսիկները իրենց լքումին մէջ, փոխադարձաբար օսմանեան սահմանադրութեան հռչակումով նոր սիրտ և նոր կորով կըստանան իրենց վաղամեռիկ ազատութեան իրաւունքները ձեռք բերելու համար։ Պարսիկ հոգևորականութիւնը, որ առաջին սահմանադրութեան խոյանը և յետոյ հակառակորդը հանդիսացաւ և նպաստեց անոր քայքայումին, երբ իր կրօնի շահերուն վտանգ կռահեց, այժմ դարձեալ ազատութեան պաշտպանի հովերը կառնէ իր հեղինակաւոր կրօնապետներու բերնով, որոնց քաղաքական հասկցողութիւնը դժբախտաբար հզօր և անպարտելի երաշխաւորութիւն մ'ըլլալ չթուիր ազգային գերագոյն ճգնաժամին, երբ Պարսկաստանը ստիպուած է քաղաքակրթութեան սալին վրայ դարբնել իր գոյութեան աշխարհիկ սկզբունքները։

Շահը ինչքան հպարտ զգայ իր քաճար նախնիքներով, որոնք սակայն, ըստ հեղինակաւոր պատմագիրներու, Պարսկաստանը այլասերեցին և անոր տուին մահացու հարուածը, և ըստ Մալկոլմի, հարէմներու նախիրին մէջ իրենց մարդկային էութիւնը նուաստացուցին—կըզգայ իր շուրջը պտուտքող խուլ ատելութիւնը, որ իր մէջ վրէժի ելէքտրացումներ ունի։ Աւելի ահէն ու անկուտիութենէ, քան անկեղծ փափաքէ մըղուած, խոստացաւ շուտով խորհրդարանական նոր ընտրութիւն կատարել։ Սակայն ժողովրդին հաւատքը անգամ մը խախտած է իրեն մասին, և եթէ առիթը և ոյժը ունենայ՝ Մէհմէտ Ալի շահը պատրաստ է միշտ իր երդումը ուտել։

Իրեն առջև փակուած են փոխառութեան դռները. անգլօ-ռուսական համաձայնութիւնը կը զլանայ իրեն այդ շնորհը, մինչև որ երկիրը չ'օժտուի բարեկարգ և պատասխանատու վարչութիւնով մը։ Շահը ճարահատ, ձեռք նետեց ազգային գանձարանին վրայ, ուր մթերուած են արևելքի էն թանկագին և պատուական գոհարները, մեծ-մօնկոլներուն գահը, որ գին չունի, աշխարհացոյց մը, ուր երկիրները նշանակուած են հազուագիւտ ակունքներով, իսկ Պարսկաստանը հիանալի ադամանդով մը.—որ սակայն հեռու է համապատասխանելէ Շահնշահներու երկրի... փառքին և փայլունութեան։ Շահը փորձեց եւրոպական պանքաներու մէջ գրաւ դնել այդ ազգային հարստութեան նշխարները և փոխառութիւն մ'ընելով կուիլ... իր ժողովրդին դէմ։

Շահը ուրեմն սպասողական դիրքի մէջ է. ներկայ դրութեան մէջէն ելլելու համար ոչ հանճարեղ ճարպիկութիւնը ունի, ոչ նիւթական միջոց. իր դժբախտ

յոյսը դրած է վարձկան և խուլիգան սարպազներուն վրայ, նաճելու ըմբոստ Թէպրիզը և ջնջելու ընդմիշտ ազատութեան այդ բոյնը։

Երկրի ներքին և արտաքին դրութիւնը կըսկսի տագնապալից ըլլալ. ափ մը հերոսներու սխրագործութիւնները հազիւ արձագանք կը գտնեն պարսիկ ժողովրդին մէջ. կարևոր և ղեկավար ոյժերը փախած են արտասահման, հոգևորականութիւնը կասկածելի է քիչ բացառութիւնով։ Յետադիմական տարրերը անողոքօրէն կը մահացնեն երկրին կեանքի երակները. համատարած խաւարի ու թշուառութեան թագաւորութիւնն է նորէն որ գիշերի մը պէս կը պատանքի դժբախտ Իրանի վրայ, որ չը կրցաւ պրծիլ Զրադաշտի „դրուժանի“ տիրապետութենէն։ Անգլո-ռուսական համաձայնութիւնը, որ տեսականապէս բաժնեց Պարսկաստանը քաղաքական ազդեցութեան սփիւռներու, անոր „ամբողջութիւնը և անկախութիւնը“ պահելու կեղծիքին տակ, ոչինչ կրցաւ ընել կամ ըրաւ անոր վերականգնումին համար։ Անգլիա, հակառակ իր բարեացակամ երևոյթներուն, կ'ետակի Ռուսաստանէն, որուն շիլ դիտաւորութիւնները Պարսկաստանի վրայ իր արջութաթը դնելու համար, գաղտնիք չեն։

Արևելեան հարցի սուր զարթնումին—եթէ ոչ բռընկումին—երբ չարագուշակ զուգորդութիւններ կը կատարուին դիւանագիտական աշխարհին մէջ, „նօվոյէ Վրէմիա“ կը յայտարարէ որ սահմանագլխի անվերջ խռութիւններուն պատճառով, որ կը վտանգեն ռուսական վաճառականութիւնը, Ռուսիա պիտի ստիպուի իր վրայ առնել խաղաղացումը և գրաւել Ատրպատականի նահանգը, եթէ դրութիւնը չը փոխուի։ Այս յօդուածը, ուր կառավարական ներշնչումը կը հոտի, տմարդի դաւաճանութեան ամենամեծ ապացոյցն է ռուս կամ առհասարակ դիւանագիտութեան, որ կը ճնշէ մղձաւանջի մը պէս մարդկային խղճին վրայ։

Ո՞ւր է հին Արեաց աշխարհը, երբ „մաքուր կրօնի“ ատրուշանները կը վառէին, երբ մազդէականութիւնը իր մաքրատենչ սկզբունքները կը վարդապետէր „մաքուր մտածում, մաքուր խօսք, մաքուր գործ“, երբ Դարեհ կառավարական կազմակերպ և քաղաքական սիստէմի ըմբռնումը կը մտցնէր քաղաքական գիտութեան մէջ, երբ արքայից արքային „աչքերը“ կը հսկէին երկրին հեռաւոր անկիւնները։ Ոչինչ մնացած են հին փառքերէն ու յիշատակներէն. թշուառութեան, տրկութեան, տգիտութեան ու անգութ բռնակալութեան սև օրերն են որ կը ծանրանան պարսից աշխարհին վրայ։

Ստութեան ու անարժան ըէժիմին դէմ է, որ Պարսկաստանի նոր սերունդը, եռանդով ու ազնիւ հայրենասիրական իդէալով մը յափշտակուած, կը մաքառի և կը փորձէ վերահաստատել Իրանի պատիւը և դնել զայն քաղաքակրթութեան ու մարդկայնութեան շաւղին մէջ։

Սատտար խանը ոգին կը հանդիսանայ կռուող Պարսկաստանին, որուն շուրջը պէտք է բոլորուին, վեհագոյն ներշնչումով մը, ազատութեան բոլոր բարեկամներն ու ախոյեանները։ Ոճիր պիտի ըլլար չքանչանալ այդպիսի հերոսական ու անձնուէր կռիւ մը վրայ, ուր ափ մը քաջեր վճռած են փրկել Ազատութեան դրօշակը և որ Պարսկաստանի նորագոյն պատմութեան համար անտրտում և փառապանծ էջերը կը դիւցազներգեն...

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՕՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԻՒՐՕՅԻ X ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հոկտեմբերի 11—13-ին Բրիւսէլի մէջ տեղի ունեցան միջազգային սոցիալիստական բիւրօյի նիստերը։ Ներկայ էին ի շարս բազմաթիւ պատգամաւորների՝ Էդ. Վայեան (Ֆրանսիայից), Կարլ Կաուցկի և Մոլկենբուր (Գերմանիայից), Հայնդման (Անգլիայից), Վիկտոր Ադլեր և Պերնեստորֆեր (Աւստրիայից), Նեմեչ (Բոհեմիայից), Բուխինգեր (Ունգարիայից), Անզել և Ֆիւրնեմոն (Բելգիայից), Վանկոլ (Հոլանդիայից), Ռուբանովիչ և Լենին (Ռուսաստանից)։

Ընկ. Վարանդեան ներկայացնում էր Հ. Յ. Դաշնակցութիւնը (Ռուսաստանի սոց.-յեղ. ենթասեկցիայի մէջ)։

Հոկտեմբերի 10-ի երեկոյեան *Maison du Peuple*-ի հոյակապ սրահում տեղի ունեցաւ բացման մեծ միտինգ, մի քանի հազարաւոր բազմութեան ներկայութեամբ։ Այդտեղ միջազգային սոցիալիզմի ձեռնհաս ներկայացուցիչները խօսեցին համաշխարհային քաղաքականութեան օրւայ տագնապալի խնդիրների մասին, մասնաւորապէս Արևելեան ճգնաժամի շուրջը։ Կառավարութիւնների, եւրօպական բուրժուազիայի գիշատիչ ախորժակների ու ազատասպան փորձերի հանդէպ՝ կարմիր Ինտերնացիոնալը պէտք է դիրք բռնէր յստակ ու վճռական. և նա շեշտեց, յանձին բոլոր երկրների սոցիալիստ պատգամաւորների, իր ջերմ, անվերապահ համակրանքը դէպի օսմանեան ազգերի ազատագրութիւնը, վճռելով կռիւ մղել այն բոլոր գործօնների դէմ, որոնք ձգտում են միջազգային բարդութիւններ ու պատերազմներ յարուցանել, խեղդելու համար սահմանադրական ազատութիւնները։

Զարթ, տօնական տրամադրութիւն էր *Maison du Peuple*-ի մէջ. բեմի վրայ շարէշար բազմած էին միջազգային սոցիալիզմի ներկայացուցիչները և երկսեռ հսկայական բազմութիւնը երեք ժամ շարունակ խորին ուշադրութեամբ կլանում էր հռետորների իւրաքանչիւր խօսքը։

Տաճկաստանը, կարելի է ասել, մեին էր այդ գեղեցիկ միտինգի. բոլոր դէմքերի վրայ կարդում էինք համակրանքի զգացած արտայայտութիւններ դէպի նորածագ ազատութիւնները, բռնակալական լուծը թօթափած ժողովուրդների ճակատագիրը... Եւ երբ նախագահը իբրև երկրորդ հռետորի, ամբիոն հրաւիրեց Հ. Յ. Դաշնակցութեան պատգամաւորին, որ ի միջի այլ պարտաւորութիւնների, ողջոյն էր բերել Տաճկաստանի իր ընկերներից — ահագին դահլիճը թնդաց բուռն ու երկարատև օվացիաներով։ Թէև մեծ մասամբ անգիտակ մեր իրականութեան, բազմութիւնը կռահում էր, անշուշտ, որ այդ ցոյցերի առարկան մի կազմակերպութիւն է, որ անքաւ արիւն է տուել այն զարհուրելի աշխարհում, այն նորաբողբոջ ազատութիւնների համար... Եւ չէր սխալուում...

Վարանդեանն ասաց.

„Հայ Յեղ. Դաշնակցութեան ողջոյնն եմ բերում ձեզ, քաղաքացիներ,—մի կուսակցութեան, որ 18 տարուց ի վեր մղում է դժուարին կռիւը Տաճկաստանում սուլթանական բռնապետութեան դէմ և որի նախաձեռնութեամբ ստեղծուեց ամիսներ առաջ օսմանեան

կուող ֆրակցիաների համերաշխութիւնը. եղբայրական ողջո՛ն ձեզ Կ. Պոլսի ու փոքր Ասիայի մեր ընկերներից։

„Այդ ողջոյնը և կոչ է միաժամանակ, որովհետև նա գալիս է վտանգալի մի վայրկեանում. Տաճկաստանը նորէն գալարւում է տագնապի մէջ, կապիտալիստական ընչաքաղց պետութիւնների կամքով... Թւում է թէ մի նոր „Սրբազան Դաշնակցութիւն“ է կազմւած, նոյն գլխաւոր դերակատարներով և նոյն էական առաքելութեամբ՝ խեղդել նորածին ազատութիւնները խանձարուրի մէջ։

„Դուք ամենքդ խանդավառութեամբ ողջունեցիք այն մեծ անակնկալ իրողութիւնը, որ այսօր իշխում է ամբողջ միջազգային քաղաքականութեան վրայ,—Օսմանեան Յեղափոխութիւնը։ Այդ անակնկալը իրօք փատալ, անխուսափելի հետևանքն է մօտ քսան տարւայ ճիգերի, ամենօրեայ պրօպագանդի, որ մղել են քրիստոնեայ ու մահմեդական ազգերի գիտակից տարրերը։ Առաջինները շարժման նախակարապետներն էին և առաջապահը։ Բայց քանի դեռ նրանք մենակ էին կռւի դաշտում, նրանց ճիգերը խորտակւում էին, թէ բռնութեան և թէ եւրօպական պետութիւնների դաւերով։ Երբ, սակայն, մահմեդականներն ասպարէզ եկան—ազատութեան դատն արդէն ապահովւած էր։

„Այսօր այդ դատը յաղթական է։ Պատմութեան մէջ եզակի այն բռնակալութիւնը, որ դարերից ի վեր ճզմում էր իր լծի տակ քսան միլիոնաւոր ազգաբնակութիւն՝ այսօր արդէն յաղթահարւած է։ Այն տիրանը, որի լոկ անունը յարուցանում է ձեր մէջ մարդկային հեկատօմբների զարհուրելի յիշողութիւններ և որ քանիցս այստեղ իսկ, բելգիական պարլամենտում, հայոց չարաշուք ողբերգութեան օրերում, մեր քաջարի ընկեր Վանդերվելդի ու այլոց բերնով խարանւել է ու մկրտւել մարդասպան ու այլ որակումներով—այսօր նա վինաթափ է, գերի յեղափոխութեան ձեռքում։

„Եւ դա մի հսկայական երևոյթ էր, քաղաքացիներ, պատմութեան մէջ չը տեսնւած բերկրանքի ու խանդավառութեան մի եզակի տեսարան, ուր ժողովուրդները, դարերով ստրկացւած, բաժանւած divide et impera-ի ամենաանխիղճ քաղաքականութեամբ, դարերով լցւած փոխադարձ ատելութեամբ՝ միանում էին եղբայրական գրկընդխառնումների մէջ և ուխտում էին երբէք թոյլ չը տալ բռնակալութեան վերադարձը։

„Մի նոր դարագլուխ բացւեց բազմաչարչար Թիւրքիայի համար—վերածնութեան, նիւթական ու մտաւոր պրօգրէսի դարագլուխը, որ վերջապէս, հնարաւոր կը դարձնէ այդ հալածական ժողովուրդների համար քաղաքական ու սօցիալական բնականոն զարգացումը. և շատ չի անցնի, մենք յուսով ենք և հաւատում ենք, որ Ինտերնացիոնալի Կարմիր դրօշը կը ծածանւի նաև այն մռայլ ու դժբախտ վայրերում, որոնք երկար դարերի ընթացքում ճաշակել են միայն ստրկութիւն ու տառապանք. շատ չի անցնի և մենք կը տեսնենք, որ սօցիալիզմի գաղափարները—որոնք արդէն նւաճել են մեր ինտելիգենտ դասակարգի լաւագոյն մասը — կը գտնեն լայն տարածումն և ժողովրդական զանգւածների մէջ, որոնք բնազդով իսկ, իրենց բովանդակ կացութեամբ իսկ՝ ըմբոստներ են ամեն տեսակ ճնշումների դէմ, թէ բռնակալական, թէ կապիտալիստական։

„Եւ սակայն, ահա, քաղաքացիներ, նորէն չարագուշակ ամպեր հորիզոնում։ Բուրժուազական Եւրօպան, որ, անտարակոյս, չի մարսում ժողովուրդների թռիչքները ստրկութիւնից դէպի ազատութիւն, դաւում է օսմանեան ազատութեան դէմ։ Զգալով, որ այսուհետև այլ ևս չը պիտի կարողանայ ազատօրէն գոհացում տալ իր դասակարգային ախորժակներին, ազատօրէն ու առատօրէն շահագործել հարստութիւնների լայնածաւալ երկիրը, որ Աբդիւլ Համիդը կտոր-կտոր վաճառում էր յօգուտ իր անձնական դրամարկղի ու իր հարեմի—պետութիւնները, Աւստրօ-Ունգարիա և ուրիշներ, շտապում են պղտորել ջուրը, իրենց մակեաւելիկ ծրագիրներն իրագործելու համար...

„Այո, հէնց նոյն վայրկեանին, երբ տարաբախտ ազգաբնակութիւնները այնքան ջերմապէս կարօտում են խաղաղութեան՝ վերաշինելու համար իրենց քաղաքական ու սօցիալական կեանքը. նոյն վայրկեանին, երբ ներքին մութ, յետադէմ տարրերը փնտրում են մի պատրւակ, մի դիվերսիօն՝ վերականգնելու նախկին ռէժիմը—հէնց այդ վայրկեանին է, որ բուրժուազական պետութիւնները գալիս են անյաղթելի խոչընդոտներ ստեղծելու Տաճկաստանի վերանորոգիչներին, գալիս են բորբոքելու պատերազմի ու ռէակցիայի ախորժակները, որոնց մէջ կուլ կերթան այնքան ճիգերով նւաճւած ազատութիւնները։

„Քաղաքացիներ, սօցիալիստական աշխարհը չի կարող հանդուրժել այդ տեսակ եղեռնափորձեր։ Նա չի կարող թոյլ տալ իր անտարբերութեամբ նորանոր ոճիրներ։ Մենք կոչ ենք անում Ինտերնացիոնալին, ձեզ բոլորիդ՝ առնել ձեր բարձր հովանաւորութեան տակ Տաճկաստանի երիտասարդ ազատութիւնների դատը։ Մենք կոչ ենք անում առանձնապէս Գերմանիայի մեր սօցիալիստ ընկերներին՝ ի գործ դնել իրենց հզօր ազդեցութիւնը Բերլինում, կայզերական կառավարութեան վրայ, որը համարւում է Բոսֆորի ափերում, մեր յեղափոխական շրջաններում, իսկական spiritus movens-ը այն բոլոր հակամարդկային ոճրափորձերի (Crimes de lèse-humanité) որոնք կատարւել են 10 տարուց ի վեր Տաճկաստանի թշւառ ժողովուրդների դէմ։

„Թո՛ղ Ինտերնացիոնալը զարկէ ահազանգը և թող բոլոր երկրներում սօցիալիստ կուսակցութիւնները յուզեն հանրային կարծիքը։

„Եթէ անգամ ձեր ճիգերն ապարդիւն անցնեն, քաղաքացիներ, ապա գէթ կը կատարէք սօցիալիստական ձեր պարտականութիւնը հանդէպ այն կուող ու տանջւող ժողովուրդների, որոնք այս արևմտեան աշխարհում, այս զառամեալ քաղաքակրթութեան մէջ, որ խաւարել է կապիտալիստական ախորժակների շղթայազերծ բռնկումով—մէկ բարեկամ, մէկ կարեկից միայն ունին—սօցիալիստական Ինտերնացիոնալը“։

Համակրանքի ու դրւատումի նոյն խանդավառ ցոյցերով ընդունւում է նաև այդ կոչը։ Ապա խօսք է տրւում Բուլգարիայի սօց. պատգամաւոր Ավրամովին։ Նա կատաղօրէն յարձակւում է իր ազգային բուրժուազիայի վրայ, որ ուզում է միացնել Մակեդոնիան, հռչակում է Բուլգարիայի անկախութիւն ևն։ Ավրամով դէմ է այդ

անկախութեան։ „Այդ տեսակ մտքերի հոսանքների հետ, ասում է նա, սոցիալիստական կուսակցութիւնը ընդհանուր ոչինչ չունի“։

Բուլգար սոցիալ-դեմոկրատ ներկայացուցչի այդ խօսքերը, ըստ երևոյթին, մեծ հետաքրքրութիւն են յարուցանում։ Բազմութեան մի մասը ծափահարում է, միւս մասը սկեպտօրէն ձեռնպահ է մնում... Թւում է նոյնիսկ շատ էլ անկեղծ չէ այդ յայտնութիւնը...

Յետագայ հռետորները, միանգամայն սխալ են յայտարարում բուլգար պատգամաւորի այդ կարծիքը։ Ագլեր և Վայեան շեշտում են, որ Բուլգարիայի անկախութեան հրատարակումը ինքնին դրական ու առաջադիմական մի իրողութիւն է։ Նրանք մերկացնում ու նշաւակում են եւրօպական մեծ պետութիւնների և բուրժուազիայի ընթացքը։

„Կապիտալիզմը, ասում է Վայիան, ծնում է ամենուրեք նոյն ոճիրները. Կլեմանսօն անգամ, որ ինքզինքը բարեկամ է ցոյց տալիս Երիտասարդ Թիւրքիային, պատրաստ է դաւաճանել այդ վերջինին, բուրժուազական գաղթականութեան ծրագիրները նպաստաւորելու համար“։

„Անհրաժեշտ է, շարունակում է հռչակաւոր կօմունարը, կուռել միջազգայնօրէն կապիտալի բոլոր սպառազէն ուժերի դէմ։ Պրոլետարիատը պէտք է լինի պահապանը տիեզերական խաղաղութեան“։

Հայնդման, անգլիական սոցիալիզմի ծերունի առաջամարտիկը, խարանում է բրիտանական ազատամիտ կառավարութեան քաղաքականութիւնը, որ հնարաւոր դարձրեց համաձայնութեան դաշինքը ռուսական բռնակալութեան հետ։ Անգլիացի մի այլ պատգամաւոր, Գլազիէ, աշխատաւորական կուսակցութիւնից (Labour Party) ողջունում է Թիւրքիոյ ու այլ երկրների նորածին ազգերին և սոցիալիստ կուսակցութիւններին, յոյս է յայտնում, որ շուտով եգիպտական ու հնդկական սոցիալիստներ ևս հրապարակ կը գան ու կը ձգտեն ազատել իրենց երկրները անգլիական կապիտալիզմից։

„Խաղաղութիւնը սոցիալիզմի անկեղծ ու խորունկ բաղձանքն է։ Չը կայ աշխարհում մի աւելի մեծ անարգանք, քան այն՝ որ զինուած մի ազգութիւն գրոհ է տալիս մի ուրիշի վրայ, նրան ջարդելու նպատակով։ Խաղաղութիւնը նախապատրաստելով, մենք ստեղծում ենք ամենահոյակապ գործը համամարդկային պատմութեան“...

*

Յաջորդ օրը Բիւրօյի նիստերն են։ Օրակարգը բռնուած է ամբողջապէս կազմակերպական խնդիրներով։ Երկար թեր և դէմ վիճաբանութեան առարկայ է լինում Անգլիայի Independent Labour Party-ի (Անկախ աշխատաւորական կուսակցութեան) ընդունելութեան հարցը։

Անգլ. սոց.-դեմոկ. կուսակցութեան պարագլուխ Հայնդման խնդրում է չ'ընդունել այդ կազմակերպութիւնը սոցիալիզմի շարքերի մէջ, պատճառաբանելով, որ նա մաքուր սոցիալիստական չէ և յաճախ համաձայնութիւններ, կօմպրոմիսներ է անում բուրժուազական հատուածների հետ։

Շատ քչերն են, սակայն, միանում Հայդմանի պատճառաբանութեան։ Ինքը Կաուցկին, ուղղափառ մարքսիզմի թէօրիտիկոսը, թէպէտ և ընդունում է, որ Անգլիայի հզօր աշխատաւորական կուսակցութիւնը ի դէմս իր ծանօթ ղեկավարների (կեր Հարդի և այլն) յաճախ տալիս է անգիտակից, ոչ-դասակարգային քաղաքականութեան ապացոյցներ, թէպէտ և հրապարակով շիտակ ու վճռական կերպով չի խոստովանում դասակարգային, պրոլետարական տեսակէտը, այնուամենայնիւ ընդունելի է սոցիալիստական Ինտերնացիոնալի մէջ, քանի որ նա իրօք de facto իր տնտեսական ու քաղաքական պայքարներով կանգնած է դասակարգային հողի վրայ, մղում է պրոլետարական, հակաբուրժուական մի կռիւ։

Կաուցկու բանաձևը ընդունեց ձայների ճնշող մեծամասնութեամբ և Labour Party-ն իր հսկայական ճիւղաւորութիւններով վերջնականապէս ընդունեց սոցիալիստական կուսակցութեան ընտանիքում։

Բուռն վիճաբանութիւնների նիւթ եղաւ և ներկայ քաղաքական կացութիւնը։ Ընդունւում է համարեա միաձայն ֆրանսիական սոցիալիստների մի բանաձևը, որ ի նկատի ունենալով պատերազմի վտանգի յարատևումը, մեծ, բուրժուական պետութիւնների մըշտնջենական դաւերը Մարոկկոյում, Բալկաններում, Ցաճկաստանում, և շեշտելով, որ սոցիալիզմը, կազմակերպուած աշխատաւորութիւնը միակ ազդու ուժն են միջազգային խաղաղութեան,—հրաւիրում է բոլոր երկրների սոցիալիստ կուսակցութիւններին՝ „կրկնապատկել իրենց հսկողութիւնը, գործունէութիւնն ու ճիգերը“. հրաւիրում է պարլամենտական սոց. հատուածները՝ միջազգային սոց. Բիւրոյի հետ „ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ՝ պատերազմը կանխելու և խաղաղութիւնն ապահովելու համար“։

Քանի գնում, միշտ աւելի պարզւում է, որ կապիտալիստական ներկայ քաոսային աշխարհի մէջ՝ մէկ ուժ միայն կայ, քաղաքակրթութեան մէկ ճըշմարիտ ու հաւատարիմ սպասաւոր միայն, որ ջերմապէս, անկեղծօրէն ու ազնիւօրէն պաշտպան է կանգնում միջազգային խաղաղութեան, մերկացնելով ու ժողովուրդների ուշադրութեանը մատնելով պետութիւնների ու նրանց գիշակեր հրամանատարների հակաժողովրդական, նողկալի դաւերը։ Այդ ոյժը Սոցիալիզմն է, — բուրժուազիայի պատուհասը պարլամենտներում ու հրապարակում։

Ոչ մի կասկած՝ որ ֆրանսիական կառավարութեան ձեռնարկած Մարոկկեան արկածալի արշաւանքը յանգեց իր ներկայ համեմատաբար խաղաղ վախճանին՝ գլխաւորապէս, նոյնիսկ կարող ենք ասել, բացառապէս շնորհիւ ֆրանսիական սոցիալիստական կուսակթեան և նրա տաղանդաւոր առաջնորդ Ժօրէսի մշտնջենական միջամտութիւններին, մերկացումներին ու յարձակումներին։

Ոչ մի կասկած՝ որ արևմտեան երկու մեծ երկրների, Անգլիայի ու Գերմանիայի յարաբերութիւնները ևս ազատեցին իրենց երբեմնի սուր ու վտանգաւոր կերպարանքից դարձեալ շնորհիւ սոցիալիստական կուսակցութիւնների ջանքերին, որոնք շարունակ, իւրաքանչիւրը իր հայրենիքում խարազանում են միլիտարիզմի ու պատերազմների պաշտպան տարրերին... Մենք տեսանք նոյնիսկ մոտիկ անցեալում, անգլօ-գերմանական յարա-

բերութիւնների ամենախիստ լարման ընթացքում— տեսանք, ինչպէս գերմանական սոցիալիստները Լոնդոն փոխադրուելով, կազմակերպեցին խաղաղութեան ու ազգերի հաշտութեան բազմամարդ ցոյցեր անգլիական սոցիալիստների հետ, և ինչպէս այդ վերջինները իրենց հերթին Բերլին գնալով, կազմակերպեցին համանման ցոյցեր, ընդդէմ ռազմատենչ կապիտալիզմի և յօգուտ տիեզերական խաղաղութեան...

Բիւրօն նորից անցաւ ընդունելիք նոր կազմակերպութիւնների հարցին։

Վիճում են սիօնիստ-սոցիալիստների ընդունելութեան խնդրի շուրջը Կաուցկի, Ադլեր և մի շարք ուրիշներ դէմ են խօսում։ Գրեթէ միաձայն մերժւում են սիօնիստ-սոցիալիստները, իբրև չեղած, ֆիկտիվ մի կուսակցութիւն։

Վարանդեանը թիւրքահայերի մասնակցութեան հարցն է յարուցանում։ Թէև, ասում է նա, Շտուտգարտի անդ ցեալ տարուայ նիստի որոշմամբ Թիւրքիայում գործող Հ. Յ. Դաշնակցութեան հատուածը կարող է մասնակցել համաշխարհային սոցիալիստական կոնգրէսներին միմիայն ուրիշ օսմանեան տարրերի ներկայացուցիչների հետ, բայց նկատելով այդ միւս տարրերի համեմատական յետամնացութիւնը կուլտուրական ու սոցիալիստական տեսակէտից, առաջարկում է ընդունել Ինտերնացիոնալի մէջ ենթասեկցիայի ձևով մի ուրոյն ներկայացուցչութիւն թիւրքաց Հայաստանից Հ. Յ. Դաշնակցութեան համար։

„Մենք կը ձգտենք, ասում էր Վ., աստիճանաբար ու համերաշխութեան պրոպագանդով գրաւել և մեր մահմեդական հարևաններին դէպի նոր սոցիալական գաղափարները, բայց այդ գործի աջողութեան համար, հարկ է, որ մեզ այժմից իսկ տրւի մասնակցութեան իրաւունք։ Սպասել մինչև հարևանների հասունանալը— ոչ արդար կը լինի, ոչ էլ բանաւոր։“

Կարճատև խորհրդակցութիւնից յետոյ, Բիւրօն միաձայն ընդունեց „Դաշնակցութեան“ առաջարկը և տուեց Թիւրքաց Հայաստանի ներկայացուցչութեանը՝ 4 ձայնի իրաւունք։

Այնուհետև նոյնպէս միաձայն ընդունուեց բելգիական ընկերների և նախագահ Դը Բրուկկերի խմբագրած մի բանաձևը Յաճկաստանի ազատագրութեան առթիւ, որ յայտարարում է.

„Միջազգային Սոցիալիստական բիւրօն բերկրութեամբ ողջունում է անկումը այն քստմնելի ռէժիմի, որի տակ Աբդիւլ Համիդը այնքան երկար ժամանակ պահել էր Յաճկաստանը պետութիւնների մեղսակցութեամբ, ողջունում է կարելիութիւնը, որ ունին այսուհետև այդ ընդարձակ պետութեան ժողովուրդները՝ վարելու իրենց ճակատագիրը, ողջունում է այն նորագոյն ազատութիւնները, որոնք թոյլ կը տան նորածին պրոլետարիատին՝ մղել իր դասակարգային կռիւը սերտ միութեամբ համերաշխային պրոլետարիատի հետ“։

Դրանով և փակեցին X Միջազգային Սոցիալիստական Բիւրօյի նիստերը։

Միւս օրը տեղի ունեցաւ այլ և այլ երկրների սոց. պարլամենտական ներկայացուցիչների նիստը. իսկ երեկոյեան—հրաժեշտի փառահեղ մի երեկոյթ, ի պատիւ օտար պատգամաւորների, նոյն Maison du Peuple-ի հոյաշէն դահլիճում, ուր Բրիւսէլի առաջնակարգ արուեստասէրների ու երգիչների ներկայութեամբ, որոտաց բելգիական համբաւաւոր սոցիալիստ առաջնորդ Անդէլի ձայնը,— մի ուժեղ ու յուզիչ ճառ (*allocution*) գեղարուեստի ու սոցիալիզմի մասին։

„Արտիստնե՛ր – գոչում էր Անդէլ—դուք պարտաւոր էք աջակցել մեզ՝ ազատագրելու աշխատաւոր մարդկութիւնը իր տնտեսական ու հոգեկան շղթաներից... Իսկ եթէ չէք գայ—*tant pis!* Ինչպէս որ մենք տնտեսական ու քաղաքական հողի վրայ դարբնել ենք մեր մաքառման գործիքները—կօօպերատիվներ, սինդիկատներ, մարտական կազմակերպութիւններ—այնպէս և պիտի արտագրենք մեր սեփական արտիստներին, որոնք կ'երգեն աշխատաւորի ծովացած վիշտը և հերոսական աշխատամարտի գոռ դրւագները...

Անդէլ լռեց. երգեցիկ խումբը բեմի վրայ հնչեցրեց „*Internationale*“-ը, բանւորական մարսելիէզը և ամբողջ դահլիճը, ելէքտրականացած, երկրորդեց խմբին, նոյն մարաշունչ յանկերգը որոտալով...

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ՏՕՔԹ. ՄԱՆԱՍԷ ՉԷՎԻԿԵԱՆ

(ՄԱՆԱՍ)

Տարւած յաղթանակի այս փառաւոր օրերում, երբ յարգանքի և յիշատակի մեր վերաբերումը կը յայտնենք Դաշնակցութեան քաջարի նահատակ գործիչներուն, տխուր հարկը կը զգանք արձանագրելու հեռաւոր անկիւններում,



բռնապետութեան անգութ մագիլներում զոհուած մի դաշնակցական զօրեղ գործիչ և։

Դա Մանասն է, տօքթ. Մանասէ Չէվիկեան, խորհրդակիցն ու մտերիմը Արմենակ Գարակէօզեանի, ինկած անձնազոհութեան նոյն գերագոյն ճանապարհին վրայ։

Նա ծնեալ է Պոլսում, Օրթա-գիւղի մէջ, 1880-ին. եղած է դժբախտ զաւակ տառապանքի և նեղութեան, ականատես հայկական կոտորածներուն. իր ծնողքը ինչպէս և ինք միշտ խաղալիք են եղած բռնապետութեան, և լինելով գիտակից ուսանող կեդրոնական և Օսմ. Բժշկական վարժարաններու, շուտով ընդգրկած է յեղափոխականի ապարէզը և նետուած կռուի ու պրոպագանդայի արիւնոտ ճանապարհում։

Տօքթ. Մանաս ճիշտ մի տարի առաջ կ'աւարտէ իր բժշկական ուսանողութեան ընթացքը և վարժարանի վարչութեան որոշումով կը մեկնի դէպի Բեթլեհեմ իբրև քաղաքապետական բժիշկ։ Տխուր, անորոշ և յուսահատ մտածումներու տակ նա կը թողու Պոլիսը՝ տանելով իր հետ յեղափոխական ազատ մտքերու մի մեծ պաշար։

Բեթլէհէմում նա կը գտնէ մի քիչ լաւ միջավայր, բայց հազիւ գործի սկսած՝ Պոլսում կը ձերբակալեն ընկերներ, կը կատարուի խիստ խուզարկութիւն, և բռնապետութեան գինուորները ընկերներէն մէկի թղթերուն մէջ կը գտնեն Մանասի լուսանկարը։

Եւ ահա Բեթլեհեմ կը հասնի ձերբակալման խիստ հեռագիրը, և Մանաս երկրորդ անգամ ըլլալով ինքզինք դէմ առ դէմ կը գտնէ համիդական ճնշող, մռայլող, անողոք բռնապետութեան առջև։

Ծանծէ, անարգանքէ և ճնշումէ յետոյ զինքը նաև կը դնեն ոստիկանութեան արդար ատեանին առջև հանելու համար։

Ալ պէտք է երևակայել, մի յեղափոխական՝ շղթաների մէջ, ոստիկաններու հսկողութեան տակ։ Ո՞վ գիտէ, որպիսի չարչարանքներու, տանջանքի խլ յուսահատութեան տակ նա կ'որոշէ մեռնել չ'ըսելու համար իր ընկերներու անունները, չը յայտնելու համար այն կազմակերպութիւնը, զոր ինքը թողած էր Պոլսում և նա կը դիմէ անձնազոհութեան միջոցին, կը խմէ թոյն և հանգիստ խղճով կը սպասէ վերջին վայրկենին։

Իրարանցումը կը տիրէ շղթաների մէջ և նաւապետի կարգադրութեամբ զինքը կը հանեն Մէրսին, ուր բանտի մէջ, անյոյս և անմխիթար, իր խնամ խշտեակին վրայ կ'աւանդէ հոգին, հեռու զինք սիրողներու գրկէն, հեռու իր ընկերներու դուրգուրանքէն, արհամարհանքի ծաղրն իր շրթունքին վրայ ուղղուած դէպի համիդական բռնակալութիւնը։

Մի պարզ հեռագիր խիստ անորոշ կերպով գուժեց այս մահը. ոչ ոք կարողացաւ յայտնել, թէ նա իր բարեկամն է. զինքը ծանչցողները վիշտը սրտում, արցունքը աչքերում լռել ստիպեցան. շատ ուշ բացուեցաւ վարագոյրը։

Այժմ, երբ կ'արձանագրենք այս եղերական մահը, սասսուռը կ'անցնի մեր երակներէն և յարգանքի, սիրոյ արտայայտութեամբ կը լեցնի մեր սրտերը դէպի իր յիշատակը։

Հանգչէ դու հոգի, մենք կը տանենք յեղափոխականի այն պարտքը զոր քո մահով կը յանձնես մեզ։

Կ. ՊՕԼՍԻ ԸՆԿԵՐՆԵՐ

ԱԶԴ

«Դրօշակի» բաժանորդներէն կը խնդրուի՝ մինչև այս տարւայ վերջը նորոգել իրենց հասցէները, ուղարկելով մեզի բաժնեգինը, եթէ չեն ուզեր որ թերթի առաքումը դադարեցուի։

„ԴՐՕՇԱԿԻ" ՌԱԺԱՆԹԻՆՆԵՐ Ի 3 ԽՐԱՆՆԵՐ։

Մեր հրատարակած Բաց-նամակները կուղարկուին միայն անոնց, որոնք առնուազն 5 ֆրանկի կանխիկ ապսպրանք կ'ընեն իւրաքանչիւրի համար առանձին։ Բաց-նամակներու 100-ը 5 ֆրանկ. մեծադիր պատկերներուն՝ 10-ը 5 ֆրանկ։

Մեր հրատարակած գրքերը սպառած ըլլալով առայժմ գրքերու համար մեզի չդիմել։

ՆԻՒԱՏԻՈՒԹԻՒՆ

Արեւմտեան Բիւրօն ստացած է՝

Հայրումեանից (Մարսէյլ) 100 ֆրանկ, ձլվլիկ 5, Արարատ թիւ 12՝ 20, Մուղալեան 20 ֆրանկ։

Նաւահանգստի Կեդր. կոմիտէն՝

(Շարունակ. նախորդից)

ԴԱՇՏԻ ԿՕՄԻՏԷՆ՝ 1905 թւին.—Սուրէն 150 ռուբլի, Հայկ 60, Արմենակ 90, Յակոբիկ 175, Սիւնեցի 100. Բաբկէն բժիշկ 90, Արարատ 25, Զարմայր 60, Մեհենայ 80, Մասիս 50, Ալիշար 12, Կիւրեղ 12, Թաց 100, Մարինայ 30, Մամիկ 40, Ծիածան 10, Լուսեղէն 25, Լոյս 25, Բել 12, Աբրահամ 10, Վանեցի 25, Արտաւազդ 50, Զիրապ 25, Սպարապետ 10, Եղբ. Գերմանացի տար. վն. 200, Պարթեւ խ. 18, Առիւծ 27, Բաջալեր 40, Աւակերտ 3, Յոյս 16, Աղեղ խ. 14. 50, Վրէժ 48, Ցորեկ 66, Ցառաջադէմ 1. 50, Հայկազեան 77. 50, Աղբիւրեան 108, Ման 89, Անդրանիկ 6. 50, Խենք (վինակախաղ) 25, Մարմ բաղամից Վտակ խ. 130. 40, եւս 18, եւս 51, Եղբայրմ Բագրատունիմ 40, Մարմ բաղ. Զ-ից եւ Լորիկից 40, Մարմ բաղ. Բէլից 12, Աղ բաղ. Ղեւոնդեան խ. 294. 60, Արշակունի 54, Արծիւ խ. 68, Արծրունի խ. 59, Վրէժ խ. 24, Հրայր խ. 10, Անդրանիկ խ. 7. 20, Մարինայից 20, Հայկազեան խ. 46. 50, Մամիկից 20, Ցորեկ խ. 13, Ալէքսիանոս 30, Արմենակ 20, Բաբկէն բժիշկ 30, Զարմայր 20, Ալիշան 4, Կիւրեղ 4, Արամ 3, Տրդատ 20, Ցառաջադէմ խ. 5, Վրէժ խ. 11, Լու Լէրնից Ցաբեթի ձեռքով 20, Զիցերիացի 25, Զիւրապ 25, Աղբիւրեան խ. 120, Արարատ 25, Բագրատունի եղբարմ 40, Արմենակ 20, Բաբկէն բժիշկ 30, Զարմայր 20, Տրդատ 20. Ալիշան 4, Կիւրեղ 4, Մարինայ 20, Մամիկ 20. Իգնատիոս 4, Ցերեկ խումբ 39, Առիւծ խ. 21, Զիրապ 50, Հրայր խ. 12, Անդրանիկ խումբ 8. 70, Ման խ. 141, Ման խ. Մրջիւն անդամից 9, Հայկ 60, 1906 թւին Արմենակ 20, Բաբկէն բժիշկ 30, Զարմայր 20, Տրդատ 20. Ալիշան 4, Կիւրեղ 4, Իգնատիոս 4, Սիւնեցի (1905 թ. 10 ամս.) 100, Բագրատունի 40, Հրացան 18. Սուրէն 150, Ցառաջադէմ խ. 9, Վրէժ խ. 23, Ցերեկ խ. 20. 50, Հայկազունեաց խ. 52, Աղեղ խ. 49, Գեղամից 1905 թ. տար. 120, Մամիկ 20, Աղ. բաղամի խմբերից 513. 20, Անդրանիկ խ. 6. 40, Աղեղ խ. 21, Յակոբիկ 125, Վրէժ խ. 38. 50. Մամիկ 20, Անդրանիկ խ. 6. 80, Արտաւազդ 70, Մեհենայ 40, Արմենակ 20, Բաբկէն բժիշկ 30, Զարմայր 20, Տրդատ 20, Կիւրեղ 4, Իգնատիոս 4, Յովսէփ 4, Ալիշան 4, Մամիկ 30, Հրայր խ. 47, Արմենակ 40, Բաբկէն բժիշկ 60, Զարմայր 40, Տրդատ 40, Ալիշան 8, Կիւրեղ 8, Իգնատիոս 8, Յովսէփ 8, Մեհենայ 40, Սիւնեցի 60, Սեբէր 20, Ցերեկ խ. 16. 50, Աղ բաղամի Ղեւոնդեան խ. 223. 50, Արծրունի խ. 51. 50, Արծիւ խ. 60, Արշակունեաց խ. 44. 50, Զիւրաբ 75, Պարթեւ խ. 60, Հայկ (տարեկն.) 120, Հրացան 18 ռուբլի։

1907 թ. յունուար—մայիս. Բաբկէն բժիշկ 45, Արմենակ 30, Տրդատ 30, Զարմայր 30. Իգնատիոս 6, Կիւրեղ 6, Յովսէփ 6, Հրայր խ. 20, Ման խ. 32, Պարթեւ խ. 28, Ցառաջադէմ խ. 7. 50, Հրայր խ. 30. Բաջալեր խ. 67, Սիրական 10, Մասիս 25, Դաշտի կարմիր խաչը, 1905 թւին՝ Առաջնորդ խ. 508, Հրաւէր 62, Աղ բաղամի խ. 93. 50, 1906 թ. Առաջնորդ խ. 367. 50, Հրաւէր 68, նուէր 31, Աղ. բաղամի խմբից 138. 46 ռուբլի։

ԾԱՂԿԱՁՈՐԻ ԵՆԹԱԿՈՄԻՏԷՆ 1904 հոկտ.—1905 փետր.—Հեճեւեալ խմբերից՝ Կայծակ 12. ռուբլի 75, Զնդան 4. 60, Հերոսական 20, Վասպուրական 26, Լոյս 4. 15, Յոյս 9. 30, Ծաղիկ 14. 60, Կայծ 2. 90, Բեռի 2. 50, Ծաղիկ 13. 50, Վասպուրական 3, Ծաղիկի երեկոյթից 25. 68, Յոյսի տօնածառից 104. 32, Զնդանի եւ Կայծակի երեկոյթից 55. 50, Կայծակի աւեսիսից 44. 50, եւս 23. 50, Զնդան 12, Կայծակ 36. 80, Զնդան 17. 95, Հերոսական 56, Վասպուրական 63, Աւրորա 11. 60, Յոյս 15, Ծաղիկ 5. 20, Անի 1. 95, Արշալոյս 5. 75, Կայծ 2, Կիլիկիա 4. 85, Հերոսական 15, Ծաղիկի երեկոյթից 21. 20, Վասպուրական 4. 20, Վասպուրական 4. 20, Վասպուրական էջմիածնի 17. 50, Յոյսի ներկայացումից 16. 52, Կայծի համերգ 3, Կայծակի վինակախաղից 20, եւս 12. 50, Վասպուրական 61, Հերոսական 45. 10, Զնդան 1904 դեկտ. 5. 70, Զնդան Վարգ. 5. 80, եւս երեկոյթ. եւ ամսավն. 40. 20, Կայծակ 12, II գին. 1. 35, III գին. 2. 60, եւս 2. 55, Ծաղիկ 20, Թորգոմ 13, Արարատ 10, Ճորոխ 50, Անահատից 2. 80, Դասերից մուտ 22, ուսանողից 5, Տօնածառից 147. 72, Զ. ստացած 320 լի եւ 1211 պարապ փամփուշտ Մ.-ից 10, եւս 10, Անդրանիկից 18, Ամպից 2, Կաշից 6, Զամաթալից 6, Դանակից 4, Մ.-ից մի ատրճանակ № 12 եւ 1 հատ նասարակ ատրճանակ, Հալածուածի նկարներից 26, Վարշավա 5, Օգուտից 7, Ծաղկից 5, Դասերից 40, Ճորոխից 10 ռուբլի։

(Շարունակելի)